

ԴՈՒՐԵՐՈՎԱԿԻ

89171
Պ-97





А.с.Пушкин

Дубровский



Государственное издательство - Арм. ССР

79 NOV 2007
Ц.С. ԴՈՒՐՈՎՍԿԻ

22 JUN 2007

891.71

Դ-97

ար

ԴՈՒՐՈՎՍԿԻ



ԴՈՒՐՈՎՍԿԻ ԶՆԱՆԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - ՄԵՄԻՄԻՆԻ

23 JUL 2013

73074



1708

38

Ա.ՌԱԶԻՆ ՀԱՏՈՐ

ԳԼՈՒԽ I

Սրանից մի քանի տարի առաջ իր կալվածներից մեկում ապրում եր ռուս հին աղնվական Կիրիլա Պետրովիչ Տրոյեկովը: Նրա հարստությունը, հռչակավոր տոհմը և կապերը նրան մեծ կշիռ էին տալիս այն նահանգներում, ուր գտնվում եր նրա կալվածքը: Հարևաններն ուրախությամբ բավարարում էին նրա ամենաչնչին քմահաճույքները. նահանգական աստիճանավորները դողում էին նրա անունը լսելիս. Կիրիլա Պետրովիչն ստորաքարշություն նշաններն ընդունում եր վորպես պատշաճ տուրք. նրա տունը միշտ լիքն եր հյուրերով, Վորոնք պատրաստ էին ուրախացնել նրա աղայական պարապությունը, մասնակցելով նրա աղմկալից, չերբեմն ել մոլի զվարճություններին: Վոչ վոք չեւ հանդգնում մերժել նրա հրավերները, կամ վորոշ որեւէ չներկայանալ Պոկրովսկոյե գյուղը՝ պատշաճ հարգանք մատուցելու: Ընտանեկան կենցաղում Կիրիլա Պետրովիչը ցույց եր տալիս անուս մարդու բոլոր արատները:

Յերես առած այն բոլորից, ինչով նա շրջապատված եր, նա սովորել եր ազատ ասպարեզ տալ իր կրակոտ բնավորության բոլոր մղումներին և բավական սահմանափակ խելքի բոլոր մտադրություններին: Չնայելով ֆիզիկական ունակությունների արտասովոր ուժին, նա շաբաթը յերկու անգամ տառապում եր շատակերությունից և ամեն յերեկո խմած եր լի-նում: Նրա տանը կից շենքերից մեկում ապրում էին 16 սպա-սուհիներ, վորոնք պարապում էին իրենց սեռին հատուկ ձեռագործով: Այդ շենքի լուսամուտները պատած էին փայտե

վանդակով. դռները փակված էյին կողպեքներով, վորոնց բանալիները գտնվում էյին Կիրիլա Պետրովիչի մոտ: Յերիտասարդ մենակեցուհիները վորոշյալ ժամերին իջնում էյին պարտեզ և ման էյին գալիս յերկու պառաֆների հսկողութեան տակ: Ժամանակ առ ժամանակ Կիրիլա Պետրովիչը նրանցից վոմանց մարդու վեր տալիս և նրանց փոխարեն ընդունվում էյին նորերը:

Գյուղացիները և սպասավորների հետ նա վարվում էր խիստ և քմահաճ. չնայած դրան սրանք նվիրված էյին նրան. սրանք պարծենում էյին իրենց տիրոջ հարստութեամբ ու փառքով և իրենց հերթին իրենց շատ բան էյին թույլ տալիս իրենց հարևանների նկատմամբ, հույս ունենալով ուժեղ պաշտպանութեան վրա:

Տրոյեկուրովի մշտական զբաղմունքն այն էր, վոր շրջագայում էր իր ընդարձակ կալվածներում, անձնատրվում յերկարատե խրախճանքների ու նման դեպքերում ամեն ուր հնարվող չարաձճիւթյունների, վորոնց դո՛հ էր լինում սովորաբար վորեւէ մի նոր ծանոթ, թեպետ հին բարեկամներն էլ միշտ չէյին խուսափում դրանից, բացառութեամբ միայն Անդրեյ Գավրիլովիչ Դուբրովսկու: Այս Դուբրովսկին, գվարդիայի պաշտոնաթող պորուչիկը, նրա ամենամոտ հարևանն էր և ուներ յոթանասուն ճորտ: Տրոյեկուրովը, վոր իրեն գոռոզ էր պահում ամենաբարձր կոչումն ունեցող մարդկանց հետ, հարգում էր Դուբրովսկուն, չնայելով վերջինիս համեստ կարողութեանը: Մի ժամանակ նրանք ծառայել էյին միասին, և Տրոյեկուրովը փորձից գիտեր, վոր նա բնավորութեամբ անհամբեր է և վճռական: Դեպքերը յերկար ժամանակով բաժանեցին նրանց: Դուբրովսկին, վորի հարստութունը քայքայվել էր, ստիպված լեղավ պաշտոնաթող լինել և բնակվել մնացած¹⁾ գյուղում: Կիրիլա Պետրովիչն իմանալով այդ, նրան առաջարկում էր իր հովանավորութունը, բայց Դուբրովսկին շնորհակալութեան հայտնեց և մնաց աղքատ ու անկախ: Մի քանի տարուց հետո պաշտոնաթող գեներալ—անշեֆ Տրոյեկուրովը ժամանեց իր կալվածքը, նրանք հանդիպեցին և ուրախացան դրա համար: Այդ ժամանակներից սկսած՝ նրանք ամեն ուր լինում էյին միասին, և Կիրիլա Պետրովիչը, վոր իր ամբողջ կյանքում վո՛չ վոքի չէր արժանացնում իր ացեկութեանը, առանց ացկալ-

լութեան հաճախում էր իր հին ընկերոջ տնակը: Լինելով հասակակիցներ, միևնույն դասի ծնունդ, միատեսակ դաստիարակված, նրանք մասամբ նմանվում էյին նաև բնավորութեամբ ու հակումներով: Նրանց յերկուսի բախտն էլ վորոշ չափով միատեսակ էր, յերկուսն էլ սիրելով էյին ամուսնացել, յերկուսն էլ շուտով յայրիացել էյին և յերկուսն էլ ունեյին մեկական դավակ: Դուբրովսկու վորդին ուսանում էր Պետերբուրգում, Կիրիլա Պետրովիչի աղջիկը ծնողների աչքի առաջ էր մեծանում և Տրոյեկուրովը հաճախ ասում էր Դուբրովսկուն. «Լսի՛ր, յեղբայր, Անդրեյ Գավրիլովիչ, յեթե քո Վալոդկան մարդ դառնա, Մաշայիս կտամ նրան, լի՛նչ արած, վոր նա աղքատ է»։ Անդրեյ Գավրիլովիչը գլուխն ուրորում էր ու սովորաբար պատասխանում.—«Վհ՛չ, Կիրիլա Պետրովիչ, իմ Վալոդկան Մաշիս Կիրիլովնայի փեսացուն չի կարող լինել: Ավելի լավ է, վոր նրա պես աղքատ ազնվականն ամուսնանա աղքատ ազնվականուհու հետ և տան մեծը լինի, քան թե դառնա յերես առած կնոջ գործակատարը»:

Բոլորը նախանձում էյին այն համերաշխութեանը, վոր թագավորում էր գոռոզ Տրոյեկուրովի և նրա աղքատ հարևանի միջև, և զարմանում էյին վերջինիս համարձակութեան վրա, յերբ նա Կիրիլա Պետրովիչի մոտ, սեղանի նստած, ուղղակի արտահայտում էր իր կարծիքը, առանց մտածելու այն մասին, թե այդ չէր հակասի արդյոք տանտիրոջ կարծիքին: Մի քանիսը փորձում էյին նմանվել նրան և դուրս գալ պատշաճ հնազանդութեան սահմաններից, բայց Կիրիլա Պետրովիչն այնպես վախեցրեց նրանց, վոր առմիշտ հրաժարվեցին նման փորձերից, և միայն Դուբրովսկին դուրս մնաց ընդհանուր որենքից: Սակայն անըստպասելի մի դեպք տալին ու վրա արավ ու փոխեց ամեն ինչ:

Մի անգամ, աշնան սկզբին, Կիրիլա Պետրովիչը պատրաստվեց վորսի գնալ: Նախընթաց որը հրաման տվեց շնպահներին¹⁾ և ասպանդակապահներին, վոր առավոտյան ժամը հնգին պատրաստ լինեն: Վրանն ու խոհանոցը վաղորոք ուղարկվեցին այնտեղ, ուր ճաշելու յեր Կիրիլա Պետրովիչը: Տանտերն ու հյուրերը գնացին շնանոցի բակը, վորտեղ առատ կերակրվում և տաքուկ տեղերում պահվում էյին հինգ հարյուրից ավելի քերծեններ ու բարակներ՝ իրենց շնական լեզվով փառաբանելով Կի-

1) Այսինքն իր ձեռքում մնացած չծախված դուրսեր:

1) Շնպահ—վորսի շներին հսկող:

րիւա Պետրովիչի առատաձեռնութիւնը: Այստեղ եր գտնվում նաև հիվանդ շներ բուժարանը և անկեղանոցը, վորտեղ շներն բուժում եր ավագ բժիշկ Տիմոշկան, և այն բաժանմունքը, ուր ազնվացեղ շները ցնկնում եյին և կերակրում իրենց լակոտներին: Կիրիլա Պետրովիչը հպարտանում եր այս սքանչելի հիմնարկով և չերբեք առիթը բաց չեր թողնում նրանով պարծենալու իր հյուրերի առջև, վորոնցից յուրաքանչյուրն առնելով իր քսան անգամ տեսած կլիներ այդ հիմնարկը: Կիրիլա Պետրովիչը, իր հյուրերով շրջապատված, Տիմոշկայի և գլխավոր շնապահների ուղեկցութեամբ շրջում եր շնանոցում, կանգ եր առնում մի քանի վորջի առաջ, մերթ հարցնելով հիվանդ շների դրութիւն մասին, մերթ շատ թե քիչ խիստ ու արդարացի նկատողութիւններ անելով, մերթ կանչելով ծանոթ շներին և փաղաքանքով խոսելով նրանց հետ: Հյուրերն իրենց պարտականութիւնն եյին համարում դմայլել Կիրիլա Պետրովիչի շնանոցով: Միայն Դուբրովսկին եր լուում և նոթերը կիտում: Նամուրեանդ վորսորդ եր: Նրա կարողութիւնը թույլ եր տալիս պահել միայն չերկու քործե և մի զուգ բարակներ: Այս փառահեղ հիմնարկը տեսնելիս նա չեր կարողանում գերծ մնալ վորոշ նախանձից:

— Ինչո՞ւ չես նոթերդ կիտել, յեղբայր,—հարցրեց նրան Կիրիլա Պետրովիչը,—թե՞ իմ շնանոցը քեզ դուր չի գալիս:

— Վնչ,—պատասխանեց նա խստասիրտ,—շնանոցը հրաշալի չե, հագով թե այստեղ ձեր մարդիկ ապրեն այնպես, ինչպես ձեր շները:

Շնապահն' ըրեց մեկը վորավորվեց:

— Աստծո և աղալի շնորհիւ,—ասաց նա,—մենք մեր կանաքից չենք գանգատվում. բայց ինչ վոր ճշտ ե, ճիշտ ե,—կա այն խի ազնվական, վորը վատ չեր անի, յեթե իր ազարակը փոխարիներ այստեղի մի վորեւե վորջով: Լավ կկշտանար ու տեղն ել տաք կլիներ:

Կիրիլա Պետրովիչը բարձր ծիծաղեց իր ճորտի այս հանդուգն նկատողութեան վրա, նրան հետեւելով՝ հյուրերն ել հրէնդացին, թեև զգում եյին, վոր շնապահի կատակը կարող ե իրենց ել վերաբերել: Դուբրովսկին գունատվեց ու վոչ մի խոսք չասաց:

Այդ ժամանակ Կիրիլա Պետրովիչին մատուցեցին մի կողով, վորի մեջ գտնվում եյին նորածին լակոտներ: Նա զրազվեց

նրա նով: Իր համար ընտրեց չերկուսին, հրամայեց մյուսներին ջուրը նետել ու խեղդել: Մինչ այս, Անդրեյ Գավրիլովիչն անհայտացավ և վոչ վոք այդ շնկատեց:

Հյուրերի հետ վերադառնալով շնանոցի բակից, Կիրիլա Պետրովիչը նստեց ընթրիքի և միայն այստեղ, չտեսնելով Դուբրովսկուն, զրազվեց նրանով: Սպասավորները պատասխանեցին, վոր Անդրեյ Գավրիլովիչը տուն ե վերադարձել: Տրոյեկուրովը հրամայեց իսկույն հասնել նրա յետեից ու անպայման յետ ընկել: Իր վողջ կյանքում նա վորսի չեր գնացել առանց Դուբրովսկու, վորը շան արժանիքները գնահատելու փորձ ու ճաշակ ուներ և անսխալ լուծում եր տալիս վորսորդական ամեն տեսակի վեճերին: Նրա հետեից գնացած ծառան վերադարձավ այն ժամանակ, յորը ընթրիքը շարունակվում եր, և իր տիրոջը զեկուցեց, վոր իբր թե Անդրեյ Գավրիլովիչը չի հնազանդել և չի ցանկացել վերադառնալ: Կիրիլա Պետրովիչը, վորի կատարը ըստ սովորութեան տաքացած՝ ը մրցեղենից պատրաստված ողուց, բարկացավ և նույն սպասավորին չերկրորդ անգամ ուղարկեց Անդրեյ Գավրիլովիչին ասելու, վոր չեթե նա իսկույն չգա Պոկրովսկոյե գիշերելու, ապա ինքը, Տրոյեկուրովը ընդմիշտ կխուլի նրանից: Սպասավորը նորից ձի նստեց ու գնաց: Կիրիլա Պետրովիչը սեղանից վեր կացավ, հյուրերին աղառեց և գնաց քնելու:

Հետեյալ ուրը նրա առաջին հարցը յեղավ՝ այստեղ ե Անդրեյ Գավրիլովիչը: Պատասխանի փոխարեն նրան տվին յեռանկյունաձև ծալած մի նամակ: Կիրիլա Պետրովիչն իր գրադրին հրամայեց բարձր կարգալ և լսեց հետեյալը.

«Ամենավորորմած իմ պարոն,

Յեա մտադիր չեմ գալու Պակրովսկոյե, մինչև վոր դուք ինձ մոտ չուղարկեք շնապահ Պարամոշկային՝ իր մեղքը խոստովանելու. կպատժեմ նրան, թե կներեմ, այդ իմ կամքն ե, իսկ յեա մտադիր չեմ տանել ձեր ստրուկների կատակները, ձեր կատակներն ել չեմ տանի, վորովհետեւ յեա խեղկատակ չեմ, այլ հին ազնվական: Մնամ ձեզ խոնարհարար ծառայութիւն մատուցող Անդրեյ Դուբրովսկի»:

Ետիկետի¹⁾ վերաբերյալ այժմյան հասկացողութիւններով այս նամակը խիստ անքաղաքավարի կհամարվեր, բայց այն

¹⁾ Ետիկետ—պալատական արխտոկրատ-ազնվական հասարակութեան մեջ ընդունված վարքի կարգ ու կանոնները:

Կիրիլա Պետրովիչին բարկացրեց վոչ թե իր տարորինակ վոճով ու ձևով, այլ միայն իր եյուլթյամբ:

— Ինչպէս,— հոխորտաց Տրոյեկուրովը, վոտաբորիկ վեր թռչելով անկողնից,— իմ մարդկանց ուղարկել նրա մոտ մեղքերը խոստովանելու, նա ուզենա, կպատժի նրանց, ուզենա՝ կենքի՛,— այդ ի՞նչ բան է հնարել, գիտե՞, թե իմ հետ է չափում: Յես նրան... Լավ, լավ, կտեսնենք, կտեսնենք ում մայրը լաց կլինի, նա կիմանա, թե ով է Տրոյեկուրովը:

Կիրիլա Պետրովիչը հագնվեց և սովորական շուքով գնաց վորսի: Բայց վորսն անհաջող եր: Ամբողջ ուրը տեսան միայն մի նապաստակ, այն էլ խաչժ (գրավիչ կեր) գնելու միջոցով: Դաշտում, վրանի տակ, ձաշը նույնպէս անհաջող եր, կամ, համենայն դեպս, դուր չեկավ Կիրիլա Պետրովիչին, վորը ծեծեց խոհարարին, նախատեց հյուրերին և վերադառնալիս ամբողջ խմբով դիտմամբ անցավ Դուբրովսկու դաշտերով:

Անցավ մի քանի ուր, և յերկու հարեանների թշնամությունը շարունակվում եր: Անդրեյ Գավրիլովիչը չեր վերադառնում Պոկրովսկոյ: Կիրիլա Պետրովիչն առանց նրան ձանձրանում եր և իր ցասումն արտահայտում ամենավիրավորական խոսքերով, վորոնք, այնտեղի ազնվականների փութաջանության շնորհիվ, ուղղված ու լրացրած հասնում էին Դուբրովսկուն: Մի հոր հանգամանք կործանեց հաշտության նաև վերջին հույսը:

Մի անգամ Դուբրովսկին շրջագայում եր իր փոքր կալվածքում: Մոտենալով կեչիների անտառին, նա լսեց կացնի հարվածներ և մի բոպե հետո— ընկնող ծառի ճգճոցը: Նա շտապեց դեպի անտառը և հասավ Պոկրովսկոյի գեղջուկներին, վորոնք հանգիստ կերպով գողանում էին նրա ծառերը: Տեսնելով նրան՝ գեղջուկներն ուզեցին փախչել: Դուբրովսկին իր կառապանի ոգնությամբ բռնեց յերկուսին և կապկպած բերեց իր տունը: Թշնամու յերեք ձիերը գերի ընկան հաղթողին: Դուբրովսկին խիստ բարկացած եր, մինչ այդ Տրոյեկուրովի մարդիկ— հայտնի ավազակներ— յերբեք չէին համարձակվում չարություն անել նրա կալվածքի սահմաններում, գիտենալով, վոր իրենց աղան ու Դուբրովսկին բարեկամական կապեր ունեն: Դուբրովսկին տեսավ, վոր հիմա նրանք ոգտվում են տեղի ունեցած գժտությունից և վորոշեց— հակառակ պատերազմի իրավունքի վերաբերյալ բոլոր հասկացողությունների, իր գերիններին դաս տալ այն ճյուղերով, վոր նրանք հավաքել էին իր անտառում,

իսկ ձիերն աշխատեցնել՝ ավելացնելով աղաչի անասուններին թվին:

Այս դեպքերի լուրը նույն ուրը հասավ Կիրիլա Պետրովիչին: Նա կատաղեց— փրփրեց և բարկության առաջին բոպեյին ուղղւմ եր իր բոլոր սպասավորներով: 1) հարձակում գործել Կիստենեկայի (այդպէս եր կոչվում նրա հարեանի գյուղը) վրա, քարուքանդ անել, կալվածատիրոջն էլ հենց իր կալվածքում պաշարել: Նման սխրագործությունները Կիրիլա Պետրովիչի համար արտասովոր չէին, սակայն շուտով նրա մտքերն այլ ուղղություն ստացան:

Դահլիճում ծանր քայլերով յետ ու առաջ անելով՝ նա պատահմամբ նայեց լուսամուտին և տեսավ, թե ինչպէս դարպասի մոտ կանգնեց յեռաձի մի կառք: Կաշվե գլխարկով և բայկայից կարած վերարկով մի մարդ իջավ կառքից և գնաց դեպի տան կողքի շենքը, գործակատարի մոտ: Տրոյեկուրովը ճանաչեց ատենակալ Շաբաշկինին և հրամայեց կանչել նրան: Մի բոպեյից հետո Շաբաշկինն արդեն կանգնած եր Կիրիլա Պետրովիչի առաջ, մի քանի անգամ գլուխ տալով և յերկնադածությամբ սպասելով նրա հրամաններին:

— Բարե՛, հա՛, ը՛մմ, անունդ ի՞նչ է,— ասաց Տրոյեկուրովը,— ինչո՞ւ յես յեկել:

— Յես գնում ելի քաղաք, ձերդ գերազանցություն,— պատասխանեց Շաբաշկինը,— և յեկա Իվան Դեմյանովի մոտ իմանալու, արդո՞ք վորեւ հրաման չի՞ լինի ձերդ գերազանցությունից:

— Լավ ժամանակին ես յեկել, ը՛մ, անունդ ի՞նչ է, դու ինձ հարկավոր ես, ողի խմիր ու լսիր:

Այս սիրալիր ընդունելությունը հաճելի դարմանք պատճառեց ատենակալին: Ողուց նա հրաժարվեց: Սկսեց ամբողջ ուշադրությամբ լսել Կիրիլա Պետրովիչին:

— Յես մի հարեան ունեմ,— ասաց Տրոյեկուրովը,— մանր կալվածատեր ե, բռի մի մարդ, յես ուղղւմ եմ վերցնել նրա կալվածքը. այդ մասին դու ի՞նչ կարծիք ունես:

1) Սպասավորները կալվածատերերի այն ճորտերն էին, վորոնք նրա հրամանով կտրվելով հողից, սպասարկում էին նրա տունը: Մի քանի կալվածքներում նրանց թիվը հարյուրների յեր հասնում: Նրանց պահելը մի ծանր լուծ էր մյուս ճորտ գյուղացիների ուսին, վորոնք ամեն մի սպասավորի համար պարտավոր էին հարկ վճարել:

— Ձերդ գերազանցություն, յեթե վորեւե փաստաթուղթ կա, կամ. .

— Ի՞նչ ես դուրս տալիս, բանեկամ. փաստաթուղթս վրձն ե: Դրա համար հրովարտակներ¹⁾ կան: Հենց ուժն ել այն ե, վոր առանց վորեւե իրավունքի խենք կալվածքը: Բայց սպասիր: Այդ կալվածքը մի ժամանակ մեզ ե պատկանել, գնվել ե ինչ վոր Սպիցինից ե հետո վաճառվել Դուբրովսկու հորը: Ձե՞ կարելի սրանից մի բան դուրս բերել:

— Դժվար ե, ձերդ գերազանցություն, յերեւի վաճառքը տեղի յե ունեցել որինական կարգով:

— Լավ մտածիր, բարեկամ, գտիր հնարը:

— Յեթե, որինակի համար, ձերդ գերազանցությունը կարողանար ձեր հարկանից մի կերպ ձեռք բերել այն թուղթը, վորով նա տիրում ե իր կալվածքին, ապա իհարկե...

— Հասկանում եմ. բայց դժբախտաբար նրա բոլոր թղթերն աչրվել են հրդեհի ժամանակ:

— Ինչպէս, ձերդ գերազանցություն, նրա թղթերն աչրվել են. եհ, դրանից ել լավ բան, վոր այդպես ե, հաճեցեք վարվել որենքով. անկասկած կատարելապես բավարարություն կստանաք:

— Դու կարծում ես. եհ, տես, յես հույս եմ դնում քո ջանադրության վրա, կարող ես հավատացած լինել, վոր կարժանանաս իմ շնորհակալության:

Շաբաշկինը գլուխը խոնարհեց համարյա մինչե գետին, դուրս յեկավ ե հենց նույն որվանից սկսեց զբաղվել այդ գործով ե, նրա ճարակության շնորհիվ, ուղիղ յերկու շաբաթ հետո Դուբրովսկին քաղաքից ստացավ մի գրություն, վորով պահանջվում եր անհապաղ բացատրություն ներկայացնել, թե ի՞նչ հիմունքով ե տիրում Կիստենեկային:

Անդրեյ Գավրիլովիչը, անսպասելի հարցումից ապշած, նույն որն ուղարկեց բավական կոպիտ մի պատասխան, վորով հայտնեց, թե Կիստենեկա գյուղը նրան մնացել ե հանգուցյալ ծնողի մահից հետո, վոր այդ գյուղին նա տիրում ե ժառանգականության իրավունքով, վոր Տրոյեկուրովը նրա հետ վոչ մի գործ չունի ե վոր նրա այս սեփականության նկատմամբ ամեն մի կողմնակի պահանջ ամբաստանություն ե ու սրիկայություն:

¹⁾ Հրովարտակ—թաղավորի կողմից կամ նրա անունից տրված գրավոր հրաման, կարգադրություն:

Այս նամակը խիստ հաճելի տպավորություն թողեց ատենակալ Շաբաշկինի վրա,—նա համոզվեց, վոր նախ՝ Դուբրովսկին գործերից շատ քիչ բան գիտե ե յերկրորդ՝ դժվար չի լինի այդպիսի տաքարյուն ու անշրջահայաց մարդուն ամենաանպատաղության մեջ դնել:

Անդրեյ Գավրիլովիչը, սառնասիրտ կերպով քննելով ատենակալի հարցումները՝ տեսավ, վոր անհրաժեշտ ե ավելի մանրամասն պատասխանել. նա գրեց բավական գործնական մի թուղթ, վորը սակայն հետագայում ա՛ր բավարար համարվեց:

Գործն սկսեց ձգձգվել. Հավատացած լինելով, վոր ինքն իրավացի յե, Անդրեյ Գավրիլովիչը շատ չեւ անհանգստանում, վոչ ցանկություն, վոչ ել հնարավորություն ունեւ փող շարտել իր շուրջը, ու թեւե պատահում եր, վոր նա միշտ առաջինն եր թանաքային ցեղի¹⁾ վաճառվող խիղճը ծաղրում, բայց նրա մտքով ել չեւ անցնում, վոր կարող ե անբաստանության գոհ լինել: Իր հերթին Տրոյեկուրովը նույնպես քիչ եր հոգում իր հնարած գործից շահելու մասին—Շաբաշկինը գործում եր նրա փոխաբեն ու նրա անունից, սպառնալով ու կաշառելով դատավորներին ե ծուռ ու մուռ մեկնաբանելով ալկալի հրովարտակները: Մինչ այս, մինչ այն, 18... թվականի փետրվարի 9-ին Դուբրովսկին քաղաքի վոստրիկանության միջոցով հրավեր ստացավ ներկայանալու զեմստովոյի դատարանը²⁾ լսելու նրա վորոշումը—իր՝ պորուչիկ Դուբրովսկու ե գեներալ Տրոյեկուրովի գործի վերաբերմամբ վիճելի կալվածքի մասին, ե ստորագրելու իր բավարարված կամ չբավարարված լինելը: Նույն որը Դուբրովսկին մեկնեց քաղաք. ճանապարհին նրան հասավ Տրոյեկուրովը: Նրանք հպարտ նայեցին մեկ մեկու, ե Դուբրովսկին չալախինդ ժպիտ նկատեց իր հակառակորդի գեմքին:

Գ Լ Ո Ի Ե II

Քաղաք հասնելով, Անդրեյ Գավրիլովիչն իջևանեց ծանոթ վաճառականի մոտ, գիշերեց ե հետևյալ որն առավոտյան ներ-

¹⁾ Թանաքային ցեղ—այսինքն չինոզիներ, աստիճանավորներ:

²⁾ Չեմսովոյի դատարան—Ռուսաստանում բարենորոգումներից, այսինքն 60-ական թվականներից, առաջ վոստրիկանական, հետաքննական ու դատական գավառային մարմին. հիմնվել եր 1775 թվականին: Նա կազմված եր գավառական ազնվականությունից ընտրված զեմստովոյի վոստրիկանապետից կամ Կապիտան Կոստիկանապետից ե զեմստովոյի ատենակալներից:

կայացաւ զգաւառական դատարանի ատյանը: Վոչ վոք նրա վրա ուշադրութիւն չդարձրեց: Նրանից հետո յեկավ Կիրիլա Պետրովիչը: զբաղւիւրները վոտի կանգնեցին և փետրագրիչները զրին ականջներին յետեւ: դատարանի անդամները նրան զիմաւորեցին խորը ստորարքաշութեան արտահայտութիւններով, բազկաթոռ առաջարկեցին, խոնարհիւելով նրա աստիճանի, տարիքի և գերմարմնի առաջ: Նա նստեց, Դատական նիստը դռնբաց եր: Անդրեյ Գալիլեյովիչը վոտի վրա կանգնած, հենվել եր պատին: Տիրեց խորին լուռութիւն, և քարտուղարը հնչուն ձայնով սկսեց կարգաւ դատարանի վորոշումը:

Մենք ամբողջովին բերում ենք այդ վորոշումը, կարծելով, վոր ամեն մեկի համար հաճելի կլինի տեսնել այն ձեւերից մեկը, վորով Ռուսաստանում մենք կարող ենք զրկվել կալվածքից, թեկուզ և այն տիրելու անվիճելի իրավունք ունենանք:

«18... թվականի փետրվարի 10-ն Կ**—ի գաւառական դատարանը քննեց գլխաւորայի պորուչիկ Անդրեյ Գալիլեյի վորդի Դուբրովսկու գործը, վորը անհիմն տիրում ե գեներալ անշեֆ¹⁾ Կիրիլա Պետրի վորդի, Տրոյեկուրովին պատկանող ** նահանգի Կիստենեկա գյուղը, վորտեղ կա արական սեռի ** հոգի և ** դեսյատին հոգ ու մարգագետին: Սույն գործից չերևում ե, վոր վերոհիշյալ գեներալ—անշեֆ Տրոյեկուրովին անցյալ 18... թվականի հունիսի 9-ին սույն դատարանին խնդիր ներկայացրեց առ այն, վոր նրա հանգուցյալ հայրը՝ կոնստիտուցիոն²⁾ և կալվաւր Պետր Յեֆիմի վորդի Տրոյեկուրովը 17... թվականի ոգոստոսի 14-ին,—այն ժամանակ ծառայելով վորպես ** փոխարքայի³⁾ վարչութեան գաւառային քարտուղար՝ զբաւենյալ կային ծառայող ** աղնվական Ֆադեյ Յեգորի վորդի Սպիցինից գնեց սույն կալվածքը, վորը գտնվում եր ** շրջանում, վերո-

1) Գեներալ—անշեֆ—գեներալի լրիւ աստիճանը:

2) Կոնստիտուցիոն—ցարական Ռուսաստանի պետական ծառայողների աստիճաններից մեկը:

3) Փոխարքայ—այն ժամանակ պետական խոշոր աստիճանավոր՝ հսկայական լիազորութիւններով: Նա կառավարում եր Ռուսաստանի վորեւ ծայրամասը (Կովկաս, Հեռավոր արեւելք և այլն), վորտեղ նա անսահմանափակ իշխանութիւն ունեւ: Փոխարքային յենթարկւում ելին բոլոր կառավարական հիմնարկները, զինվորական ու քաղաքական իշխանութիւններն ու գործերը: Փոքր ժողովուրդներին նկատմամբ փոխարքայութիւնը ցարական կառավարութեան գաղութային կամայականութեան ձեւերից մեկն եր:

հիշյալ Կիստենեկա գյուղում, վորպիսի գյուղն այն ժամանակ ըստ ռեզիդիայի¹⁾ կոչվում եր Կիստենեկան նորագյուղ, վորտեղ ըստ 4-րդ ռեզիդիայի կար ** հոգի, նրանց ամբողջ գյուղացիական ունեցւածքով, ազարակով, վարելու և այլ հողերով, անտառներով, խոտհարքներով, Կիստենեկա կոչւած գետակի ձրկներով և հիշյալ կալվածքին պատկանող բոլոր հողամասերով ու կալվածատիրոջ փայտե տնով, մի խոսքով՝ ամեն ինչ, վոր նրան ժառանգաբար մնաց իր հոր, աղնվական, ուրյադնիկ Յեգոր Տերենտիյի վորդի Սպիցինից նրա տիրապետութեան տակ եք գտնվում, մինչև ամենավերջին մարդը և հոգի ամենավերջին քառորդը²⁾, վորը գնահատվեց 2500 ուրլի և նույն ուրը ** գաս ու դատաստանի պալատում կայքագիր³⁾ կազմվեց, և նրա հայրը նույն ժամանակ, ոգոստոսի 26-ին Կ** գեմստովյի դատարանի կողմից հաստատվեց կալվածքի տեր և արձանագրվեց այդ: Վերջապես, 17... թվականի սեպտեմբերի 6-ին նրա հայրը, կամոքն աստծո, մեռավ, մինչդեռ նա, խնդրատու գեներալ—անշեֆ Տրոյեկուրովը 17... թվականից, համարյա մահկութիւնից գտնվում եր զինվորական ծառայութեան մեջ և մեծ մասամբ մասնակցում եր արտասահմանյան արշավանքներին, ուստի և չեր կարող տեղեկութիւններ ունենալ թե իր հոր մահվան և թե նրանից հետո մնացած կալվածքի մասին, իսկ այժմ, բոլորովին հեռացած լինելով վերոհիշյալ ծառայութիւնից և վերադառնալով իր հոր կալվածքները, վորոնք գտնվում են ** և ** նահանգներում, Կ** Պ** Ռ** գաւառներում, զանազան գյուղերում, ընդամենը 3000 հոգի,—նա գտնում ե, վոր այդ կալվածքների թվում վերոհիշյալ Կ** կալվածքին, ուր կա ** հոգի (վորոնց թիւն ըստ այժմյան... ռեզիդիայի նույն գյուղում նշված ե ** հոգի), և նրա բոլոր հողերին առանց վորեւ հիմքի տիրում ե վերոհիշյալ գլխաւորայի պորուչիկ Անդրեյ Դուբրովսկին, այս պատճառով վերոհիշյալ խնդրի հետ ներկայացնելով այն իսկական կայքագիրը, վորը նրա հորը տրված ե վաճառող Սպիցինի կողմից, խնդրում ե յետ վերցնել կալվածքն ապրիլին տեր Դուբրովսկուց և տալ

1) Ռեզիդիա—XVIII դարում և XIX դարի առաջին կիսում գյուղական ու քաղաքային բնակչութեան մարդահամար, վորի նպատակն եր պարզել շրջահարկի յենթակա բնակչութեան քանակը:

2) Քառորդ—հոգի հին չափ, դեսյատինի քառորդ մասը,—0,72 հեկտար:

3) Կայքագիր—մինչհեղափոխական Ռուսաստանում մի վաստաթուղթ, վոր պահանջվում եր անշարժ կայքը գնելու—վաճառելու համար:

ըստ պատկանելիության Տրոյեկուրովի լիակատար տրամադրություն տակ դնելով այն: Իսկ սույն կալվածքի անարդարացի տիրապետության համար, վորից ստացված յեկամուտներից ոգտվել է նա, այդ մասին պատշաճավոր քննություն կատարելուց հետո, նրանից՝ Դուբրովսկուց գանձել որենքով հասանելիք տույժն և դրանով բավարարել Տրոյեկուրովին:

****** զեմսովոյի դատարանի՝ սույն խնդրի վերաբերյալ քննությունից պարզվեց, վոր վերոհիշյալ վիճելի կալվածքի, այժմյան տեր, գվարդիայի պորուչիկ Դուբրովսկին տեղում աղնրվական ատենակալին բացատրություն է տվել, վոր ներկայումս նրա տիրած կալվածքը, վոր գտնվում է մատնանշված Կիստենևկա գյուղում, ****** հոգով, հողերով և իր բոլոր մասերով իրեն ժառանգություն է մնացել իր հոր,—հրետանու պողպորուչիկ Գավրիլ Յեվգրաֆի վորդի Դուբրովսկու մահից հետո, իսկ նրան հասել է սույն խնդրատուի հորից, նախկին գավառային քարտուղար, հետո կոլեժսկի ասեսոր Տրոյեկուրովից գնելուց ըստ 17... թվականի ոգոստոսի 30-ին նրա տված հավատարմագրի, վորը վավերացված է ****** գավառական դատարանում և տրված է տիտուլյար խորհրդական¹⁾ Գրիգորի Վասիլի վորդի Սոբոլևին, վորից նրա հայրը կայքագիր է ստացել, քանի վոր հավատարմագրում ասված է, թե նա, Տրոյեկուրովը, գրասենյակային չինովնիկ Սպիցինից գնած և իրեն հասած կալվածքը ****** հոգով և հողերով ծախել է իր, Դուբրովսկու հորը, և պայմանագրով հասանելիք փողը, 3200 ռուբլի, լրիվ և անվերադարձ ստացել է նրա հորից և խնդրել վերագրյալ Սոբոլևին նրա հորը որինական կայքագիր տալ: Մինչդեռ նրա հայրը՝ սույն հավատարմագրով, ամբողջ գումարը վճարելու պատճառով, սույն գնովի կալվածքին տիրել և տնորինել է հետագայում, մինչև հիշյալ կայքագրի կազմելը, ինչպես իսկական տեր, և վաճառող Տրոյեկուրովը կամ այլ վորդ հետագայում չեյին կարող խառնվել սույն կալվածքի գործերին:

Սակայն այդպիսի կայքագիրը հավատարմատար Սոբոլևի կողմից յեբբ և վժր ատյանում է տրված նրա հորը,—նրան, Անդրեյ Դուբրովսկուն հայտնի չե, վորովհետև այն ժամանակ նա կատարելապես մանուկ էր և իր հոր մահից հետո հիշյալ

1) Տիտուլյար խորհրդական—ցածր աստիճաններից մեկը, վորոնք տրվում էյին ցարական Ռուսաստանի պետական չինովնիկներին:

կայքագիրը չկարողացավ գտնել, այլ յինթաղրում է, թե այն կարող է այրված լինել 17... թվականին նրանց տանը պատահած հրդեհի ժամանակ, վորի մասին հայտնի չե յեղել այդ գյուղի բնակիչներին: Իսկ, վոր նրանք, Դուբրովսկիներն անվիճելի կերպով տիրել են սույն կալվածքին, սկսած Տրոյեկուրովի վաճառելուց և կամ Սոբոլևին հավատարմագիր տալուց, այսինքն 17... թվականից, իսկ հոր մահից հետո՝ 17... թվականից մինչև հիմա, աչդ կարող են վկայել այնտեղի բնակիչները, վորոնք, ընդամենը 52 մարդ, հարցաքննության ժամանակ յերգվելով հաստատեցին, վոր իսկապես, վերագրյալ վիճելի կալվածքին սկսել են տիրանալ հիշյալ պարոնայք Դուբրովսկիները դեռ 70 տարի առաջ, առանց վորեւ մեկի կողմից վեճ հարուցվելու, բայց թե ի՞նչ արձանագրություն կամ կայքագրի հիման վրա եյին տիրում,—նրանց հայտնի չե: Իսկ սույն գործում հիշված, նախկին գավառական քարտուղար Պյոտր Տրոյեկուրովը տեր է յեղել կալվածքին թե վոչ, նրանք չեն հիշում: Պարոնայք Դուբրովսկիների տունը սրանից 30 տարի առաջ, գիշերը նրանց կալվածքում պատահած հրդեհից այրվել է, ընդվորում կողմնակի մարդիկ հաստատեցին, թե վերոհիշյալ վիճելի կալվածքն այն ժամանակից սկսած, տարեկան կարող էր տալ վոչ պակաս քան 2000 ռուբլի:

Սրան հակառակ, գեներալ-անշեֆ Կիրիլ Պյոտրի վորդի Տրոյեկուրովը, սույն թվականի հունվարի 3-ին ներկա դատարանին խնդրագիր ներկայացրեց, վոր թեև վերոհիշյալ գվարդիայի պորուչիկ Անդրեյ Դուբրովսկին ներկա գործի քննության ժամանակ ներկայացրել էր իր հանգուցյալ հոր կողմից տիտուլյար խորհրդական Սոբոլևին տրված հավատարմագիր՝ իրեն ծախված կալվածքի վերաբերյալ, սակայն վոչ միայն իսկական կայքագիր լինելու, այլև այդպիսին չերեւե կնքվելու մասին վոչ մի պարզ ապացույց չի ներկայացրել ըստ գլխավոր ռեգլամենտի 19-րդ գլխի և ըստ 1752 թվականի նոյեմբերի 29-ի հրովարտակի: Հետևապես՝ ներկայումս հավատարմագիրը, դրա տվողի—նրա հոր մահվան պատճառով և ըստ 1818 թվականի մայիսի ...ի հրովարտակի, բոլորովին կորցնում է ուժը: Բացի դրանից—

հրամայված է վիճելի կալվածքները տալ նրանց, ովքեր համապատասխան փաստաթուղթ ունեն, իսկ այն կալվածքները, վորոնց համար այդպիսի փաստաթուղթ չկա, հանձնել տերերին՝ նրանց գտնելուց հետո:

Հիշյալ կալվածքը, վորը պատկանել է նրա հորը, նրա կող-

մից ներկայացրած ակտի և վերոհիշյալ որոշումների հիման վրա պետք է առնվի ապուրինի տեր Դուբրովսկուց և ժառանգականության իրավունքով տրվի իրեն։ Յեւ ջանի վոր վերը հիշված կալվածատերերը առանց փաստաթղթի ոգտվել են իրենց չպատկանող կալվածքից և նրա յեկամուտներից, ուստի հաշվել, թե ինչքան պիտի զանձել կալվածատեր գուբրովսկուց և բավարարել նրան, Տրոյեկուրովին, վորպիսի գործը քննելուց և նրանից ու որոշումներից քաղվածքներ կատարելուց հետո ** զավառական դատարանը վորոշում է.

Ինչպես յերևում է սույն գործից, գններալ անշեֆ Կիրիլա Պյոտրի վորդի Տրոյեկուրովը, հիշյալ վիճելի կալվածքի համար, վորը ներկայումս գտնվում է գվարդիայի պորուչիկ Անդրեյ Գավրիլի վորդի, Դուբրովսկու տիրապետության տակ, Կիստենեկա գյուղում, ներկա ... ունի իրիայով ունի արական սեռի ** հոգի, զանազան հողամասեր—խսկական կայքագիր ներկայացրեց առ այն, վոր հիշյալ կալվածքը 17... թվականին գրասենյակային ծառայող, ազնվական Ֆադդեյ Սպիցինը վաճառել է նրա հանգուցյալ հորը—գավառային քարտուղար, հետագայում՝ կոլեժսկի ասեսոր։ Բացի դրանից, ինչպես յերևում է նույն կայքագրի մակագրությունից, սույն գնորդը նույն թվականին ** զեմստվոյի դատարանի կողմից հաստատվել է իբրև ալդ կալվածքի տեր, ու թեև սույնի դեմ գվարդիայի պորուչիկ Անդրեյ Դուբրովսկին ներկայացրել է հավատարմագիր, վորը հանգուցյալ գնորդ Տրոյեկուրովը տվել է տիտուլյար խորհրդական Սորոկին, նրա, Դուբրովսկու հոր անունով գնումը կատարելու, սակայն ալդպիսի գործարքներով վոչ միայն կալվածատիրական անշարժ կալվածքը հաստատել, այլև ժամանակավորապես տիրել ըստ... հրովարտակի արգելված է, բացի այդ, հավատարմագիրն ել ստորագրողի մահվան պատճառով բոլորովին կորցրել է իր ուժը։ Մյուս կողմից՝ Դուբրովսկին սույն գործի սկզբից, այսինքն 18... թվականից մինչև հիմա վոչ մի պարզ ապացույց չի ներկայացրել այն մասին, թե հիշյալ հավատարմագրով վորևե կայքագիր կնքված լինի վերոհիշյալ վիճելի կալվածքի մասին։ Այս պատճառով ներկա դատարանը վորոշում է.—վերոհիշյալ կալվածքը, վոր ունի ** հոգի, իր զանազան հոգերով և իր այժմյան վիճակով հաստատել գններալ Տրոյեկուրովի վրա, ըստ նրա ներկայացրած կայքագրի. ** զեմստվոյին կարգադրություն անել գվարդիայի պորուչիկ Դուբրովսկուն ալդ կալվածքից հեռացնելու և

այն ժառանգականության կարգով Տրոյեկուրովին հանձնելու մասին։ Թեև գններալ-անշեֆ Տրոյեկուրովը խնդրում է սույժ զանձել գվարդիայի պորուչիկ Դուբրովսկուց՝ իր կալվածքի յեկամուտներից ոգտվելու համար, բայց քանի վոր այդ կալվածքը, ըստ այնտեղի հին բնակիչների վկայության, մի քանի տարի անվիճելիորեն յեղել է պարոնալք Դուբրովսկիների տիրապետության տակ և սույն գործից չի յերևում, վոր պ. Տրոյեկուրովը յերևե խնդիր հարուցած լինի Դուբրովսկու ապուրինի տիրապետության մասին և, բացի դրանից, որենքով

հրամայված է, վոր յեթե վորևե մեկը ցանում է ուրիշի հողը կամ զավթում ուրիշի ագարակը, և նրա դեմ ապուրինի տիրելու առթիվ բողոքում են և այդ հաստատվում է ապա իրավացի կողմին տալ հողն ալդ ցանքերով շենքերով և այլ գույքով, ուստի գվարդիայի պորուչիկ Դուբրովսկու դեմ գններալ անշեֆ Տրոյեկուրովի հարուցած հայցը մերժել, վորովհետև նրան պատկանած կալվածքը վերագարձվում է նրան, առանց այդ կալվածքից վորևե բան վերցնելու և այնտեղ յեղած գույքը ամբողջությամբ հանձնել գններալ-անշեֆ Տրոյեկուրովին, նրան իրավունք վերապահելով առանձնապես հայց ներկայացնել ուր հարկն է, յեթե իր այդ պահանջը հիմնավորի պարզ և որինական հիմունքով, վերադատության¹⁾ կարգով հայտարարել թե հայցվորին և թե մեղադրվողին, վորոնց վոստիկանության միջոցով հրավիրել սույն դատարանը, սույն վորոշումը լսելու և ստորագրությամբ իրենց գոհությունը կամ զգոհությունը հաստատելու։

Վորպիսի վորոշումն ստորագրեցին դատարանում բոլոր ներկա գտնվողները.—

Քարտուղարը լուեց, ատենակալը վեր կացավ և գլուխը խոնարհելով դիմեց Տրոյեկուրովին, հրավիրելով ստորագրել առաջարկած թուղթը, և հաղթանակը տարած Տրոյեկուրովը, զրիչը վերցնելով նրանից, կատարյալ բավականությամբ ստորագրեց դատարանի վորոշումը։

Հերթը հասավ Դուբրովսկուն։ Քարտուղարը թուղթը մատուցեց նրան։ Բայց Դուբրովսկին կանգնած եր անշարժ ու գլխակոր։

1) Վերադատություն—ստորագաս գատական մարմինների վորոշումների վերաբերյալ բողոք վերագաս մարմիններին։

Գարտուղարը կրկնեց իր դիմումը,—ստորագրելով հաստատել իր կատարյալ գոհությունը կամ դժգոհությունը, յետեւ նա կարծում է, վոր արդար է իր գործը և մտադիր է որեւէ ժողոված ժամանակում ուր հարկն է վերադատության դիմում տալ:

Դուբրովսկին լուում էր... Հանկարծ նա գլուխը բարձրացրեց, աչքերը կայծկլտեցին, նա վտար խիստ հատակին, քարտուղարին հրեց այնպես ուժեղ, վոր նա վայր ընկավ, ապա վերցնելով թանաքամանը, շարտեց ատենակալի վրա: Բոլորը սարսափեցին: «Ինչպէս, չհարկեմ աստծո տաճարը. կորի՛ր, գյաղայի ցեղ»:

Դուբրովսկին դիմեց Կիրիլա Պետրովիչին «Լսված բան է ձեր գերազանցություն, — շարունակեց նա, — շնապահները շներին տանում են աստծո տաճարը, շները վաղվում են տաճարում: Յես ձեզ ցույց կտամ...» Աղմուկից ներս վազեցին պահակները և հաղիվ հաղ զսպեցին Դուբրովսկուն: Վերջինիս գուրս տարան ու նստեցրին սահնակ: Տրոյեկուրովը դուրս լեկավ նրա յետեւից ամբողջ դատարանի ուղեկցությամբ: Դուբրովսկու հանկարծակի խելագարութունը սաստիկ ազդեց նրա յերակայության վրա և թունավորեց նրա հաղթանակը: Դատավորները, վորոնք հույս ունեցին, թե նա շնորհակալ կլինի, չարժանացան նրա և վոչ մի քաղցր խոսքին: Նույն ուրը նա մեկնեց Պոկրովսկոյէ: Մինչ այս, մինչ այն Դուբրովսկին պառկած էր անկողնում: Գովառական բժիշկը, վորը բարեբախտաբար բոլորովին տգետ չէր, տղրուկներ¹⁾ ու խարաճճներ²⁾ դնելով կարողացավ արյուն առնել նրանից: Յերեկոյան թեթեւացավ հիվանդի զրուցութունը, նա ուշքի յեկավ: Հետեւալ ուրը Դուբրովսկուն տարան Կիստենեկա, վորն արդեն համարյա չէր պատկանում նրան:

ԳԼՈՒԽ III

Անցավ վորոշ ժամանակ, բայց խեղճ Դուբրովսկու առողջությունը դեռ վատ էր: Զիշտ է՝ խելագարության նշանները

1) Տղրուկ—հիճուների մի տեսակը: Այսպես կոչված՝ բուժական տղրուկներն ոգտագործվում են որդանիզմից փոքր քանակությամբ արյուն առնելու համար: Յուրաքանչյուր տղրուկ կարող է ծծել 18 սմ արյուն: Տղրուկներն ոգտագործվում են ուղեղի արյունակալման և այլ հիվանդությունների դեմ:

2) Խարաճճի—փոքրիկ բզեզ: Ձորացրած խարաճճից պատրաստվում է սղեղանի, վորը գործ է ածվում հիվանդություններ բուժելու ժամանակ:

չէին վերսկսվում, սակայն նրա ուժերը նկատելի կերպով նվազում էին: Նա մոռացության էր տվել իր նախկին զբաղմունքները, քիչ էր դուրս գալիս սենյակից և ամբողջ ուրբով մտածում էր ու մտածում: Յեզորովսկան,—մի բարի պառավ, վորը մի ժամանակ խնամում էր նրա վորդուն, հիմա նրա համար էլ դայակ դարձավ: Պառավը խնամում էր նրան ինչպես յերեխայի, հիշեցնում էր ռտելու և քնելու ժամանակը, կիրակրում, պառկեցնում էր քնելու: Անդրեյ Գավրիլովիչն անխոս հնազանդում էր և նրանից բացի հարաբերութուն չուներ վոչ վոքի հետ: Դուբրովսկին ի վիճակի չէր իր գործերի մասին մտածելու, տնտեսական կարգադրություններ անելու, ու Յեզորովսկան համոզվեց, վոր անհրաժեշտ է այդ բոլորը հայտնել յերիտասարդ Դուբրովսկուն, վորը ծառայում էր այն ժամանակ Պետրուրզում գլխավոր գվարդիական հետակ զորքերից մեկում: Այսպես, ծախսերի մատյանից պոկելով մի թերթ, Յեզորովսկան խոհարար Խաբրտոնին—Կիստենեկայի միակ գրագետին թելադրեց իր ծրագրած նամակը և նույն ուրն ուղարկեց քաղաքի փոստը:

Սակայն ժամանակ և ընթերցողին ծանոթացնել վիպակիս իսկական հերոսի հետ:

Վաղեիմիր Դուբրովսկին դաստիարակվեց կադետների կորպուսում¹⁾ և ավարտեց իբրեւ գվարդիայի կորնետ²⁾: Հայրը վոչինչ չէր խնայում իր վորդուն վայելուչ պահելու համար, և յերիտասարդը տանից ստանում էր ավելի, քան պետք է սպասեր: Լինելով շուրջ ու փառասեր՝ նա իրեն թույլ էր տալիս փարթամ քմահաճություններ—թուղթ էր խաղում և պարտք էր անում, չմտածելով ապագայի մասին, և նախատեսելով, վոր վաղ թե ուշ պիտի գտնի մի հարուստ հարսնացու—աղքատ յերիտասարդի յերազը:

Մի անգամ, յերեկոյան, յերբ մի քանի սպա նստած էին նրա մոտ, բազկաթոռների վրա մեկնված, և ծխում էին նրա սաթի ծխափողերից, Գրիշան, նրա կամերդիները³⁾ մատուցեց մի նամակ, վորի մակագրությունն ու կնիքն իսկույն գարմաց-

1) Կադետների կորպուս—ցարական Ռուսաստանում գիշերոթիկ զինվորական դպրոց, վորտեղ սպա դասալու համար սովորում էյն գլխավորապես սպաների յերեխաները:

2) Կորնետ—ցարական բանակի հեծելազորի սպայական տաշին աստիճան, վոր համապատասխան էր հետազորի պոդպորուչիկի աստիճանին:

3) Կամերդիներ (գերմ.)—ծառա, սպասավոր:

րին յերիտապարդին: Նա շատապ բացեց ծրարն ու կարդաց հետևյալը:

«Դու մեր տեր Վլադիմիր Անդրեյեվիչ, յես, քո ծերացած դայակը, վորոշեցի քեզ ղեկուցել հայրիկիդ ատողջության մասին: Նա շատ վատ դրուժյան մեջ է, յերբեմն անմիտ-անմիտ խոսում է, և ամբողջ ուրը նստած է հիմար յերեխայի պես: Ապրելն ու չապրելն ասածու կամքից է կախված: Արև մեզ մոտ, ազիզ գնու ջան, մենք քեզ համար կառք կուղարկենք Պետոչնոյե: Լսել ենք, վոր գեմատվոյի դատարանը մեզ մոտ պիտի գա ու մեզ հանձնի Կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրովի իշխանության, վորովհետև մենք իբր թե նրանն ենք, բայց մենք միշտ ձերն ենք յեղել և իսկի եդ տեսակ բան չենք լսել մեր կյանքում: Դու կարող եյիր Պետերբուրգում եդ մասին ղեկուցել հայր թաղա-վորին, իսկ նա մեզ ամօթով չի անի: Մնամ քո հավատարիմ ստրկուհին, դայակ

Որինա Յեգորովնա Բուզիրյովա»

Իմ մայրական որհնությունս եմ ուղարկում Գրիշային, արդյոք լսվ է ծառայում քեզ: Մեզ մոտ այս յերկրորդ շաբաթն է, վոր անձրե է գալիս և հովիվ Ռոդյան մեռավ Միկոլի ուրվա մոտերքը:

Վլադիմիր Դուբրովսկին անսովոր հուզմունքով միքանի անգամ կարդաց այս բավական տարորինակ տողերը: Մանուկ որերից նա զրկվեց մորից և հորն ել գրեթե չճանաչելով, 8 տարեկան հասակում ուղարկվեց Պետերբուրգ: Այնուամենայնիվ նա ջերմ սիրում էր հորը, ընտանեկան կյանքը սիրում էր այնքան, վորքան դեռ չէր կարողացել զգալ այդ կյանքի խաղաք ուրախությունը:

Իր հորը կորցնելու միտքը մաշում էր նրա սիրտը, իսկ խեղճ հիվանդի վիճակը, վոր նա գուշակում էր դաշակի նամակից, սարսափ էր ազդում նրա վրա: Նա յերևակայում էր, թե ինչպես իր հայրը գտնվում է գյուղում, հիմար պառավի ու սպասավորների խնամքի տակ, ինչ-վոր փորձության մատնված, մարում է անոգ, մարմնական ու հոգեկան տանջանքների մեջ: Վլադիմիրը կշտամբում էր ինքն իրեն, վոր հանցավոր անտաբ-բերություն է ցույց տվել: Յերկար ժամանակ հորից վոչ մի լուր չէր ստացել և չէր ել մտածում տեղեկանալ, յենթադրելով, թե նա շրջագայում է կամ տնտեսական հոգսերով և զբաղված:

Նա վորոշեց զնալ հոր մոտ և նույնիսկ պաշտոնաթող լինել, յեթե հոր հիվանդոտ վիճակը պահանջի իր ներկայությունը: Նկատելով նրա անհանգստությունը, ընկերները հեռացան: Վլադիմիրը, մենակ մնալով, արձակուրդ ստանալու դիմում գրեց, սկսեց ծխել և խորասուզվեց մտքերի մեջ:

Նույն ուրը նա սկսեց հոգալ արձակուրդի մասին և Ձ որից հետո նա արդեն ճանապարհ ընկավ իր հավատարիմ Գրիշայի հետ:

Վլադիմիր Անդրեյեվիչը մոտենում էր այն կայարանին, վորտեղից ճանապարհը ծռելու յեր դեպի Կիստենեկա: Նրա սիրտը լիքն էր տխուր նախազգացումներով, նա վախենում էր, թե հորը կենդանի չի տեսնի, նա յերևակայում էր այն կյանքի տխուր պատկերը, վոր գյուղում սպասում էր իրեն, — խուլ, սակավամարդ անկուսն, աղքատություն և աշխարհի գործերի հոգս, վորոնցից նա վոչիչ չէր հասկանում: Հասնելով կայարան, նա մտավ կայարանապետի մոտ և հարցրեց, թե չկա արդյոք մասնավոր կառք¹⁾: Կայարանապետն իմացավ, թե նա ուր է ուղում զնալ և հայտարարեց, թե արդեն չորրորդ որն է, ինչ նրան սպասում է Կիստենեկայից ուղարկված կառքը: Շուտով Վլադիմիր Անդրեյեվիչի մոտ յեկավ ծերունի կառապան Անտոնը, վորը մի ժամանակ նրան տանում ու ցույց էր տալիս ախոռը և խնամում նրա փոքրիկ ձիուն: Տեսնելով նրան, Անտոնն արտասվեց, զլուխը խոնարհեց մինչև գետին, ասաց, թե իր ծերունի աղան կենդանի յե, և վաղեց ձիերը լծելու: Վլադիմիր Անդրեյեվիչը հրաժարվեց իրեն առաջարկած նախաճաշից և շտապեց մեկնել: Անտոնը նրան տանում էր գյուղական ճանապարհներով և նրանց միջև խոսակցություն սկսվեց:

— Ասա խնդրեմ, Անտոն, այդ ի՞նչ է պատահել հորս և Տրոյեկուրովի միջև:

— Ե՛հ, աստված գիտե, հայր Վլադիմիր Անդրեյեվիչ, աղեն չհաշտվեց Կիրիլա Պետրովիչի հետ, նա ել գործը դատարան տվեց. ասենք շատ անգամ դատն ել է ինքը, դատարանն ել: Դե մենք ծառա մարդիկ ենք, մեր գործը չե քննել աղաների գոր-

¹⁾ Մինչև յերկաթուղիների յերևան գալը մարդիկ կառքերով եյին ճանապարհորդում: Հեռավոր ճանապարհորդությունները լինում եյին մի քանի տեսակ. — պետական ձիերով ու կառքերով, վորոնք փոխվում եյին յուրաքանչյուր կայարանում և մասնավոր կառքերով, վորոնց ճանապարհորդը վարձով էր ազատ զնեցով:

ծերը, ամա, աստված վկա, ձեր հերը դուր տեղ դեմ գնաց Կիրիլա Պետրովիչին: Նրա հետ վհնց պիտի չափվի:

— Ուրեմն այդ Կիրիլա Պետրովիչն ինչ ուզում, այն ելանում ե:

— Լսված բան ե, աղա, նրա համար ատենակալն իսկի մի գոռը ել չարժի. դավառական վոստիկանապետին մատների վրա չե խաղացնում. աղաները դալիս են նրա մոտ գլուխ խոնարհելու. հարուստ մարդու բարեկամները շատ:

— Զի՞շտ ե, վոր նա խլում ե մեր կալվածքը:

— Ո՛Ֆ, աղա, հա, եգպես բան ենք լսել. ես քանի որը Պոկրովսկույի ժամկոչը մեր տանուտիրոջ կնուռքի ժամանակ ասում ե՝ հերիք ե ձեր քեֆին ման գաք, շուտով ձեզ կլծի Կիրիլա Պետրովիչը, վո՞նց կլծի: Դարբին Միկիտան ել ասում ե նրան. դե՛ լավ, Մավելիչ, սանահոր սիրտը մի կոտրի, հյուրերի քեֆին մի գիպչի: Կիրիլա Պետրովիչն իրեն համար, Անդրեյ Գավրիլովիչն ել իրեն համար, մենք բոլորս ել ասածունն ենք ու թագավորինը. ամա ի՞նչ արած, ուրիշի բերանին հո կողպեք չե՞ս դնի:

— Ուրեմն դուք չե՞ք ցանկանում Տրոյեկոլովի իշխանության տակ անցնել:

— Կիրիլա Պետրովիչի իշխանության տակ: Աստված մի արասցե: Առանց եդ ել նրա մարդկանց գլուխը վատ ե, իսկ յեթե ուրիշի մարդիկ անցնեն նրա իրավունքի տակ, նա նրանց կաշին ել կքերթի, միան ել: Չե, թող աստված յերկար կյանք տա Անդրեյ Գավրիլովիչին, իսկ յեթե աստված նրան իր մոտ տանի, են ժամանակ մեզ վոչ վոք հարկավոր չե, բացի քեզնից, մեր բարերարից: Մեզ մի տուր նրան, իսկ մենք սարի պես կկանգնենք քո քամակին:

Այս խոսքերի վրա Անտոնը բարձրացրեց մտրակը, թափահարեց յերասանները, և նրա ձիերն սկսեցին արագ վազել:

Զգացվելով ծերունի կառապանի խոսքերից, Դուբրովսկին լռեց և անձնատուր յեղավ իր մտքերին: Անցավ ավելի քան մի ժամ: Հանկարծ Գրիշան նրան սթափեցրեց, — հրե՛ն Պոկրովսկոյն, — բացականչությամբ: Դուբրովսկին բարձրացրեց գլուխը. կառքն ընթանում եր ընդարձակ լճի ափով: Լճից սկիզբ եր առնում մի գետակ և ոճազալար չքանում եր հեռվում, բլուրների մեջ: Բլուրներից մեկի վրա, սաղարթախիտ պուրակում բարձրանում եր քարե հսկայական տան կոտուրն ու պատշգամբը:

Մյուս բլրի վրա՝ յեկեղեցին իր հինգ գմբեթներով ու հնամյա զանգակատնով: Դրանց մոտ ցրված ելին գյուղական խճիթները՝ բանջարանոցներով ու ջրհորներով: Դուբրովսկին ճանաչեց այս վայրերը, — նա հիշեց, վոր հենց այդ բլուրի վրա նա խաղացել ե փոքրիկ Մաշա Տրոյեկոլովայի հետ, վորը չնրկու տարով իրենից փոքր եր և դեռ այն ժամանակ նկատվում եր, վոր պետք ե գեղեցկուհի դառնա: Դուբրովսկին ուզում եր նրա մասին տեղեկություն իմանալ Անտոնից, բայց ինչվոր ամոթխածություն գսպեց նրան:

Մոտենալով կալվածատիրոջ տանը, նա այդու ծառերի մեջ նկատեց կանացի սպիտակ շրջագեստ: Այդ ժամանակ Անտոնը մտրակեց ձիերին և վոչ առանց հպարտության, վորը հատուկ ե թե գյուղական և թե առհասարակ այլ կառապաններին, արագությամբ անցավ կամուրջն ու սլացավ գլուղի մոտով: Դուբա գալով գլուղից, նրանք բարձրացան սարի վրա, և Վլադիմիրը տեսավ Կեչինների պուրակն ու նրանից դեպի ձախ, բաց դաշտում — գորշավուն մի տնակ՝ կարմիր տանիքով: Նրա սիրտն սկսեց արագ խփել — նա տեսավ Կիստենկան և իր հոր անշուք տունը:

10 բոպեցից հետո նա մտավ այդ տան բակը: Աննկարագրելի հուզմունքով դիտում եր շուրջը: Տասներկու տարի իր հայրենիքը չեր տեսել: Կեչինները, վոր նրա այստեղ գտնված ժամանակ նոր եյին տնկվել ցանկապատի մոտ, աճել ելին ու դարձել բարձր, ճյուղավոր ծառեր: Բակը, վոր մի ժամանակ զարդարված եր յերեք համաչափ ծաղկանոցներով, իսկ սրանց միջև լայն ճանապարհ եր բացված, վորը մաքրվում եր խնամքով, — հիմա դարձել եր չհնձվող մարգագետին, վորտեղ մի կապած ձի յեր արածում: Շներն սկսեցին հաջել, բայց ճանաչելով Անտոնին, լռեցին ու սկսեցին շարժել բրդոտ պոչերը: Սպասավորները դուրս թափվեցին իրենց խճիթներից և ուրախ բացականչություններով շրջապատեցին յերիտասարդ աղային: Վերջինս հազիվ դուրս պրծավ ջերմեռանդ ամբոխի միջից և վազեց դեպի խարխուլ տունը: Սրահում նրան դիմավորեց Յեգորովնան և լալով գրկեց իր սանին:

— Բարե՛, բարե, դայակս, — կրկնում եր նա, իր կրծքին սեղմելով բարի պառավին, — հապա հայրիկը, վորտեղ ե նա, ինչպե՞ս ե նա:

Այդ բոպեյին վոտները հազիվ շարժելով դահլիճ մտավ

բաճրահասակ, գունատ ու նիհար ծերունին, վորը խալաթ եր հագել: Գլուխը ծածկել եր թասակով:

— Բարև, Վորդիկա,—ասաց նա թույլ ձայնով, և Վլադիմիրը հուզված գրկեց իր հորը:

Հիվանդը սաստիկ ցնցվեց ուրախությունից, թուլացավ, վրաները յերեքացին, և նա վայր կընկներ, յեթե վորդին չըններ նրան:

— Ինչո՞ւ վեր կացաք անկողնից,—ասում եր Յեզորովսկան,— վրաների վրա չի կարողանում կանգնել, բայց սպասավորի պես վազել և ուզում:

Ծերունուն յետ տարան ննջարան: Նա ուժ եր անում վորդու հետ խոսելու. բաց մտքերը խճովում էին ուղեղում ու քառերը բոլորովին անկապ էին: Նա լեց ու անդգայացավ: Վլադիմիրն ապշեց հոր վիճակի հանդեպ: Նա տեղավորվեց ննջարանում և խնդրեց իրեն մենակ թողնել հոր հետ: Տանեցիք հնազանդեցին, և այդ ժամանակ դիմեցին Գրիշային, տարան սպասավորների սենյակը, հյուրասիրեցին գլուղավարի ու սրտաբաց, հարցերի ու վողջուկների տարափ թափելով նրա վրա:

Գ Լ Ո Ւ Խ IV

Ուր սեղանն եր խորտիկների,
այնտեղ դադաղ և դրված¹⁾

Յերիտասարդ Դուբրովսկին իր ժամանելուց մի քանի ուր հետ ուզում եր զբաղվել գործերով, բայց հայրն իվիճակի չեղ նրան անհրաժեշտ բացատրություններ տալու—Անդրեյ Գավրիլովիչը հավատարմատար չուներ: Քրքբելով հոր թղթերը, Վլադիմիրը գտավ միայն ատենակալի առաջին նամակն ու պատասխանի սևագրությունը, վորոնցից չկարողացավ զաղափար կազմել գործի ելության մասին, և վորոշեց սպասել հետևանքներին՝ հույս դնելով իր գործի իրավացիության վրա:

Մինչ այս, մինչ այն, Անդրեյ Գավրիլովիչի առողջությունը ժամառժամ վատանում եր: Վլադիմիրը նախատեսում եր առողջության արագ քայքայումը և չեղ հեռանում ծերունուց, վորն ուղղակի յերեխայի խնամք եր պահանջում:

¹⁾ «Ուր սեղանն եր խորտիկների, այնտեղ դադաղ և դրված» — այս եպիգրամը վերցրած է հուս հայտնի բանաստեղծ Գ. Ռ. Դերժավինի (1743—1816 թ.թ.) «Իշխան Մեշչերսկու մահը» բանաստեղծությունից:

Մինչդեռ վորոշված ժամկետն անցավ և վերադառնալից խնդիր չհարուցվեց, Կիտենեկան պատկանում եր Տրոյեկուրովին: Շաբաշկինը ներկայացավ նրան, գլուխ տվեց, շնորհավորեց ու խնդրեց հայտնել, թե նորին գերազանցությանը յժբբ հաճելի կլինի անցնել նոր ձեռք բերված կավածքի տիրապետության, արդյոք ի՞նքը պիտի այդ անի, թե՞ կբարեհաճի վորեւ մեկին դրա համար հավատարմագիր տալ: Կիրիլա Պետրովիչը շփոթվեց: Բնությունից նա շահամուլ չեղ, վրեժխնդրության ցանկությունը նրան շատ հեռու տարավ, խիղճն սկսեց բողբոջել: Նա գիտեր, թե ինչ գրության մեջ և իր հակառակորդը, իր յերիտասարդության հին ընկերը,—և հաղթանակը չեղ ուրախացնում նրա սիրտը: Նա ցասկոտ հայեց Շաբաշկինին, հայհոյելու առիթ փնտռելով, բայց բավականաչափ այդպիսի առիթ չգտավ, բարկությամբ ասաց նրան.

— Կորի՛ր գնա, քեզ հետ գլուխ չունեմ:

Շաբաշկինը, տեսնելով նրա վատ տրամադրությունը, գլուխ տվեց ու շտապ հեռացավ: Կիրիլա Պետրովիչը, մենակ մնալով, սկսեց յետ ու առաջ քայլել, սուրկելով «բնդա, հաղթություն վորոշ»-ը, վոր միշտ անում եր իր մտքերի արտասավոր արեկոծության ժամանակ:

Վեշապես նա հրամայեց լծել թեթև կառքը, տաք զգեստ հագավ (այդ սեպտեմբերի վերջին եր) և ինքը վարելով կառքը, դուրս յեկավ բակից:

Շուտով նա տեսավ Անդրեյ Գավրիլովիչի տնակը և հոգին լցվեց իրար հակառակ զգացմունքներով: Բավարարված վրեժխնդրությունն ու իշխելու սերը նրա մեջ վորոշ չափով խեղդել էին ավելի ազնիվ զգացմունքները, բաց վերջիններս այնուամենայնիվ հաղթեցին: Նա վորոշեց հաշտվել իր հին հարևանի հետ, վոչնչացնել վեճի հետքերը, վերադարձնել նրան իր գույքը: Այս բարի մտադրությամբ թեթևացնելով իր հոգին, Կիրիլա Պետրովիչը կառքը քշեց դեպի հարևանի ագարակն ու մտավ ուղղակի տան բակը:

Այդ ժամանակ հիվանդը նստած եր ննջարանում, լուսամուտի մոտ: Նա ճանաչեց Կիրիլա Պետրովիչին, և սարսափելի հուզմունքը պատկերացավ նրա դեմքի վրա. սովորական գուռնատությանը տեղի տվեց վառ կարմրության, աչքերը կայծկել տեցին, նա խուլ ձայներ հանեց: Վորդին, վոր տնտեսական մատյաններն եր նայում, գլուխը բարձրացրեց և զարմացավ

Նրա վիճակի վրա: Հիվանդը սարսափ ու բարկութուն արտա-
հայտող շարժումով ցույց տվեց դեպի բակը:

Նա շտապ հավաքեց իր խալաթի փեշերը, պատրաստվելով
վեր կենալ բաղկաթուղից մի փոքր բաթճրացավ ... և հանկարծ
ընկավ... Վորդին վրա վազեց, ծերունին պառկած եր անզգա և
անշունչ: Նա կաթվածահար յեղավ:

— Շնուտ արեք, շնուտ, քաղնք գնացեք բժիշկ բերելու,—
գոռում եր Վլադիմիրը:

— Կիրիլա Պետրովիչը հարցնում է ձեզ,—ներս մտնելով
ասաց սպասավորը:

— Ասա Կիրիլա Պետրովիչին, վոր շուտ կորչի, քանի դեռ
յես չեմ հրամայել նրան վռնդել բակից—գնա:

Սպասավորն ուրախությամբ վազեց կատարելու իր աղա-
յի հրամանը: Յեզորովյան ձեռները խփում եր ծնկներին:

— Անունիդ մատաղ,—ասաց նա ծվծվան ձայնով,—գլուխդ
փորձանքի տակ մի դնի. Կիրիլա Պետրովիչը մեզ կուտի:

— Լուր, դաշակ,—հուզմունքով ասաց Վլադիմիրը,—այս
րոպեյիս Անտոնին ուղարկիր քաղաք, բժիշկ բերելու:

Յեզորովյան դուրս լեկավ: Նախասենյակում վոչ վոք չկար,—
բոլոր սպասավորները թափվել էին բակը՝ Կիրիլա Պետրովիչին
դիտելու: Յեզորովյան դուրս գնաց և լսեց սպասավորի պատաս-
խանը, վոր նա տալիս եր յերիտասարդ աղայի անունից: Կիրի-
լա Պետրովիչը կառքում նստած լսեց նրան: Նրա դեմքն ավելի
մռայլվեց, քան գիշերը, նա արհամարհանքով ժպտաց, ցասկոտ
նայեց սպասավորներին և կառքը կամաց քշեց տան մոտով: Նայեց
նաև այն լուսամուտին, վորի մոտ ընկած եր առաջ նստած եր Անդ-
րեյ Գավրիլովիչը, իսկ հիմա այնտեղ չեւ: Դայակը կանգնած եր
մուտքի սանդուղքի վրա, մոռանալով աղայի հրամանը: Սպա-
սավորներն աղմկալից խոսում էին այս դեպքի մասին: Հան-
կարծ Վլադիմիրը յերևաց նրանց մեջ և կցկտուր ասաց,—բժիշկ
հարկավոր չե, հայրիկը վախճանվեց:

Իրաբանցումն սկսվեց: Սպասավորները վազեցին ծերունի
աղայի սենյակը: Նա պառկած եր այն բաղկաթուղի վրա, ուր
նրան նստեցրել եր Վլադիմիրը: Ծերունու աջ ձեռքը կախվել
ու հասել եր հատակին, գլուխը թեքվել կրծքին: Կյանքի նշույլ
չկար նրա դեռ չսառած, բացարդեն մահով այլանդակված մարմ-
նի մեջ: Յեզորովյան սկսեց լաց ու կոծը: Սպասավորները շրջա-
պատեցին իրենց խնամքին թողնված դիակը, լողացրին, հագցրին

դեռ 1797 թվականին կարված համազգեստը և դրին հենց այն
սեղանի վրա, վորի շուրջը այնքան տարի սպասարկել էին
իրենց տիրոջ:

Գ Լ Ո Ւ Խ Կ

Թաղումը տեղի ունեցավ մահվան յերրորդ օրը: Խեղճ ծե-
րունու դիակը սեղանի վրա յեր, պատանքով ծածկված և մո-
մերով շրջապատված: Սեղանատունը լիքն եր սպասավորներով,
պատրաստվում էին դիակը դուրս տանելու: Վլադիմիրն ու յե-
րեք սպասավոր բարձրացրին դագաղը: Քահանան անցավ առաջ,
տիրացուն ուղեկցեց նրան, թաղման աղոթքներ յերգելով: Կիս-
տենեկաչի տերը վերջին անգամ անցավ իր տան շեմից: Դագա-
ղը տարան պուրակի միջով: Որը պայծառ եր ու ցուրտ: Աշնա-
նային տերևները թափվում էին ծառերից:

Դուրս գալով պուրակից, նրանք տեսան Կիստենեկայի
փայտաշեն յեկեղեցին և գերեզմանոցը, վորը ստվերված եր հնա-
մյա լորիններով: Այնտեղ հանգչում եր Վլադիմիրի մոր դիակը,
այնտեղ, նրա շիրիմի մոտ, նախորդ օրը նոր փոս եր փորված:

Յեկեղեցին լիքն եր Կիստենեկայի գյուղացիներով, վորոնք
յեկել էին վերջին հրաժեշտը տալու իրենց տիրոջ:

Յերիտասարդ Դուբրովսկին կանգնած եր դասում¹⁾, նա չեւ
լալիս ու չեւ աղոթում, բաց դեմքը սարսափելի լեւ: Տխուր
ծիսակատարությունը վերջացավ: Վլադիմիրն առաջինը հրաժեշտ
տվեց՝ դիակին, նրանից հետո—բոլոր սպասավորները: Բերին
դագաղի կափարիչը և ծածկեցին այն: Կանայք բարձրաձայն լա-
լիս էին, գեղջուկները հաճախ ձեռներով սրբում էին արցունք-
ները: Վլադիմիրը և նույն յերեք սպասավորներն ամբողջ գյու-
ղի ուղեկցությամբ դիակը տարան դեպի գերեզմանատուն: Դա-
գաղն իջեցրին գերեզման: Բոլոր ներկաները մի-մի բուռ հող
նետեցին այնտեղ: Փոսը հողով լցրին, հրաժեշտ տվին ու ցրվե-
ցին: Վլադիմիրն շտապ հեռացավ, բոլորից առաջ անցավ ու
չքացավ Կիստենեկայի պուրակում:

Յեզորովյան նրա անունից տերտերին և յեկեղեցու բոլոր
մյուս սպասավորներին հրավիրեց քելեխի, հայտարարելով, թե
յերիտասարդ աղան մտադիր չե քելեխին ներկա գտնվել: Յեվ

1) Դաս—յեկեղեցու այն տեղը, վորտեղ կանգնում է յերգեցիկ խումբը:

այսպիսով տեր-Սնտոնը, յերեցկին Ֆեդոտովնան և տիրացուն վտառով գնացին աղայի տունը, Յեգորովնայի հետ խոսելով հանգուցյալի բարեմասնությունների մասին, և այն մասին, թե ինչ է սպասում նրա ժառանգին: (Տրոյեկուրովի ժամանումը և նրանցուց տված ընդունելությունն արդեն հայտնի էին ամբողջ արվարձանին¹⁾ և այնտեղի քաղաքագետները դրանից մեծ հետեւանքներ էլին գուշակում):

— Ինչ լինելու յե, ես ել կլինի, — ասաց յերեցկին, — ամուսն, յեթե Վլադիմիր Անդրեևիչը չլինի մեր աղան: Լավ տղա յե, խոսք չկա:

— Նրանից բացի ել ով պիտի լինի մեր աղան, — ընդհատեց Յեգորովնան: — Կիրիլա Պետրովիչը զուր տեղն է տաքանում, թող չկարծի թե վախկոտի չե հանդիպել: Իմ գառնիկը համ ինքն իրեն կաշապանի, համ ել, աստծո կամքով, բարի մարդիկ կոգնեն նրան: Շատ է գոռոզացել եդ Կիրիլա Պետրովիչը: Դիտե՛ք, թե վոնց պոչը քաշեց, յերբ իմ Դրիշկան գոռաց վրան — կորիւր, քավթառ շուն, կորիւր ես տնից:

— Ա՛խ, Յեգորովնա, — ասաց տիրացուն, — Դրիգորի լեզուն եդ վոնց է դարձել. յես կարծես ավելի շուտ կհամաձայնեմ սրբազանի վրա հաջել, քան ծուռը մտիկ տալ Կիրիլա Պետրովիչին: Նրան տեսնում ես թե չե, դողն ընկնում է ջանդ, չես իմանում վոնց ծկես...

— Ունայնություն ունայնությանց, — ասաց քահանան, — Կիրիլա Պետրովիչին ել հավերժ հիշատակ կերգեն, վոնց վոր հիմա Անդրեյ Գավրիլովիչին, միայն թե կթաղեն վոնց վոր հարուստին, շատ հյուրեր կհրավիրեն. բայց աստծո համար միևնույն չէ...

— Ա՛խ, տերտեր, մենք ել ուզում եյինք կանչել ամբողջ արվարձանը, բայց Վլադիմիր Անդրեևիչը չուզեց: Մեր լոնչն է պակաս. հյուրասիրելու համար ամեն բան կա, բայց լոնչ արած: Յեթե շատ մարդ չկա, գոնե ձեզ մի լավ կպատվեմ, մեր թանգազին հյուրեր:

Այս փաղաքշական խոստումն ու քաղցր խնջույքի հույսն արագացրին խոսակիցների քալերը, և նրանք բարեհաջող կերպով հասան աղայի տունը, վորտեղ արդեն սեղանը պատրաստ էր և ողին մատուցված:

¹⁾ Արվարձան այստեղ նշանակում է շրջակա գյուղերի բնակչութունը:

Այդ պահին Վլադիմիրը գնում էր խիտ ծառերի արանքով, աշխատում էր շարժումներ կատարելով և հոգնածությամբ խեղդել իր հոգեկան վիշտը: Նա գնում էր առանց ճանապարհ ընտրելու: Ծառերի ճյուղերն ամեն լողալիցում ու ճանգոռում էլին նրան: Վտտներն ամեն լողալիցում էլին ճահճուտներում, — նա վոչինչ չէր նկատում: Վերջապես, նա հասավ մի փոքրիկ ձորակ, վոր բոլոր կողմերից շրջապատված էր անտառով: Աւաղակը լուռ գալարվում էր ծառերի միջով, վորոնց տերևները կիվալի չափ թափված էին: Աշուն էր: Վլադիմիրը կանգ առավ, նստեց պող ճիմի վրա, և նրա հոգում մեկը մյուսի յետևից մտալ կերպով խոնվեցին մտքերը... Նա իրեն խիստ մենակ էր զգում: Գալիքը ծածկված էր անեղ ու սև ամպերով: Տրոյեկուրովի հետ ունեցած թշնամանքը նոր դժբախտություններ էր նախագուշակում: Նրա աղքատ գույքը կարող էր անցնել ուրիշ ձեռքը, այդ դեպքում մուրացիկություն էր սպասում նրան: Նա յերկար, անշարժ նստած էր նույն տեղում, նայելով դանդաղահոս առվակին, վորը տանում էր մի քանի դեղնած տերևներ և նման էր կյանքին, մի նմանություն, վորը սովորաբար այնքան ճիշտ է լինում: Վերջապես Վլադիմիրը նկատեց, վոր սկսում է մթնել: Նա վեր կացավ և սկսեց փնտռել տան ճանապարհը, բայց դեռ յերկար դեգերեց անծանոթ անտառում, մինչև վոր գտավ մի արահետ, վորը նրան հասցրեց ուղղակի իր տան դարպասները:

Դուրբովսկին հանդիպեց տերտերին և մյուս լեկեղեցական սպասավորներին:

Նա մտածեց, վոր այդ վատ նշան է, — ակամա շեղվեց ճանապարհից և թագնվեց ծառի տակ: Յեկեղեցու սպասավորները նրան չնկատեցին և մոտիկից անցնելով տաք-տաք խոսում էին:

— Հեռացիր չարիքից և բարի գործ արա, — ասում էր տերտերը յերեցկնոջը, — ել լոնչ գործ ունենք այստեղ մնալու: Բեդ ինչ, թե բանն ինչով կվերջանա:

Յերեցկին ինչ-վոր պատասխան տվեց, բայց Վլադիմիրը չլսեց նրա խոսքերը:

Մոտենալով իր տանը, նա տեսավ մարդկանց բազմություն, — գլուղացիներն ու սպասավորները խմբվել էին բակում: Դեռ հեռվից Վլադիմիրը լսեց անսովոր մի աղմուկ և խոսակցություն: Մարագի առջև յերկու յետաձի կառք էր կանգնած: Տան մուտքի մոտ մի քանի անծանոթ մարդիկ, վորոնք աստի-

ճանապարհներն տարազով էյին, կարծես դատողություններ էյին անում ինչ-վոր բանի մասին:

— Այս ինչ է նշանակում,— բարկությամբ հարցրեց նա Անտոնին, վորը վազեց նրան գիմալորելու,— այդ ուղքեր են և ինչ են ուզում:

— Ա՛խ, Վլադիմիր Անդրեևիչ,— շնչակտուր պատասխանեց ծերունին,— դատարանն է լեկել: Մեզ հանձնում են Տրոյեկուրովին, մեզ խլում են քո վողորմածությունից...

Վլադիմիրն աշխարհից, սպասավորները շրջապատեցին իրենց գլխախոտ տիրոջը:

— Ո՛վ դու մեր հայր,— գոռում էին նրանք, համբուրելով Վլադիմիրի ձեռները,— քեզանից բացի ուրիշ աղա չենք ուզում, հրամայիր, պարոն, և մենք կվաճակենք դատարանը, կմեռենք, բայց քեզ չենք թողնի:

Վլադիմիրը նայում էր նրանց և տարորինակ զգացմունքներ էյին հուզում նրան:

— Կանգնեցեք հանդարտ,— ասաց նա,— իսկ յես կխոսեմ դատավորներին հետ:

— Խոսի՛ր, հայր,— գոչեցին ամբոխի միջից,— խղճի բեր եղ անիծվածներին:

Վլադիմիրը մոտեցավ չինովնիկներին: Շաբաշկինը, վոր գլխին կարտուղ էր ծածկել, ձեռները կողքին դրած կանգնել ու հպարտ դիտում էր իր շուրջը: Գավառական վոստրիկանապետը, կարմիր դեմքով, բեխերով, բարձրահասակ ու հաստափոր մի տղամարդ, տեսնելով մոտեցող Դուբրովսկուն, մոմաց և խուսափում ձայնով ասաց.

— Այսպես ուրեմն, ձեզ մոտ ել կրկնում եմ այն, ինչ վոր արդեն ասել եմ,— գավառական դատարանի վորոշմամբ այսուհետև դուք պատկանում եք Կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրովին, վորի ներկայացուցիչն այստեղ պ. Շաբաշկինն է. կատարեցեք այն բոլորը, ինչ վոր նա հրամայի, իսկ դուք, կանաչք, սիրեցեք ու հարգեցեք նրան, իսկ նա ձեզ շատ է սիրում:

Այս սուղ կատակի վրա գավառական վոստրիկանապետը հեհուաց, Շաբաշկինն ու մյուսներն էլ հետևեցին նրան: Վլադիմիրի գալուստը իր գազաթնակետին հասավ:

— Թո՛ւլլ տվեք իմանալ, այս ինչ է նշանակում,— շինծու սառնասրտությամբ հարցրեց գավառական ուրախ վոստրիկանապետին:

— Այս այն է նշանակում,— պատասխանեց հնարամիտ աստիճանավորը,— վոր մենք յեկել ենք սույն գույքը հանձնելու: Կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրովին և մյուսներին խնդրելու, վոր քանի վողջ են հեռանան այստեղից:

— Բայց դուք կարծեմ նախքան իմ գյուղացիներին դիմելը կարող էյիք ինձ դիմել և հայտարարել կալվածատիրոջը, վոր հրաժարվի իշխանությունից...

— Իսկ դու ով ես,— հարցրեց Շաբաշկինը, հանդգնությամբ նայելով,— նախկին կալվածատեր Անդրեյ Գավրիլի վորդի Դուբրովսկին ասածո կամքով մեռավ, մենք ձեզ չենք ճանաչում և չենք էլ ուզում ճանաչել:

— Ձերդ ազնվականություն, մեր յերիտասարդ աղան է,— ասաց մեկն ամբոխի միջից,— Վլադիմիր Անդրեևիչը:

— Այդ ո՞վ համարձակվեց բերան բանալ,— բարկությամբ ասաց գավառական վոստրիկանապետը,— ինչ աղա, ինչ Վլադիմիր Անդրեևիչ. ձեր աղան Կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրովն է, լսում եք, հայվաններ:

— Վհնց չի,— ասաց նույն ձայնը:

— Այս խռովությունն է,— գոռաց գավառական վոստրիկանապետը,— էյ, տանուտեր, լեկ այստեղ:

Տանուտերը մոտեցավ:

— Այս ըոպելիս գտիր նրան, ով համարձակվեց խոսել ինձ հետ: Յես նրան...

Տանուտերը դիմեց ամբոխին, հարցնելով, թե ով էր խոսողը: Սակայն բոլորը լուռ էյին: Շուտով հետին շարքերում սկսվեց տրտունջ, վորը սաստկացավ և մի ըոպելում սարսափելի վայնասուն դարձավ: Գավառական վոստրիկանապետը ցածրացրեց իր ձայնը և ուզում էր համոզել նրանց...

— Ել ինչ ենք դրա ուխտին մտիկ անում,— գոռացին սպասավորները,— տղերք, տվեք դրանց— և ամբոխը շարժվեց:

Շաբաշկինն ու մյուս անդամները գլխապատառ վազելով մտան նախասենյակ և փակեցին դուռը:

— Տղերք, կապեցեք դրանց,— գոռաց նույն ձայնը, և ամբոխն սկսեց զրոհ տալ:

— Սպասեցեք,— գոչեց Դուբրովսկին,— հիմարներ, ինչ եք անում, դուք կորցնում եք ինձ ել, ձեզ ել, գնացեք տներդ և հանգիստ թողեք ինձ: Մի վախենաք, թագավորը վողորմած է, յես նրան կխնդրեմ, նա մեզ չի զրկի, մենք բոլորս նրա գա-

վականներն ենք: Ել յես ինչ պես նրան ձեզ համար մի բան խնդրեմ, յեթե սկսեք խռովութիւն և ավաղակութիւն անել:

Յերիտասարդ Դուբրովսկու ճառը, նրա հնչուն ձայնն ու վեհ տեսքը ցանկալի ազդեցութիւն գործեցին: Ամբոխը հանդարտվեց, ցրվեց: Բակը դատարկվեց: Դատարանի անդամները նստած ելին տանը: Վերջապես, Շաբաշկինը կամացուկ բայեց դուռը, դուրս յեկավ և ստորաքարշությամբ սկսեց շնորհակալութիւն հայտնել Դուբրովսկուն, նրա ցույց տված պաշտպանութեան համար:

Վլադիմիրը քամահրանքով լսեց նրան և վոչինչ չպատասխանեց:

— Մենք վորոշեցինք, — շարունակեց ատենակալը, — ձեր թույլտվութեամբ մնալ այստեղ գիշերելու, թե չե արդեն մութն է և ճանապարհին ձեր մոտիկները կարող են հարձակվել մեզ վրա: Շնորհ արեք, հրամայեցեք թեկուզ խոտ փռել հյուրասենյակում: Լույսը բացվեց թե չե, մենք իսկույն կհեռանանք:

— Ինչ ուզում եք արեք, — սառը պատասխանեց Դուբրովսկին. — յես արդեն տեր չեմ այստեղ:

Այս ասելուց հետո նա առանձնացավ իր հոր սենյակում ու փակվեց այնտեղ:

ԳԼՈՒԽ VI

«Այսպես ուրեմն, ամեն ինչ վերջացավ, — ասաց նա ինքն իրեն, — դեռ առավոտյան յես ունեյի անկյուն ու մի կտոր հաց: Այս տունը, ուր յես ծնվել եմ, ուր մեռել ե իմ հայրը, վաղը պետք է թողնեմ այն մարդուն, վորը նրա մահվան և իմ աղքատութեան պատճառն է»: Յեւ նրա հացացքը գամվեց մոր պատկերին: Նկարին այսպես եր տվել այդ պատկերը. — Վլադիմիր մայրը հենված եր բազրիքներին, առավոտյան սպիտակ հագուստով, մազերի մեջ՝ մի վարդ: «Այս պատկերն ել կընկնի իմ ընտանիքի թշնամու ձեռքը, — մտածեց Վլադիմիրը, — ջարդված աթոռների հետ կենտվի նկուղ, կամ կփակցվի նախասենյակում, կդառնա նրա շնապանների ծաղրի ու դիտողութիւնների առարկա, իսկ մորս ննջարանում, այն սենյակում, ուր մեռավ հայրս, կընակվի նրա գործակատարը, կամ կտեղավորվի նրա հարեմը: Վոչ, վոչ, թող նրա ձեռքը չընկնի այս տխուր տունը, վորտեղից նա ինձ դուրս է անում»: Վլադիմիրը կրճատեցրեց ատամները:

Նրա գլխում սարսափելի մտքեր ծագեցին: Դատական գրչականների ձայները հասնում էին նրան: Այդ մարդիկ կարգադրութիւններ ելին անում, մերթ այս ելին պահանջում մերթ այն, ընդհատելով նրա տխուր մտքերը: Վերջապես, ամեն ինչ լռեց:

Վլադիմիրը բացեց պահարաններն ու արկղները, զբաղվեց հանգուցյալի թղթերով: Դրանք մեծ մասամբ տնտեսական հաշիվներ էին և զանազան գործերի վերաբերյալ գրութիւններ: Վլադիմիրը առանց կարդալու պատուում եր թղթերը: Սրանց մեջ գտնվեց կնոջս նամակները մահագրութեամբ մի ծրար: Վլադիմիրն սկսեց հուզմունքով կարդալ այդ նամակները: Դրանք գրված էին պատերազմի ժամանակ և կիստենեկայից ուղարկվել էին բանակի հասցեով: Կրնը նկարագրում եր իր դատարկ կյանքը, տնտեսական զրադմունքները, քնքշաբար գանգատվում անջատման մասին և ամուսնուն կանչում տուն, դեպի փաղաքուշ ընկերուհու գիրկը: Նամակներից մեկում մայրն անհանգրստութիւն եր հայտնում փոքրիկ Վլադիմիրի առողջութեան մասին: Մի ալ նամակում նա բւրախանում եր Վլադիմիրի վաղաժամ ունակութիւնների առթիւ ու նրա համար նախատեսում եր փայլուն ու յերջանիկ ապագա: Վլադիմիրը խորացավ ընթերցման մեջ, և մոռացավ ամեն ինչ, ընկղմվելով ընտանեկան յերջանկութեան աշխարհը, և չնկատեց, թե ինչպես թռան ժամերը, պատի ժամացույցը խփեց տասնմեկը: Վլադիմիրը նամակները դրեց գրպանը, վերցրեց մոմն ու դուրս յեկավ կարիւնտից: Դահլիճում, հատակի վրա քնած էին աստիճանավորները: Սեղանի վրա գրված էին նրանց դատարկած բաժակները, և ոռմի ուժեղ բուլբուլ տարածվել եր ամբողջ սենյակում: Վլադիմիրը նրանց մոտից զգվանքով անցավ նախասենյակը: Դուռը փակ եր: Վլադիմիրը, բանալին չգտնելով՝ վերադարձավ դահլիճ: Բանալին գտնվում եր սեղանի վրա: Վլադիմիրը բացեց դուռը և իր առջև տեսավ մի մարդ, վորը կծկվել եր անկյունում, փայլուն կացինը ձեռքին: Մոմով լուսավորելով նրան՝ Վլադիմիրը ճանաչեց դարբին Արխիպին:

— Ի՞նչ ես անում այստեղ, — հարցրեց նա:

— Ա՛խ Վլադիմիր Անդրեևիչ, այդ դժուր եք, — շշմալով պատասխանեց Արխիպը, — տեր, վողորմիր ու փրկիր: Լավ ե, վոչ դուք մոմ ելիք վերցրել...

Վլադիմիրը ապշած նայում եր նրան:

— Ինչո՞ւ յես այստեղ թագնվել,—հարցրեց նա դարձնին։
— Յես ուզում եմ իմանալ՝ տաճանն երբուրդ,—կամացուկ
ու կցկտուր պատասխանեց Արխիպը։

— Իսկ ինչո՞ւ կացին ես վերցրել։

— Ինչու յեմ վերցրել, բա հիմի առանց կացնի վճնց կլնի։
Ես աստիճանավորներն ենպես կատաղած մարդիկ են... մեկ ել
տեսար...

— Դու հարբած ես, դեն գցիր կացինը, գնա քնիր։

— Յես հարբած, աղա ջան, Վլադիմիր Անդրեևիչ, աստված
ե վկա, իսկի մի կաթիլ ել բերանս չեմ առել։ Ե՛հ, գինու մա-
սին հիվ ե մտածում, լաված բան ե, չինովիկներն ուզում են
մեզ տեր դառնալ, չինովիկները վոնդում են մեր աղաներին
իրենց տանից... Ե՛խ, խռմփում են անիծվածները. բոլորին մի
անգամից տեղն ու տեղը քնեցնես, հետո ել ջուրը նետես։

Դուբրովսկին խոժոռվեց։

— Լսիր, Արխիպ,—ասաց նա, մի փոքր լռելուց հետո,—
լավ բան չես մտածել։ Դրանք մեղավոր չեն։ Լապտերը վառիր
ու յեկ իմ հետևից։

Արխիպն աղայի ձեռից վերցրեց մոմը, վառարանի լետե-
վում գտավ լապտերը, վառեց, ու լեբկուսով կամացուկ իջան
դրսի սանդուղքից ու գնացին բակի մոտով, պահապանն սկսեց
զարկել թուջե տախտակին, շները հաջեցին։

— Ո՞վ ե պահապանը,—հարցրեց Դուբրովսկին։

— Մենք ենք, աղա,—պատասխանեց բարակ մի ձայն,—
Վասիլիսան և Լուկերիան։

— Գնացե՛ք ձեր տները,—ասաց Դուբրովսկին,—այստեղ
դուք հարկավոր չեք։

— Հերիք ե պահապան կանգնեք,—ասաց Արխիպը։

— Շնորհակալ ենք, բարեբա՛ր,—պատասխանեցին կանայք
և իսկույն գնացին տուն։

Դուբրովսկին շարունակեց գնալ։ Նրան մոտեցան յերկու
հոգի ու ձայն տվին։ Դուբրովսկին ճանաչեց Անտոնի ու Գրի-
շայի ձայները։

— Ինչո՞ւ չեք քնում հարցրեց նա։

— Ել ի՞նչ քուն,—պատասխանեց Անտոնը,—ինչ որի հա-
տանք, հում մտքովը կանցներ։

— Կամո՞ց—ընդհատեց Դուբրովսկին,—հեր ե Յեգորովան։

— Աղալի տանն ե, իր սենյակում,—պատասխանեց Գրիշան։

— Գնա նրան բեր այստեղ, մերոնց բոլորին դուրս բեր
տանից, վոչ մի մարդ այնտեղ չմնա, բացի աստիճանավորներից,
իսկ դու, Անտոն. լծիր սալը։

Գրիշան գնաց և մի քանի ըոպեյից հետո վերադարձավ իր
մոր հետ։ Պառալն ալբ գիշեր չեր հանվել։ Բացի աստիճանա-
վորներից, տանը վոչ վոք աչքերը չեր փակել։

— Այստե՞ղ են բսլորը,—հարցրեց Դուբրովսկին,—տան վոչ
վոք չմնաց։

— Բացի աստիճանավորներից, վոչ վոք,—պատասխանեց
Գրիշան։

— Այստեղ խոտ կամ ծղոտ բերեք,—ասաց Դուբրովսկին։
Մարդիկ վազեցին ախոռը և խոտ բերին՝ ով ինչքան կա-
րող եր։

— Դրեք սանդուղքի տակ,—այ, այդպես։ Հնալա, տղերք,
կրակ տվեք։

Արխիպը բացեց լապտերը։ Դուբրովսկին վառեց մարխը։

— Սպասիր,—ասաց նա Արխիպին,—կարծեմ յես շտապե-
լուց փակեցի նախասենյակի դուռը, գնա բաց արա, չո՛ւտ։

Արխիպը վազեց նախասենյակ։ Դուռը բաց եր։ Արխիպը
փակեց բանալիով, կիսաձայն շշնջալով—Վո՛նց չե, բաց առա,—
և վերադարձավ Դուբրովսկու մոտ։

Դուբրովսկին մարխը մոտեցրեց խոտին։ Ոոտը բռնկվեց,
բոցավառվեց ու լուսավորեց ամբողջ բակը։

— Ա՛խ,—ցավագին մրմնջաց Յեգորովան,—Վլադիմիր
Անդրեևիչ, ի՞նչ ես անում։

— Լսիր,—ասաց Դուբրովսկին։—Ե՛հ, տղերք, մնա՛ք բարով,
կգնամ, ուր վոր աստված տանի։ Յերջանիկ յեղեք ձեր նոր տի-
րոջ հետ։

— Ո՞վ մեր հայր, ո՞վ բարերար,—պատասխանեցին սպա-
սավորները,—կմեռնենք, բայց քեզ մենակ չենք թողնի, կգանք
քեզ հետ։

Կառքը պատրաստ եր։ Դուբրովսկին Գրիշայի հետ նստեց
սալը և նրանց տեսակցության վալը նշանակեց Կիստենևկայի
պուրակը։ Անտոնը մտրակեց ձիերին ու նրանք դուրս յեկան
բակից։

Քամին բարձրացավ։ Բոցը մի ըոպեյում ընդգրկեց ամբողջ
տունը. կարմիր ծուխը գալարվում եր կտուրի վրա։ Ապակիները
դրնդում եյին ու թափվում, ընկնում եյին բոցավառված դե-

ընդհանրապես անտրամադրանքի ազդեցությունը հեծեծանքն ու ազդեցությունը՝ «ոգնեցեք, ոգնեցեք»:

— Վա՛նց չե՛ս,—ասաց Արխիպը, չարախինդ ժպիտով դիտելով հրդեհին:

— Արխիպ ջան,—ասաց Յեզորոֆնան,—ազատիր եղ անիծվածներին, աստված կվարձատրի քեզ:

— Վա՛նց չե՛ս,—պատասխանեց դարբինը:

Այդ բոլորներն յեկվորները յերևացին լուսամուտից, աշխատելով ջարդել կրկնակի շրջանակները: Բայց այստեղ կտուրը ճքճքալով փուլ լեկավ և ճիչերն այլևս չլսվեցին:

Շուտով բոլոր սպասավորները դուրս թափվեցին բակը: Կանայք աղմկելով շտապում էին ազատել իրենց ինչքը, լեռնախաները հրդեհով դմայված՝ թռչկոտում էին: Կայծերը թռչում էին հրեղեն բուքի նման: Խրճիթները բռնկվեցին:

— Հիմի ամեն բան լավ ե՛ս,—ասաց Արխիպը,—վա՛նց ե՛ս վաճվում, հը՞: Յերևի Պոկրովսկոյից նայելը հետաքրքիր կլինի:

Այդ բոլորներն նրա ուշադրությունը գրավեց մի նոր յերեվոյթ: Կատուն վազվզում եր բոցավառված մարագի կտուրի վրա, չիմանալով վոթեղից թռչի—ամեն կողմից նա շրջապատված եր բոցով: Խեղճ կենդանին ցավալի մլավյունով ոգնություն եր կանչում, յերևախները թուլանում էին ծիծաղից, տեսնելով նրա հուսահատությունը:

— Ի՞նչ եք ծիծաղում, սատանի ճուտեր,—բարկություն մտնելով նրանց դարբինը,—աստծուց չե՛ք վախենում. աստծո արարածը մեռնում ե՛ս, իսկ դուք ուրախանում եք հիմարի պես: Յեվ սանդուղքը դեմ անելով վառված կտրին բարձրացավ կատվին ցած բերելու: Կատուն հասկացավ նրա մտադրությունը և հապճեպ գոհունակության տեսք ընդունելով, կպավ դարբինի թևին: Կիսով չափ լանձված դարբինն իջեցրեց կատվին:

— Ե՛հ, տղերք, մնաք բարով,—ասաց նա շփոթված սպասավորներին,—յես այստեղ ել գործ չունեմ, մնացեք բարով, ավել պակասը ներեցեք:

Դարբինը գնաց: Հրդեհը դեռ վորոշ ժամանակ շարունակվում եր: Վերջապես, բոցը դադարեց, և ածխի կույտերն առկալծում էին գիշերվա մթնում: Նրանց շուրջը թափառում էին Կիստենկայի հրդեհից տուժած բնակիչները:

Հետևյալ որը հրդեհի լուրը տարածվեց ամբողջ արվարձանում: Բոլորը խստում էին հրդեհի մասին և զանազան յենթադրություններ անում: Վոմանք հավատացնում էին, թե Դուբրովսկու սպասավորները քելեխի ժամանակ հարբել են և անզգուշաբար հրդեհել տունը, մյուսները մեղադրում էին աստիճանավորներին, թե քեֆ էին արել այնտեղ, շատերը հավատացնում էին, թե Դուբրովսկին նույնպես ալրվել է զեմսովոյի դատարանի և բոլոր սպասավորների հետ: Միքանիսը գուշակում էին ճշմարտությունը և պեղում, վոր այդ սարսափելի փորձություն հանցավորն ինքը Դուբրովսկին ե, վորը գործել է կատաղությունից և հուսահատությունից դրդված: Հրդեհի յերկրորդ որը յեկավ Տրոյեկուրովը և անձամբ քննություն կատարեց: Պարզվեց, վոր գավառական վոստիկանապետը զեմսովոյի դատարանի ատենակալը, փաստաբանն ու գրագիրը, ինչպես նաև Վլադիմիր Դուբրովսկին, դալակ Յեզորոֆնան, սպասավոր Դրիզորը, կառավար Անտոնը և դարբին Արխիպն անհայտ կորել են:

Բոլոր սպասավորները վկայեցին, թե աստիճանավորներն ալրվել են այն ժամանակ, յերբ փլվել է տանիքը: Նրանց այրված վոսկորները հանվեցին մոխրի միջից: Կանայք—Վասիլիսան ու Լուկերիան ասացին, թե հրդեհից մի քանի բոլոր ատալ տեսել են Դուբրովսկուն և դարբին Արխիպին: Բոլորը վկայում էին, վոր դարբին Արխիպը կենդանի չե և հավանորեն հրդեհի գլխավոր հանցավորը, յեթե վոչ միակ հանցավորը: Դուբրովսկու վերաբերմամբ թունդ կասկածներ կային: Կիրիլա Պետրովիչը դեպքի մանրամասն նկարագրությունն ուղարկեց ** նահանգապետին և նոր գործ սկսվեց:

Շուտով ուրիշ տեղեկություններ ուրիշ անունով տվին մարդկանց հետաքրքրության ու յենթադրություններին: **-ում յերևացին ավազակներ, վորոնք սարսափ էին տարածում շրջանի բոլոր վայրերում: Նրանց դեմ կառավարության ձեռնարկած միջոցներն անբավարար յեղան: Իրար հաջորդում էին մեկը մյուսից ավելի նշանավոր կողոպուտները: Ապահովություն չկար վոչ ճանապարհների վրա, վոչ ել գյուղերում: Ավազակները մի քանի յեռաձի կառքերով, որը ցերեկով շրջում էին ամբողջ նահանգում, կանգնեցնում էին ճանապարհորդներին ու փոստը, հասնում գյուղերը, կողոպտում ու հրդեհում կալվածատերերի տները: Հրոսակապետը հռչակվել եր իր խելքով, արիությանը և

ինչևոր բարենորոգությամբ: Նրա մասին հրաշքներ եյին պատմում: Դուրսովսկու անունն արտասանում եյին բոլորը: Բոլորը հավատացած եյին, թե խիզախ չարագործների պարագլուխը նա չէ, և վոչ թե մեկ ուրիշը: Միայն մի բանի վրա եյին դարմանում — Տրոյեկուրովի կալվածներն անձեռնմխելի եյին մնացել: Ավագակները չեյին կողոպտում նրա և վոչ մի մարագը, չեյին կանգնեցնում նրա և վոչ մի սայլը: Տրոյեկուրովը իրեն հատուկ գոռոգությամբ այս բացառութիւնը վերագրում եր ալն յերկուդին, վոր նա տարածել եր վորջ նահանգում, և այն արթուն վոստիկանության, վոր նա պահում եր իր գյուղերում: Տրոյեկուրովի հարեաններն սկզբում ծաղրում եյին նրա այդ գոռոգութիւնը, և ամեն մեկն սպասում եր, վոր անկոչ հյուրերն այցելեն Պոկրովսկոյե, վորտեղ հարուստ ավար կգտնեն, բայց, վերջապէս, ստիպված լեղան համաձայնել Տրոյեկուրովի հետ և խոստովանել, վոր ավագակներն ևս անհասկանալի հարգանք են ցույց տալիս նրան... Տրոյեկուրովը հրճվում եր և Դուրսովսկու կատարած յուրաքանչյուր կողոպուտից հետո ծաղրում նահանգապետին, գավառական վոստիկանապետերին ու վաշտապետերին, վերոնցից միշտ անմխաս եր մնում Դուրսովսկին:

Մինչ այս, մինչ ալն, յեկավ հոկտեմբերի 1-ը՝ Տրոյեկուրովի գյուղում լեկեղեցական տոնի որը: Բայց նախքան այդ հանդիսի և հետագա պատահարների նկարագրության անցնելը, մենք ընթերցողին պիտի ծանոթացնենք այն դեմքերի հետ, վորոնք նրա համար նոր են, կամ վորոնք մենք միայն հարեանցի հիշատակել ենք մեր վիպակի սկզբում:

ԳԼՈՒԽ VІІІ

Հավանորեն ընթերցողն արդեն հասկացել ե, վոր Կիրիլա Պետրովիչի դուստրը, վորի մասին մենք դեռ ընդամենը մի քանի խոսք ենք ասել, մեր վիպակի հերոսուհին ե: Մեր նկարագրած ժամանակաշրջանում նա 17 տարեկան եր, կատրելապէս հասունացած զեղեցկությամբ: Հայրը խելահեղության չափ սիրում եր նրան, բայց ցուցադրում եր իր սովորական քմահաճ վերաբերմունքը, մերթ բավարարելով նրա ամենաչնչին ցանկութիւնները, մերթ վախեցնելով իր խիստ, յերբեմն ել դաժան վարմունքով: Հավատացած լինելով, վոր ինքը սիրված ե աղջկա

կողմից, նա այնուամենայնիվ յերբեք չեր կարողանում արժանալ նրա վստահության: Դուստրը սովորել եր նրանից թագցնել իր զգացմունքներն ու մտքերը, վորովհետեւ յերբեք չեր կարող ձգբրիտ գիտնալ, թե դրանք ինչպիսի ընդունելութիւն կգտնեն: Նա ընկերուհիներ չունեիր, մեծանում եր մենության մեջ, Հարեանների կանայք ու աղջիկները շատ քիչ եյին գալիս Կիրիլա Պետրովիչի մոտ, վորի սովորական խոսակցութիւններն ու զվարճութիւնները պահանջում եյին տղամարդկանց ընկերութիւնը և վոչ թե կանանց ներկայութիւնը: Հազվադեպ եր լինում, վոր մեր գեղեցկուհին չերկար Կիրիլա Պետրովիչի մոտ քեֆ անող հյուրերի մեջ: Հսկայական գրադարանը, վոր մեծ մասամբ բաղկացած եր XVIII դարի ֆրանսիական գրողների յերկերից, գտնվում եր նրա տրամադրության տակ: Նրա հայրը, վոր չեր կարողացել վոչինչ, բացի կաթառելագործված խոհաբարուհուց, չեր կարող դրքեր ընտրելիս ոգնել նրան, և Մաշան քրքրելով ամեն տեսակ գրվածքները, բնականաբար կանգ առնում ուսմանների վրա: Այսպէս ավարտեց նա իր դաստիարակութիւնը, վոր սկսվել եր մամզել¹⁾ Միմիի զեկավարությամբ: Կիրիլա Պետրովիչը մեծ վստահութիւն ու բարենաճութիւն եր տածում դեպի մամզել Մամին, վորին վերջապէս ստիպված եր կամացուկ ուղարկել ուրիշ կալվածք, յերբ նրանց մտերմության հետեանքները խիստ ակնհայտ դարձան: Մամզել Միմին բավական հաճելի հիշատակ թողեց: Նա բարի աղջիկ եր և յերբեք իչարը չեր գործադրում ալն աղդեցութիւնը, վորն ըստ յերբվուլթին ուներ Կիրիլա Պետրովիչի վրա: Դրանով նա տարբերվում եր մյուս մտերմուհիներից²⁾, վորոնց հաճախակի փոխում եր Կիրիլա Պետրովիչը, թվում եր վոր ինքը՝ Կիրիլա Պետրովիչը նրան մյուսներից ավելի յեր սիրում, և սեպչա տղան, 9 տարեկան մի չարածձի, վոր հիշեցնում եր Միմիի թուխ դիմագծերը, դաստիարակվում եր Կիրիլա Պետրովիչի մոտ և ճանաչվում իրեւ նրա վորդին, թեև բազմաթիվ վոտաբորիկ տղաներ, վորոնք ջրի յերկու կաթիլների պէս նման եյին Կիրիլա Պետրովիչին, վազվզում եյին նրա լուսամուտների տակ և սպասավորների տղաներ եյին համարվում: Կիրիլա Պետրովիչն իր փոքրիկ Մաշայի համար Մոսկվայից հրավիրեց ֆրանսիացի մի

1) Մամզել (ֆրանսերեն) — որիորդ:

2) Մտերմուհիներ — այն կանայք, վորոնց հետ Կիրիլա Պետրովիչն առանձնապէս մոտիկ եր:

ուսուցիչ, վորը Պետրովիչին հասավ այն ժամանակ, յերբ տեղի եյին ունենում մեր նկարագրած դեպքերը:

Կիրիլա Պետրովիչին այս ուսուցիչը դուր յեկավ իր հաճելի արտաքինով և պարզ վարվեցողությամբ: Նա Կիրիլա Պետրովիչին ներկայացրեց իր վկայականներն ու մի նամակ՝ Տրոյեկուրովի ազգականից, վորի մոտ նա 4 տարի տնային դաստիարակ եր յեղել: Կիրիլա Պետրովիչն այդ բոլորը քննեց և դժգոհ մնաց իր ֆրանսիացու միայն յերիտասարդութունից, — վոչ թե այն պատճառով, վոր այդ անհամատեղելի համարեց ուսուցչի դժբախտ կոչմանն այնքան անհրաժեշտ համբերատարության և փորձի հետ, այլ վորովհետև նրա մեջ կասկածներ առաջացան, և նա վորոշեց այդ կասկածներն իսկուշյա բացատրել ուսուցչին: Դրա համար նա հրամայեց իր մոտ կանչել Մաշային. (Կիրիլա Պետրովիչը ֆրանսերեն չէր խոսում, և Մաշան թարգմանիչի դեր եր կատարում):

— Յեկ այստեղ, Մաշա. ասա այդ մուսուլման, վոր ընդունում եմ նրան, միայն պայմանով, վոր չհամարձակվի իմ աղջիկներին հետևից ընկնել, թե չե՛լ յես եդ շան լակոտին... Թարգմանիր, Մաշա:

Մաշան կարմրեց և դիմելով ուսուցչին, ֆրանսերեն ասաց նրան, վոր հաջրը հույս ունի, թե նա կլինի համեստ և վայելուչ վարք կունենա:

Ֆրանսիացին գլուխ տվեց Մաշային ու պատասխանեց, թե հույս ունի հարգանքի արժանանալ, յեթե նույնիսկ նրան մերժվի բարեհաճությունը:

Մաշան բառացի թարգմանեց նրա պատասխանը:

— Լավ, լավ, — ասաց Կիրիլա Պետրովիչը, — նրան վոչ բարենաճութուն ե հարկավոր, վոչ ել հարգանք: Նրա գործն ե հսկել Մաշային, քերականութուն և աշխարհագրութուն սովորեցնել. թարգմանիր:

Մարիա Կիրիլովնան թարգմանելիս մեղմացրեց հոր կոպիտ արտահայտութունները, և Կիրիլա Պետրովիչը ֆրանսիացուն ուղարկեց տան կողքին գտնվող շենքը, վորտեղ նրա համար սենյակ եր հատկացված:

Մաշան վոչ մի ուշադրութուն չդարձրեց յերիտասարդ ֆրանսիացու վրա: Մաշան դաստիարակված եր արիստոկրատական նախապաշարունակներով, և նրա համար ուսուցիչն սպասավորի կամ արհեստավորի պես մի բան եր, իսկ սպասավորը կամ արհես-

տավորը տղամարդ չէր նրա համար: Մաշան չնկատեց և այն սպավորությունը, վոր թողել եր m—r¹⁾ Դեֆորժի վրա, չնկատեց նրա շիտթութունը, նրա հիացմունքը, նրա փոխված ձայնը: Հետո մի քանի որ նա բավական հաճախ հանդիպում եր Դեֆորժին, առանց ավելի մեծ ուշադրության արժանացնելու: Մաշան անսպասելի կերպով նոր զաղափար կազմեց նրա մասին:

Կիրիլա Պետրովիչի բազում սովորաբար պահվում եյին արջի մի քանի ձագեր, վորոնք Պոկրովսկու կալվածատիրոջ գլխավոր զվարճալիքներից մեկն եյին: Յերբ նրանք շատ փոքր եյին, ամեն որ բերվում եյին հյուրասենյակ, վորտեղ Կիրիլա Պետրովիչը ժամերով զբաղվում եր նրանցով, կովեցնում կատունների ու շան լակոտների հետ: Մեծանալով՝ նրանք շղթայակապ եյին պահվում, սպասելով իսկական կռվի: Յերբեմն աղայի տան լուսամուտներին առաջ դուրս եյին բերում գինու դատարկ մի տակառ, վրան մեխեր խփած, և գլորում եյին դեպի արջը՝ Վերջինս հոստոտում եր տակառը, հետո թաթերով կամացուկ շոշափում, վիրավորում թաթերը, բարկանալով, ավելի ուժեղ հրում տակառը և ցափե ավելի յեր սաստկանում: Արջը բոլորովին կատաղում եր, մռնչալով նետվում դեպի տակառը, մինչև վոր խեղճ զազանից հեռացնում եյին նրա ապարդյուն կատաղության առաքան: Պատահում եր, վոր յերկու արջ լծում եյին սայլին, վորի վրա կամ թե ակամա հլուբեր ելին նստեցնում ու սայլը բաց թողնում: Սակայն Կիրիլա Պետրովիչի լավագուշտ կատակը հետևյալն եր:

Սոված արջին փակում եյին դատարկ սենյակում, պարանով կապում պատին ամրացված ողակին: Պարանի յերկարությունը զրեթե հավասար եր լինում սենյակի վողջ տարածության, այնպես վոր միայն հակադիդ անկյունը կաբող եր ապահով լինել սարսափելի զազանի հարձակումից: Սովորաբար վորեւե նորեկ մարդու բերում եյին այդ սենյակի դռան մոտ, անսպասելի կերպով ներս եյին հրում սենյակը, փակում դուռը և դժբախտ զոհին թողնում բրդոտ մենակյացի մոտ: Խեղճ «հյուրը» պատռտոված փեշերով, ճանկռտոված ու արյունվրիկ դարձած, շուտով գտնում եր անվտանգ անկյունը, բայց ստիպված եր լինում յերբեմն ամբողջ յերեք ժամ կպչել պատին և տեսնել, թե ինչպես իրենից յերկու քայլի վրա կատաղած զազանը

1) M—r (կրճատված ֆրանսերեն monsieur բառը) — տարն:

մոնչում եր, ցատկոտում. ծառս եր լինում, աշխատում պարանը պոկել և հասնել իր զոհին: Մրանք ելին ոռոս աղայի ազնիվ զվարճալիքները: Ուսուցչի ժամանելուց մի քանի ուր հետո Տրոյեկուրովը հիշեց նրան և մտադրվեց հյուրասիրել արջի սենյակում: Դրա համար մի առավոտ կանչելով նրան, տարավ մութ միջանցքներով. հանկարծ կողքի դուռը բացվեց, լերկու սպասավոր ներս հրեցին Ֆրանսիացուն և դուռը բանալիով փակեցին: Ուշքի գալով, ուսուցչիչը տեսավ կապված արջին: Գազանն սկսեց փրփռալ, հեռվից հոտոտելով իր հյուրին և հանկարծ կանգնելով հետին թաթերի վրա, հարձակում գործեց... Ֆրանսիացին չշփոթվեց, չփախավ, այլ սպասեց հարձակման: Արջը մոտենում եր, Դեֆորժը գրպանից հանեց փոքրիկ պիստոլը, ուղղեց սոված գազանի ախանջին ու կրակեց: Արջը գլորվեց, Հավաքվեցին բոլորը, դուռը բացվեց, Կիրիլա Պետրովիչը ներս մտավ, դարձանալով իր կատակի վերջավորության վրա:

Կիրիլա Պետրովիչն անպայման բացատրություն եր ուղում, թե Դեֆորժին ճիշտ ե նախազգուշացրել կատակի մասին, վորը ծրագրված եր նրա համար, կամ ինչո՞ւ նրա գրպանում լցված պիստոլ ե յեղել: Նա մարդ ուղարկեց Մաշային կանչելու: Վերջինս յեկավ և հոր հարցերը թարգմանեց Ֆրանսիացուն:

— Յես արջի մասին չեմ լսել,— պատասխանեց Դեֆորժը,— սակայն մոտս միշտ պիստոլ եմ պահում, վորովհետեւ մտադիր չեմ վիրավորանք կրել, վորի համար իմ կոչումը թույլ չի տալիս բավարարություն պահանջել:

Մաշան ապշած նայեց Դեֆորժին և թարգմանեց նրա խոսքերը: Կիրիլա Պետրովիչը վոչինչ չպատասխանեց, հրամայեց դուրս բերել արջին և քերթել նրա կաշին: Հետո դարձավ դեպի սպասավորները և ասաց.— ա՛յ քեզ քաջ մարդ, չվախեցավ, աստված վկա չվախեցավ: Այդ բոլորից սկսած նա սիրեց Դեֆորժին ու ել չեւ մտածում նրան փոքձել:

Այս դեպքն ավելի մեծ տպավորություն թողեց Մարիա Կիրիլովնայի վրա: Նրա յերեակայությունը բորբոքվեց: Նա տեսնում եր սատկած արջին և Դեֆորժին, վորը հանգիստ կանգնած եր արջի մոտ և հանգիստ խոսում եր իր,— Մաշայի հետ: Նա տեսավ, վոր քաջությունն ու հպարտ ինքնասիրությունը բացառապես մեկ դասի չեն պատկանում, և այդ ժամանակից ըսկսած հարգանք տածեց դեպի ուսուցչին ու ժամ առ ժամ ավելի ուշադիր դարձավ նրա նկատմամբ: Յերկուսի միջև վորոշ

հարաբերություններ ստեծվեցին: Մաշան ուներ հիանալի ձայն և յերաժշտական մեծ ունակություններ: Դեֆորժը հանձն առավ դասեր տալ նրան: Այս բոլորից հետո ընթերցողի համար դժվար չե հասկանալ, վոր Մաշան սիրահարվեց նրա վրա, նույնիսկ ինքն իրեն չխոստովանելով այդ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԳԼՈՒԽ IX

Տոնի նախորդեյին սկսեցին ժամանել հյուրերը: Վոմանք կանգ եյին առնում կալվածատիրոջ տանը և նրան կից շենքերում, մյուսները՝ գործակատարի մոտ, վոմանք քահանայի և վոմանք ել ունեւոր զոսողացիներին մոտ: Ախոռները լիքն եյին յեկվորների ձիերով, բակերն ու մարագները—զանազան կառքերով: Առաւօտեայն ժամը 9-ին զոզանշեցին պատարագի զանգերը: Բոլորն շտապեցին դեպի նոր, քարաշեն յեկեղեցին, վոր կառուցել եր Կիրիլա Պետրովիչը, և ամեն տարի զարդարում եր նվերներով: Պատվավոր բարեպաշտների աջնախիսի բազմութուն հավաքվեց, վոր հասարակ գյուղացիների համար յեկեղեցում տեղ չեղավ, նրանք կանգնեցին գավթում ու պատերի մոտ: Պատարագը չեր սկսվում—սպասում եյին Կիրիլա Պետրովիչին: Նա ժամանեց կառքով, վորին վեց ձի յեր լծած, և Մարիա Կիրիլովնայի ուղեկցութեամբ հանդիսավոր կերպով գնաց իր տեղը: Տղամարդկանց ու կանանց հայացքներն ուղղվեցին Մաշայի վրա: Առաջիններն զմայլվում եյին նրա գեղեցկութեամբ, յերկրորդներն ուշադրութեամբ դիտում եյին նրա հագուստը: Պատարագն սկսվեց, տնային յերգիչները յերգում եյին նախաբանում, Կիրիլա Պետրովիչն ինքն ել եր յերգում, աղոթում եր առանց աջ ու ձախ նայելու, և հպարտ խոնարհութեամբ ծունր չոքեց յերբ տիրացուն բարձրաձայն հիշեց սույն տառեր կառուցողին:

Պատարագը վերջացավ: Կիրիլա Պետրովիչն առաջինը մոտեցավ խաչին: Բոլորը հետևեցին նրան, հետո մոտեցան հարեւանները՝ նրան հարգանք մատուցելու: Կանայք շրջապատեցին Մաշային: Կիրիլա Պետրովիչը, յեկեղեցուց դուրս գալով, բոլորին ճաշի հրավիրեց իր մոտ, կառք նստեց ու գնաց տուն: Բոլորը գնացին նրա յետևից: Սենյակները լցվում եյին հյուրերով:

Ամեն բոլե նոր մարդիկ եյին մտնում ու հաղիվ հասնում ձինչև տանտերը: Տիկիները նստեցին ծանր ու կիսաշրջանաձև, նրանք հազնվել եյին ուշացած մոզայով—մաշված, բայց թանգադին զգեստներ, բոլորը զարդարված եյին մարգարիտներով ու ադամանդներով, տղամարդիկ խմբվում եյին խավյարի ու ողու սեղանների շուրջը, աղմկալից ու բաղամձայն խոսում եյին իրար հետ: Դահլիճում սեղան եյին պատրաստում 80 հոգու համար: Սպասավորներն իրար եյին անցել, շարում եյին շշերն ու գրաֆինները և հարդարում սփռոցները: Վերջապես, ավագ սպասավորն աղաբարեց՝ սեղանը պատրաստ ե, և Կիրիլա Պետրովիչն առաջինը գնաց սեղան նստելու, նրանից հետո շարժվեցին տիկիներն ու ծանր բաղմեցին իրենց տեղերում, պահպանելով ավագութեան վորոշ կարգ, որիորդներն իրար խառնվեցին ինչպես այծիկների յերկշտ խումբ և տեղ բռնեցին իրար մոտ: Տղամարդիկ նստեցին նրանց դիմաց: Ուսուցիչը նստեց սեղանի ծայրին, փոքրիկ Մաշայի մոտ:

Սպասավորներն սկսեցին ափսեները մատուցել ըստ առախճանների, թյուրիմացութեան դեպքում ղեկավարվելով Լաֆատերի յնթադրութեաններով¹⁾ և համարյա յերբեք չեյին սխալվում: Ափսեների ու գլալների գնացը միախառնվում եր հյուրերի աղմկալից խոսակցութեաններին, Կիրիլա Պետրովիչը հրճվանքով դիտում եր իր սեղանը և լիասիրտ վայելում աղ ու հացի տեղ մարդու յերջանկութունը: Այդ ժամանակ բակը մտավ մի կառք, վորին վեց ձի յեր լծած:

— Այդ թիւ ե,—հարցրեց տանտերը:

— Անտոն Պաֆնուտիչը,—պատասխանեցին մի քանիսը:

Դուռը բացվեց և ներս մտավ Անտոն Պաֆնուտիչ Սպիցինը,—50 տարեկան մի տղամարդ, կլոր ու չեչոտ դեմքով, յեռակի ծալված կզակով: Նա բարեկեց, ժպտաց և արդեն պատրաստվում եր ներողութուն խնդրել:

— Այստեղ աման բերեք,—գոչեց Կիրիլա Պետրովիչը,—համեցեք, համեցեք, Անտոն Պաֆնուտիչ, նստի՛ր ու աստ միղ,

¹⁾ Լաֆատեր Իոհաննիս (1741—1801 թ. թ.): Տյուրքիի քաղաքից եր (Եվեյ-ցարիա) «Ֆիզիոգնոմիկա» գրքի հեղինակը (1772—78 թ. թ.): Նա ասում եր վոր մարդու բնավորութունն արտահայտվում ե նրա կերպարանքի, մանավանդ դեմքի վրա: Այսպիսով Լաֆատերի յնթադրութեաններն այստեղ նշանակում են սպասավորների ձգտումը՝ հյուրերի դեմքից ճանաչել նրանց հարաբերական դրութիւնը, առախճանը, կոչումը, հարստութիւնը և այլն:

այս ի՞նչ ե նշանակում: Պատարագին չեկար, ճաշին ել ուշացար: Այդ քեզ չի սագում, դու թե բարեպաշտ ես և թե սիրում ես ուտել:

— Ներողություն, — պատասխանեց Անտոն Պաֆնուտյիչը, անձեռոցը կապելով սրսեռագուշն բաճկոնի կոճկանքին, — ներողություն, ճանապարհովեցի ու դեռ տասը վերստ ել չեցի անցել, հանկարծ առջևի անիվի շինը յերկու կես յեղավ: Ի՞նչ արած: Բարեբախտաբար գյուղը մոտիկ եր: Մինչև հասանք աշտեղ, մինչև դարբին գտանք և մի կերպ անիվը սարքեցինք. անցավ ուղիղ յերեք ժամ, ուրիշ հնար չկար: Կարձ ճանապարհով — Կիստենեկայի անտառով դալ յես չհամարձակվեցի, այլ յեկա շուրջանակի ճանապարհով:

— Ո՛հո՛, — ընդհատեց Կիրիլա Պետրովիչը, — յերևում ե, վոր դու այնքան ել քաջ չես: Ինչի՞ց ես վախենում:

— Վճնց թե ինչից եմ վախենում, հայր Կիրիլա Պետրովիչ, հապա Դուբրովսկի՞ն: Մեկ ել տեսար ընկար նրա ճանկը. նա չի վրեպի, վոչ վոքի չի խնայի, իսկ ինձնից հավանորեն յերկու կաշի կքերթի:

— Ինչո՞ւ հատկապես քեզանից, բարեկամս:

— Վճնց թե ինչու, հայր Կիրիլա Պետրովիչ, — հանգուցյալ Անդրեյ Գավրիլովիչի դատի համար: Յես չեյի՞ միթե, վոր ձեզ հաճույք պատճառելու, այսինքն խղճով ու արդարացի վարվելու համար վկայեցի, թե Դուբրովսկիները Կիստենեկային տիրում են առանց վորևե իրավունքի, միայն ձեր ներողամտության շնորհիվ: Հանգուցյալը (թող նա յերկնային արքայության արժանանա) խոստացավ ինձնից հաշիվ պահանջել, իսկ սղան անշուշտ կկատարի հոր խոսքը: Մինչև հիմա փրկել ե աստված. ինձանից ընդամենը մի շտեմարան ես թալանել. մեկ ել տեսար քթները խոթեցին իմ ազարակը:

— Իսկ ազարակում լավ գործ կտեսնեն, — ասաց Կիրիլա Պետրովիչը, — յես կարծում եմ, վոր կարմիր արկղը լիփ-լիցուն ե:

— Վճրտեղից, հայր Կիրիլա Պետրովիչ, լիքն եր, իսկ հիմա դատարկվել ե բոլորովին:

— Հերիք ե սուտ ասես, Անտոն Պաֆնուտյիչ: Քեզ լավ ենք ճանաչում: Բա ի՞նչ ես անում փողերը: Տանը խողովարի յես ապրում, չես ընդունում վոչ վոքի, գյուղացիներիդ կթում ես, փող դիզում, պրծանք-գնաց:

— Դուք ելի բարեհաճում եք կատակել, հայր Կիրիլա

Պետրովիչ, — ժպտալով մրթմրթաց Անտոն Պաֆնուտյիչը, — իսկ մենք, աստված վկա, ավերվել ենք, — և Անտոն Պաֆնուտյիչը ձկնակարկանդակի յուղալի կտորի հետ միասին կերավ տանտիրոջ կատակը:

Կիրիլա Պետրովիչը թողեց նրան և դիմեց գավառական նոր վոստիկանապետին, վոր առաջին անգամ հյուր եր չեկել նրա տունը և նստել սեղանի մյուս ծայրին, ուսուցչի մոտ:

— Հը՛, գոնե դուք կըռնե՞ք Դուբրովսկուն, ալ. վոստիկանապետ:

Գավառական վոստիկանապետը յերկշտ կերպով գլուխ տվեց, ժպտաց, կակաղեց ու վերջապես ասաց.

— Կաշխատենք բռնել, ձերդ գերազանցություն:

— Հը՛մ, «կաշխատենք»: Վաղ՞ուց, վաղ՞ուց եք աշխատում, բայց ոգուտ չկա: Ասենք, ինչո՞ւ բռնել Դուբրովսկուն: Նրա ավագակությունները բարիք են վոստիկանապետերի համար, — ճանապարհորդություններ, քննություններ, կառքեր, իսկ փողը գալիս ե գրպանդ, — ել ինչո՞ւ վորսալ այդ տեսակ բարերարին: Ճշմարիտ չի՞, ալ. վոստիկանապետ:

— Կատարելապես ճշմարիտ ե, ձերդ գերազանցություն, — պատասխանեց բոլորովին շփոթված վոստիկանապետը:

Հյուրերը քահ-քահ ծիծաղեցին:

— Միրում եմ անկեղծ մարդուն, — ասաց Կիրիլա Պետրովիչը, — բայց ափսոս հանգուցյալ վոստիկանապետ Տարաս Ալեքսեյիչը. չեթե նա չայրվեր, այս վայրերն ավելի խաղաղ կլիներին: Իսկ ի՞նչ լուր կա Դուբրովսկու մասին: Վերջին անգամ նրան վորտե՞ղ են տեսել:

— Ինձ մոտ, Կիրիլա Պետրովիչ, — ծվծվաց կանացի մի հաստ ձայն, — անցած յերեքշաբթի որը նա ճաշեց ինձ մոտ...

Բոլոր հայացքները դարձան դեպի Աննա Սավիշնա Գլոբովան, վորը բավական պարզ մի այրի յեր, բոլորից սիրված՝ իր բարի և ուրախ բնավորության համար: Բոլորը պատրաստվեցին հետաքրքրությամբ լսելու նրա պատմածը:

— Մի չերեք շաբաթ առաջ յես փող տվի դորձակատարիս և ուղարկեցի փոստ, վորպեսզի փոխադրի Վանյուշիս: Վորդուս չերես չեմ տալիս, չեմ ել կարող յերես տալ, չեթե նույնիսկ ցանկանամ: Բայց դուք ինքներդ բարեհաճում եք գիտենալ. գվարդիայի սպան պետք ե արժանավայել ապրի, և յես ինչքան կարող եմ, Վանյուշայիս բաժին եմ հանում իմ փոքրիկ յեկա-

մուտներին: Յեւ անա նրան ուղարկեցի 2000 ուռլի, թեև Դուբրովնիկին մտքիցս չէր հեռանում: Մտածեցի, վոր քաղաքը մոտիկ է, ընդամենը 7 վերստ, մի կերպ կանցնի: Յերեկոյան ինչ եմ տեսնում. գործակատարս յետ ե գալիս վոտով, գունատ, շորերը պատառտոված: Յես ուղղակի հառաչեցի—այդ ինչ է, քեզ ինչ է պատահել: Նա ասում է.—մայր, Աննա Սավիշնա, ավազակներն ինձ կողոպտեցին, քիչ մնաց սպանելին: Դուբրովնիկին ինքն այնտեղ էր, ուզում էր ինձ կախել, բայց խղճաց և բաց թողեց: Ամեն ինչ տարավ, թե ձին և թե կառքը: Յես մեռածի պես եյի. ով իմ յերկնային թագավոր, հապա ինչ պիտի անի իմ Վանյուշան: Դե ինչ արած, վորդուս նամակ գրեցի, պատմեցի բոլորը և առանց մի գետշ փողի որհնությունս ուղարկեցի:

Անցավ մի շաբաթ, յերկու շաբաթ: Հանկարծ մեր բակն ե մտնում մի կառք: Ինչ-վոր գեներալ խնդրում է տեսնվել ինձ հետ: Համեցեք եմ ասում: Ներս է մտնում 35 տարեկան մի մարդ թխադեմ, սևահեր, բեխերով ու միրուքով, իսկ և իսկ Կուլչնե¹⁾: Ասում է, թե հանգուցյալ ամուսնուս, Իվան Անդրեևիչի ընկերն է, միասին են ծառայել: Անցնում էր իմ տան մոտից և չէր կարող չտեսնել նրա այրիին, գիտենալով, վոր յես այնտեղ եմ ապրում: Յես նրան հյուրասիրեցի ինչով կարող եյի, խոսեցինք դեսից-դենից, վերջապես՝ Դուբրովսկուց: Յես նրան պատմեցի իմ վիշտը: Գեներալս նոթերը կիտեց: —Այդ տարորինակ է,—ասաց նա,—յես լսել եմ, վոր Դուբրովսկին հարձակվում է վոչ թե ամեն մեկի, այլ հայտնի հարուստների վրա, բայց հենց նրանց ել բաժին է թողնում, ամբողջովին չի կողոպտում: Սպանությունների համար վոչ վոք նրան չի մեղադրում, արդյոք այստեղ չկա վորեւ խաբեբայություն: Հրամայեցեք կանչել ձեր գործակատարին: Գործակատարին կանչեցին ու նա յիկավ: Գեներալն տեսավ թե չե, տեղն ու տեղը քարացավ: «Հապա, բարեկամ, պատմիր տեսնենք Դուբրովսկին քեզ վոնց թալանեց և վոնց էր ուզում քեզ կախել»: Գործակատարս դողողաց ու ընկավ գեներալի վոտները: —Հայր, մեղավոր եմ, մեղք գործեցի, սուտ ասի: —Վոր այդպես է,—պատասխանեց գեներալը,—բարեհաճիր պատմել տիկնոջը, թե այդ ինչպես պատահեց, իսկ յես կլսեմ: Գործակատարը չէր կարողանում ուշքի գալ: «Դեհ,—

¹⁾ Կուլչնե Յակով Պետրովիչը (1763—1812 թ. թ.) առաջինը եր, վորը հայտնի դարձավ առաջին հայտնաբերած ժամանակ (1808—1809 թ. թ.):

շարունակում եր գեներալը,—պատմիր,—դու վորտեղ ես հանգիպել Դուբրովսկուն: —Յերկու սոճիների մոտ, հայր, յերկու սոճիների մոտ: —«Նա քեզ ինչ ասաց»: —Նա հարցրեց՝ ում սպասավորն ես, հրե ես գնում, ինչո՞ւ: —«Լավ, հետո»: —Հետո պահանջեց նամակներն ու փողը: —«Հետո»: —Նամակներն ու փողը յես տվի նրան: —«Իսկ նա, հրե, նա»: —Հայր, ներեցե՞ք: —«Նա ինչ արեց»: —Նա փողն ու նամակը վերադարձրեց ինձ ու ասաց՝ դնաս բարով, տար փոստը: —«Հետո»: —Հայր, մեղավոր եմ: —«Յես քո դատաստանը կանեմ, բարեկամ,—սպառնալիքս ասաց գեներալը,—իսկ դուք, տիկին, հրամայեցեք խուզարկել այս սրիկայի սնդուկը, իրեն ել հանձնեցեք ինձ, յես նրան մի լավ դաս կտամ: Իմացեք, վոր Դուբրովսկին ինքը գլխադրիայի սպա յե յեղել, նա չի ցանկանա նեղել ընկերոջը: Յես գլխի եյի ընկնում, թե ով է նորին գերագնացությունը, ել կարիք չկար յերկար խոսելու: Կառապանները գործակատարին կապեցին կառքին: Փողերը գտնվեցին: Գեներալն ինձ մոտ ճաշեց, ապա իսկույն մեկնեց, իր հետ տանելով գործակատարին: Հետևյալ որը գործակատարիս գտան անտառում, կաղնի ծառին կապած ու մինչև վերջին լաթը պոկված:

Բոլորը, մանավանդ որիորդները, լուռ լսում եյին Աննա Սավիշնայի պատմածը: Որիորդներից շատերը ծածուկ համակրում եյին Դուբրովսկուն, համարելով նրան ուժանի հերոս,—մանավանդ Մարիա Կիրիլովնան, մոլի ցնորամիտ այդ աղջիկը, վոր սնվել էր Ռազկլիֆի¹⁾ խորհրդավոր սարսափներով:

— Յեվ դու կարծում ես, Աննա Սավիշնա, վոր քեզ մոտ յեղել է ինքը, Դուբրովսկին,—հարցրեց Կիրիլա Պետրովիչը,—չատ ու շատ սխալվել ես: Չգիտեմ թե ով է քեզ մոտ հյուր յեղել, միայն թե վոչ Դուբրովսկին:

— Վհնց թե Դուբրովսկին չի յեղել, հայր, նրանից բացի ել ով դուքս կգա ճանապարհ, անցորդներին կկանգնեցնի ու կխուզարկի:

— Չգիտեմ, միայն թե այդ Դուբրովսկին չի յեղել: Յես նրան հիշում եմ, յերբ դեռ յերեսա յեր, չգիտեմ նրա մազերը

¹⁾ Ռազկլիֆ (Ռազկլիֆ) Աննա (1764—1823)—անգլիացի կին-գրող է, գրել է արկածային վեպեր, վորոնք լի յեն գաղտնիքներով ու սարսափներով քողարկված չարագործություններով, տեսիլներով, խորհրդավոր ձեռագրերով և այլն: Այսպեղ Պուշկինը նկատի ունի Ռազկլիֆի վեպերի հենց այդ առանձնահատկությունը:

սեպտեմբերին, թե ինչ, իսկ այն ժամանակ նա գանգրասեր, շիկա-
մազ տղա յեր: Հաստատ գիտեմ, վոր Դուբրովսկին հինգ տարով
մեծ ե իմ Մաշայից, ուրեմն հիմա նա վոչ թե 35, այլ մոտ 23
տարեկան ե:

— Ճիշտ այդպես ե, ձերդ գերագանցություն, — ասաց վոս-
տիկանապետը, — իմ գրպանում կան վաղիմիք Դուբրովսկու
նշանները: Դրանք ասում են, վոր նա 23 տարեկան ե:

— Հը՛ — ասաց Կիրիլա Պետրովիչը, — կարգացեք, իսկ մենք
կլսենք: Վատ չի լինի, վոր մենք իմանանք նրա նշանները:
Գուցե հանդիպի ու ել չարծնի մեթ ձեռից:

Վոստիկանապետը գրպանից հանեց բավականաչափ խզրզած
մի թուղթ, ծանրակշիռ կերպով բացեց և սկսեց կարդալ յերգի
առողջանությամբ:

«Վաղիմիք Դուբրովսկու նշանները, վորոնք կազմված են
նրա նախկին սպասավորների պատմածների հիման վրա:

«22 տարեկան, միջահասակ, դեմքը մաքուր, միտումը խու-
զում ե, աչքերը շագանակագույն, մազերը շեկ, քիթը ուղիղ:
Առանձին նշաններ. այդպիսիք չկան»:

— Միայն այդքան, — հարցրեց Կիրիլա Պետրովիչը:

— Այսքան, — պատասխանեց վոստիկանապետը, ծալելով
թուղթը:

— Շնորհավորում եմ, պ. վոստիկանապետ: Ա՛մա թուղթ ե
հա՛: Այդ նշաններով ձեզ համար դժվար չի լինի գտնել Դուբ-
րովսկուն: Լավ, քիչ են այնպիսիները, վորոնք միջահասակ են,
շեկ մազերով, ուղիղ քիթով, շագանակագույն աչքերով: Գրադ
կգամ, վոր յերեք ժամ կխոսես հենց Դուբրովսկու հետ, և գլխի
չես ընկնի, թե ում հետ գործ ունես: Խոսք չկա. խելացի՛ ծա-
ռայողներ եք:

Գավառական վոստիկանապետը շփոթվեց, թուղթը դրեց
գրպանը և լռելացի սկսեց ուտել կաղամբով համեմած սաղը:
Մինչ այս, մինչ այն, սպասավորներն արդեն մի քանի անգամ
մոտեցան հյուրերին ու լցրին նրանց բաժակները: (Լեոնային¹⁾
և ցիմլյանսկու²⁾ գինու մի քանի շշեր բացվեցին և հաճույքով ըն-
դունվեցին իրեն շամպայն, դեմքերն սկսեցին կարմրել, խոսակցու-
թյունները դառնում եյին աղմկալից, անկապ և ուրախ:

1) Լեոնային գինի — Գովկասյան գինի:

2) Ցիմլյանսկու գինի կարմիր գինի յե, արտադրվում ե Ազով-Սև-ծովյան
յերկրամասի Դոնի մարզի համանուն գյուղում:

— Չե՛, — շարունակեց Կիրիլա Պետրովիչը, — ել մենք չենք
տեսնի այնպիսի վոստիկանապետ, ինչպես հանգուցյալ Տարաս
Ալեքսեևիչն եր: Նա չեր վերադառնալ, բերան բաց չեր: Ափսոս վոր
այրվեց, թե չե՛ ամբողջ ավազակախմբից վոչ մեկը չեր պրծնի
նրա ձեռքից: Նա բոլորին ել կրճեներ: Ինքը՛ Դուբրովսկին ել
չեր աղատվի, նրա տալիք փրկանքն ել չեր ոգնի: Տարաս Ալեք-
սեևիչը նրանից փողը վերցնելը կվերցնե, բայց նրան ել բաց
չեր թողնի: Այդպես եր հանգուցյալի սովորությունը: Ի՞նչ արած,
բանից չերեում ե, վոր յես պիտի անցնեմ այդ դործին, մեր
տանեցիների հետ դնամ ավազակների դեմ: Առաջին հերթին
կտանեմ մի քսան հոգի. նրանք անտառը կմաքրեն զողորից: Վախ-
կոտ մարդիկ չեն, ամեն մեկը միայնակ արջի դեմ ե դնում:
Ավազակներից յետ չի փախչի:

— Ձեր արջն առնող ե, հայր Կիրիլա Պետրովիչ, — ասաց
Անտոն Պաֆնուտյիչը, աչս խոսքերի վրա հիշելով իրեն ծանոթ
արջին և մի քանի կատակներ, վորոնց մի ժամանակ ինքն ել
եր գոհ գնացել:

— Միշան¹⁾ գնաց մեղանից, — պատասխանեց Կիրիլա Պետ-
րովիչը, — մեռավ պանծալի մահով, ընկավ թշնամու ձեռքից:
Հրեն նրան հաղթողը, — Կիրիլա Պետրովիչը ցույց տվեց Դեֆոր-
ժին: Լավ նայիր իմ Ֆրանսիացու կերպարանքին: Նա քեզ հա-
մար վրեժ լուծեց, հիշում ես քեզ հետ պատահած դեպքը:

— Վե՛նց չհիշեմ, — ասաց Անտոն Պաֆնուտյիչը գլուխը քո-
րելով, — շատ լավ եմ հիշում: Ուրեմն Միշան մեռավ, ափսոս,
հազար ափսոս, ի՞նչ զվարճալին եր, ինչքան խելացի: Նրա պես
արջ չես գտնի: Ինչո՞ւ մոռցո՞ւն²⁾ նրան սպանեց:

Կիրիլա Պետրովիչը մեծ բավականությամբ սկսեց պատմել
իր Ֆրանսիացու քաջագործությունը, հարկավ, նա ընդունակ եր
պարծենալու այն ամենով, ինչ վոր շրջապատում եր նրան:
Հյուրերն ուշադրությամբ չսում եյին Միշայի մահվան պատմու-
թյունը և զարմացած նայում Դեֆորժին, վորն ուշադրություն
չզարձնելով իր քաջագործության վերաբերող խոսքերին, հան-
գիստ նստած եր իր տեղում և բարոյական նկատողություններ
եր անում իր կայտառ սանին:

Յերեք ժամ տևող ճաշը վերջացավ: Տանտերն անձեռոցիկը

1) Միշան — արջ:

2) Մոռցո՞ւն (Ֆրանսերեն) — պարոն:

դրեց սեղանին: Բոլորը վեր կացան ու գնացին հյուրասենյակը, վորտեղ նրանց սպասում էր սուրճը, թղթախաղը, և վորտեղ նրանք պիտի շարունակեյին սեղանատանն այնքան լավ սկսած քեֆը:

ԳԼՈՒԽ X

Յերեկոյան ժամը մոտ վեցին մի քանի հյուրեր ուղղով եյին գնալ, բայց տանտերը, վոր տաքացել էր փունջ խմելուց, հրամայեց փակել դարպասները և հայտարարեց, թե մինչև առավոտ վոչ վոքի դուրս չի թողնի: Շուտով թնդաց յերաժշտությունը, դահլիճի դռները բացվեցին և սկսվեց պարահանդեսը: Տանտերն ու իր մոտիկները նստել եյին անկյունում, քամելով բաժակ բաժակի յետևից և ղիտելով ուրախ յերիտասարդությանը: Պառաֆները թուղթ եյին խաղում: Կավալերներն ավելի քիչ եյին, քան կանայք, ինչպես ամեն տեղ, ուր չի գտնվում ուլաններ¹⁾ վորեւե բրիգադ: Բոլոր տղամարդիկ, վորոնք դրա համար պետքական եյին, ոգտագործվեցին: Ուսուցիչը բոլորի մեջ աչքի յեր ընկնում, ամենից շատ նա յեր պարում, բոլոր որիորդները նրան հրավիրում եյին պարելու և գտնում եյին, վոր նրա հետ շատ լավ է Վալս պարելը: Նա մի քանի անգամ պտտվեց Մարիա Կիրիլովնայի հետ, և որիորդները հեզնանքով խոսում եյին նրանց մասին: Վերջապես, գիշերվա կեսին հոգնած տանտերը պարերը դադարեցրեց, հրամայեց ընթրիք տալ, իսկ ինքը գնաց քնելու:

Կիրիլա Պետրովիչի բացակայությամբ բոլորն իրենց ավելի ազատ և ուրախ զգացին: Կավալերները հանդգնեցին նստել տիկինների կողքին: Աղջիկները ծիծաղում եյին ու փսփսում իրենց հարևանների հետ: Տիկինները բարձր խոսում եյին սեղանի մյուս կողմում գտնվողների հետ: Տղամարդիկ խմում եյին, վիճում և քահ-քահ ծիծաղում: Մի խոսքով՝ ընթրիքը շատ ուրախ անցավ և խիստ հաճելի հուշեր թողեց:

Միայն մի մարդ չէր մասնակցում ընդհանուր ուրախության,— Անտոն Պաֆնուտյիչը լուռ ու մռայլ նստած էր իր տեղում, ուտում էր կարծես դժկամ և չափազանց անհանգիստ էր յերևում: Ավազակների վերաբերյալ խոսակցությունները փոթոր-

1) Ուլաններ—ցարական թեթև հեծելազորի մի տեսակը:

վել եյին նրա յերեկայնությունը: Մենք շուտով կտեսնենք, վոր նա բավականաչափ հիմք ունի վախենալու:

Անտոն Պաֆնուտյիչը, վոր ասածով յերդվում էր, թե իր կարմիր արկղիկը դատարկ է, չէր ստում, մեղք չէր գործում,— կարմիր արկղիկն իրոք վոր դատարկ էր: Մի ժամանակ այնտեղ պահվող փողերը նա դրեց կաշվե տոպրակի մեջ, վորը պահում էր կրծքի վրա, շապկի տակ: Միայն այս նախազգուշությամբ էր, վոր նա մեղմեց բոլորի նկատմամբ իր ունեցած անվստահությունն ու մշտական յերկյուղը: Ստիպված լինելով գիշերել ուրիշ տանը, նա վախենում էր, թե իրեն կտեղավորեն վորեւե առանձնակի սենյակում, ուր հեշտությամբ կարող են գողեր մտնել: Նա հուսալի ընկեր էր փնտռում և վերջապես, ընտրեց Դեֆորժին: Այս ընտրությանը նպաստեցին Դեֆորժի արտաքինը, վոր ուժի նշաններ ունի, մանավանդ նրա ցույց տված քաջությունն արջի նկատմամբ, վորին խեղճ Անտոն Պաֆնուտյիչն առանց ցնցվելու չէր կարող հիշել: Յերե սեղանից վեր կացան, Անտոն Պաֆնուտյիչն սկսեց պտտվել յերիտասարդ ֆրանսիացու մոտ, ղիտմամբ հապալ և, իվերջո, գիմեց նրան.—

— Ը՛մ, ը՛մ, մոույո, չի՞ կարելի արդյոք գիշերել ձեր խցիկում, վորովհետև գիտե՞ք ինչ...

— Que désire monsieur¹⁾—հարցրեց Դեֆորժը, քաղաքավարի գլուխ տալով նրան:

— Ափսոս, մոույո, վոր ուսերեն գեռ չես սովորել: Ժե վե, մուա, չե վու կուշե²⁾, հասկանում ես, թե չե:

— Monsieur, tres volontiers,—պատասխանեց Դեֆորժը,— veuillez donner des ordres en conséquence³⁾:

Անտոն Պաֆնուտյիչը, խիստ բավական լինելով իր ֆրանսերեն գիտենալուց, իսկույն գնաց կարգադրություն անելու:

Հյուրերն սկսեցին մեկ մեկու հրաժեշտ տալ, և ամեն մեկը գնաց իրեն հատկացված սենյակը: Անտոն Պաֆնուտյիչն ուսուցչի հետ գնաց տան կից շենքը: Մութ գիշեր էր: Դեֆորժը լապտերով լուսավորում էր ճանապարհը, Անտոն Պաֆնուտյիչը բավական զվարթ հետևում էր նրան, յերբեմն կրծքին սեղմելով

1) Que désire monsieur—ինչ էք ցանկանում պարոն:

2) Ժե վե, մուա, չե վե կուշե, (ֆրանսերեն)—յես ուզում եմ ձեզ մոտ քնել:

3) Monsieur, tres volontiers. veuillez donner des ordres en conséquence—ձե՛ք ուրախությամբ, պարոն, բարի յեղեք կարգադրություն անել:

Թագադրած գումարը, վորպեսզի հավաստիանար, թե իր մոտ են փողերը:

Հասան տան կից շենքը, ուսուցիչը մոմը վառեց և յերկուսն էլ սկսեցին հանվել: Մինչ այդ՝ Անտոն Պաֆնուտյիչը մի փոքր քայլեց սենյակում, դիտելով կողպեքն ու լուսամուտները և կասկածամտութեամբ որորելով գլուխը: Դուռը փակվում էր մի սողնակով, լուսամուտները կրկնակի շրջանակներ դեռ չուներին: Նա փորձեց այդ մասին դանգառովել Դեֆորժին, բայց իր գիտեցած ֆրանսերեն լեզուն շատ սահմանափակ էր այդպիսի բարդ սացատրութեան համար, ֆրանսիացին նրան չհասկացավ և Անտոն Պաֆնուտյիչն ստիպված էր թողնել իր դանգառները: Նրանց անկողինները դեմուդեմ էին, յերկուսն էլ պառկեցին, և ուսուցիչը հանգցրեց մոմը:

— Պուրկուա վու տուշե, պուրկուա վու տուշե¹⁾, — Գոչեց Անտոն Պաֆնուտյիչը՝ Ռուսական тучу բայը մի կերպ խոնարհելով ֆրանսիական ձևով, — լիս խավարում դորմիր²⁾, չեմ կարող:

Դեֆորժը չհասկացավ նրա բացականչութունը և բարեգիշեր մաղթեց նրան:

— Այ դու անիծված, անորեն, — մրթմրթաց Սպիցինը, փաթաթվելով վերմակով, — ինչի՞դ եր պետք հանգցնել մոմը: Չե՞ վոր քեզ համար ել ե վատ: Յես առանց լուսի չեմ կարող քնել: — Մուսյո, մուսյո, — շարունակեց նա, — Ժե վե ավել վու պարլե³⁾: — Սակայն ֆրանսիացին չպատասխանեց և շուտով սկսեց խռմիալ:

«Սոմիում ե ֆրանսիացի հայվանը, — մտածեց Անտոն Պաֆնուտյիչը, — իսկ յես աչքերս ել չեմ ուզում փակել: Մեկ ել տեսար դողերը ներս մտան դռնից կամ լուսամուտից և այդ անասունին թնդանոթի վորոտով ել չես դարձեցնի»:

— Մուսյո, այ մուսյո, սատանան քեզ տանի:

Անտոն Պաֆնուտյիչը լռեց, — հոգնածութունն ու գինին հետզհետե հաղթահարեցին նրա լերկյուղը: Նա սկսեց ննջել և շուտով խոր քուն մտավ:

1) Պուրկուա վու (ֆրանսերեն) — ինչո՞ւ դուք, եսուե ուսական «ТУШИТЬ» (հանգցնել) բայը, վորը վախեցած Անտոն Պաֆնուտյիչն աղճատել է ֆրանսերեն ձևով:

2) Դորմիր (ֆրանսերեն) — քնել:

3) Ժե վե ավել վու պարլե (ֆրանսերեն) — յես ուզում եմ ձեզ հետ խոսել:

Նա պետք է արթնանար տարորինակ կերպով: Քնի մեջ գգում էր, վոր մեկը կամացուկ քաշում է իր շապկի ոձիքից: Անտոն Պաֆնուտյիչն աչքերը բացեց և աշնանային առավոտվա դժգոլյն լուսի տակ իր առջ տեսավ Դեֆորժին: Ֆրանսիացին մի ձեռքում բռնել էր գրպանի պիստոլը, իսկ մյուս ձեռքով հանում էր նվիրական գումարը: Անտոն Պաֆնուտյիչը քարացավ: — Կես կե սե, մուսյո, կես կե սե¹⁾, — արտասանեց նա դողդոջուն ձայնով:

— Սոս, լուե, — պատասխանեց ուսուցիչը մաքուր ուսերենով, — լուե, կամ դուք կորած եք: Յես Դուբրովսկին եմ:

ԳԼՈՒԽ XI

Հիմա խնդրում ենք ընթերցողին թույլ տալ, վոր մեր վիպակի վերջին դեպքը բացատրենք նախընթաց հանգամանքներով, վոր մենք դեռ չենք պատմել:

** Կայարանում, կայարանապետի (վորին մենք հիշել ենք) տանը, անկյունում նստած էր մի ճանապարհորդ: Նրա համեստ արտաքինն ու անդորրութունը ցույց եյին տալիս, վոր նա ռազմիչն է²⁾ կամ ոտարերկրացի, այսինքն մի մարդ, վորը ձայն չունի փոստային կայարանում³⁾: Նրա կառքը կանգնած էր բակում, սպասելով անիմները յուղելուն: Կառքի մեջ կար մի փոքրիկ պայուսակ, — վոչ բավականաչափ կարողութեան պերճախոս ապացույցը: Ճանապարհորդը վոչ թեյ պահանջեց, վոչ սուրճ, լուսամուտից դուրս էր նայում ու սուլում, մի բան, վոր բոլո-

1) Կես կե սե, մուսյո, կես կե սե (ֆրանսերեն) — այս ի՞նչ է նշանակում, պարոն, այս ի՞նչ է:

2) Ռազմիչին — «զանազան դիրք և աստիճան ունեցող մարդիկ» — XIX դարի 40-ական և 60-ական թվականներին տառաջացած հասարակական միջնաշերտ բաղկացած մանր աստիճանավորութեան, սորին հողերականութեան, վաճառականութեան, քաղցնիութեան վտարանդիները: Դեպի ճորտատիրական կարգերը թշնամաբար արամադրված ռազմիչները հանդիսանում էին այն ժամանակվա հասարակութեան առաջավոր, չիբերալ-դեմոկրատական խավը, իսկ ռազմիչների առանձին, առավել առաջավոր ներկայացուցիչները նույնիսկ հեղափոխական ու սոցիալիստական գաղափարներ էին քարոզում:

3) Ձայն չունի փոստային կայարանում, այսինքն փոստային ճանապարհի կայարանում չի կարող շտապ կառք պահանջել: Կառքերը սովորաբար բավական չեյին լինում և այս պատճառով վեճեր էյին լինում ճանապարհորդների ու կայարանապետի մեջ:

ըրվին դուր չեր գալիս կայարանապետի կնոջը, վորը նստել եր միջնապատի մյուս կողմում:

— Վոր սատանեն ե ուղարկել ես սուլողին, — կամացուկ ասաց կինը, — սուլում ե հա սուլում, անիծվածն ուղղակի զահլա տարավ:

— Ի՞նչ կա վոր, — ասաց կայարանապետը, — թող վոր սուլի:

— Վհնց թե «ինչ կավոր», — առարկեց բարկացած կինը, — միթե չգիտես, թե ալդ ինչ նշան ե:

— Փող թոցնելու նշան, եհ, Պախոմոֆնա, թող սուլի ինչ-քան ուղենա. միենույն ե, մենք փող չունենք:

— Թո՛ղ գնա, Սիդորովիչ: Ինչո՞ւ յես պահում նրան: Կանոք տուր, թող ջհանդասը գնա:

— Դեռ կսպասի, Պախոմոֆնա: Ախր ուում ընդամենը իննը ձի կա, յերեքն ել հանգստանում են: Մեկ ել տեսար լավ ճանապարհորդներ յեկան, արի ու պատասխան տուր Ֆրանսիացու համար: Ուհո՛, արդեն գալիս են: Յեւ ինչքան արագ: Արդյոք գեներալ չե՞:

Մի կառք կանգնեց դրսում: Սպասավորն իջավ, բացեց դռնակը ե մի բոպեյից հետո ուղեւորն գրատուլ ու սպիտակ գլխարկով մի յերիտասարդ մտավ կայարանապետի մոտ: Սպասավորը ներս տարավ արկղիկը ե դրեց լուսամուտին:

— Կանոք, — հրամայական ձայնով ասաց սպան:

— Այս բոպեյիս, — պատասխանեց կայարանապետը: Խնդրեմ տաք ուղեգիրը¹⁾:

— Յես ուղեգիր չունեմ: Յես ուրիշ կողմ եմ գնում... միթե չես ճանաչում ինձ:

Կայարանապետը դես ու դեն ընկավ, շտապեցրեց կառապաններին: Յերիտասարդն սկսեց յետ ու առաջ քայլել սենյակում, անցավ միջնապատի մյուս կողմը ե կամացուկ հարցրեց կայարանապետի կնոջը, թե ո՞վ ե ճանապարհորդը:

— Աստված գիտե, — պատասխանեց կինը, — ինչ վոր Ֆրանսիացի յե: Հինգ ժամ ե, ինչ կառքի յե սպասում ու սուլում: Անիծվածն ուղղակի զահլա տարավ:

Յերիտասարդն սկսեց Ֆրանսերեն խոսել ճանապարհորդի հետ:

— Ո՞ւր եք բարեհաճում գնալ, — հարցրեց նրան:

— Մոտակա քաղաքը, — պատասխանեց Ֆրանսիացին, — այնտեղից մեկնելու յեմ մի կալվածատիրոջ մոտ, վորն առանց ինձ տեսնելու ուսուցիչ ե վարձել: Յես կարծում եյի, թե այսոք տեղ կհասնեմ, բայց պ. կայարանապետը կարծեմ այլ կերպ ե դատում: Այս յերկրում ձի գտնելը դժվար ե, պ. սպա:

— Այստեղի կալվածատերերից վորե՞ մոտ եք գնում իբրեւ ուսուցիչ, — հարցրեց սպան:

— Պ. Տրոյեկուրովի մոտ, — պատասխանեց Ֆրանսիացին:

— Տրոյեկուրովի մոտ: Ո՞վ ե այդ Տրոյեկուրովը:

Ma foi, monsieur¹⁾... յես այնքան ել լավ բան չեմ լսել նրա մասին: Պատմում են, վոր նա գոռոզ ու քմահաճ աղա յե, կոպիտ ե վարվում իր տնեցիների հետ, վոչ-վոք չի կարող նրա մոտ ապրել, վոր բոլորը դողում են նրա անունը լսելիս, ուսուցիչների հետ (avec les outchitels) դաժան ե վարվում ե արդեն մահացու թակել ե յերկուսին:

— Թույլ տվեք. ե դուք վորոշել եք աշխատել այդպիսի հրեշի մոտ:

— Ի՞նչ անեմ, պ. սպա: Նա ինձ առաջարկում ե լավ ոոճիկ, — տարեկան 3000 ռուբլի ե ամեն ինչ, — բնակարան, ճաշ, ընթրիք, նախաճաշ ե այլն: Գուցե յես ուրիշներից ավելի յերջանիկ լինեմ: Յես պառավ մալր ունեմ, ոոճիկիս կեսը կուղարկեմ նրան, մնացած փողերից հինգ տարվա ընթացքում կարող եմ հավաքել մի փոքրիկ կապիտալ, վորը բավական կլինի ապագայում անկախ մարդ դառնալու համար, — ե այն ժամանակ Bonsoir²⁾, կգնամ Փարիզ ե առևտրական գործ կսկսեմ:

— Տրոյեկուրովի տանը ձեզ վորե՞ս մեկը ճանաչում ե, — հարցրեց նա:

— Վո՛չ վոք, — պատասխանեց ուսուցիչը, — Տրոյեկուրովն ինձ Մոսկվայից դուրս ե գրել իր ընկերներից մեկի միջոցով, վորի խոհարարն իմ հայրենակիցս ե ե ինձ հանձնարարել ե: Դուք պետք ե իմանաք, վոր յես պատրաստվում եյի վոչ թե ուսուցիչ, այլ հրուշակագործ լինելու, բայց ինձ ասացին, վոր ձեր յերկրում ուսուցչի կոչումը շատ ավելի ձեռնտու յե:

Սպան մտածում եր:

1) Ուղեգիր — Փոստային կառքով մեկնողը պետք ե ստանալ ուղեգիր, վորտեղ նշվում եր մարշրուտը, ճանապարհորդի պաշտոնն ու ազդեցությունը:

1) Ma foi monsieur — ահիվ խոսք, պարսն:

2) Bonsoir — Բնաք բարե:

— Լսեք,— ընդհատեց նա ֆրասիացուն,— ի՞նչ կասեցիք, յեթե ձեր այդ ապագայի փոխարեն ձեզ առաջարկեյին 10000 ուռլլի դուտ փող, այն պայմանով, վոր իսկույն Փարիզ մեկնեյիք:

Ֆրանսիացին զարմացած նայեց սպային, ժպտաց և որորեց գլուխը:

— Կառքը պատրաստ ե, — ներս մտնելով ասաց կապրանապետը:

Նույնը հայտնեց և կառապանը:

— Իսկույն, — պատասխանեց սպան, — մի բոլորով դուրս յեկեք: — Կապրանապետն ու սպասավորը դուրս յեկան, — յես կատակ չեմ անում, — շարունակեց նա ֆրանսերեն, — 10000-ը յես կարող եմ ձեզ տալ, ինձ միայն հարկավոր են ձեր բացակայությունն ու ձեր թղթերը:

Այս խոսքերի վրա նա բացեց արկղիկն ու հանեց թղթադրամների մի քանի կապոց:

Ֆրանսիացին յերկու աչքը չորս արեց: Նա չգիտեր ինչ անել:

— Իմ բացակայությունը ... իմ թղթերը, — կրկնեց նա ապշած, — ահա իմ թղթերը: Բայց դուք կատակ եք անում: Ձեր ինչի՞ն են պետք իմ թղթերը:

— Այդ ձեր գործը չե: Յես հարցնում եմ, համաձայն եք, թե վոչ:

Ֆրանսիացին, դեռ չհավատալով իր ականջներին, փաստաթղթերը տվեց յերիտասարդ սպային, վորն արագությամբ նայեց այդ փաստաթղթերը:

— Ձեր անցագիրը... լավ... յերաշխավորության նամակը... հը՛մ... ծննդյան վկայական, — շատ գեղեցիկ: Ահա ձեր փողերը, վերադարձեք: Գնա՛ք բարով:

Ֆրանսիացին կանգնել եր քարացած:

Սպան յետ յեկավ:

— Ամենակարեվորը մոռացա: Տվեք ինձ ազնիվ խոսք, վոր այս բոլորը մեր մեջ կմնա, ձեր ազնիվ խոսքը:

— Ազնիվ խոսք եմ տալիս, — պատասխանեց ֆրանսիացին, — բայց իմ թղթերը... առանց այդ թղթերի ի՞նչ անեմ:

— Հենց առաջին քաղաքում հայտարարեք, թե Դուբրովսկին թալանել ե ձեզ: Կհավատան և կտան անհրաժեշտ վկայականները: Գնա՛ք բարով, աստված տա, վոր շուտ հասնեք Փարիզ և առողջ գտնեք ձեր մորը:

Դուբրովսկին դուրս յեկավ սենյակից, կառքը նստեց ավարով:

Կապրանապետը նայեց լուսամուտից, և յերբ կառքը հեռացավ, հետևյալ բացականչությամբ դիմեց կնոջը:

— Պախոմոֆնա, գիտես ի՞նչ, այդ Դուբրովսկին եր:

Կինը հապճեպ նետվեց դեպի լուսամուտը, բայց արդեն ուշ եր: Դուբրովսկին արդեն հեռու յեր: Կինն սկսեց կշտամբել ամուսնուն:

— Աստված չճշես, Սիդորովիչ, ինչո՞ւ առաջ չասիր ինձ այդ, գոնե կտեսնեյի Դուբրովսկուն: Իսկ հիմա սպասիր, վոր նա նորից գա: Անխիդձ ես դու, անխիդձ:

Ֆրանսիացին կանգնած եր քարացածի պես: Սպայի հետ կապած պայմանը, փողը, — ամեն ինչ յերազ եր թվում նրան: Սակայն թղթադրամների կապոցները նրա գրպանում եյին և պերճախոս կերպով հաստատում եյին զարմանալի իրականությունը:

Նա վորոշեց կառք վարձել մինչև քաղաք: Կառապանը դանդաղ քշում եր կառքը և գիշերը հասան քաղաք:

Դեռ ուղեկալին չհասած¹⁾, վորտեղ պահակի փոխարեն կանգնել եր խարխաված, փոքրիկ պահակատունը, ֆրանսիացին կառապանին հրամայեց կանգ առնել, իջավ կառքից և շարունակեց յլուքով գնալ, կառապանին նշաններով բացատրելով, վոր կառքն ու պայուսակը նվիրում ե նրան: Կառապանն ել նրա առատաձեռնության վրա դարձացավ ճիշտ այնպես, ինչպես ֆրանսիացին Դուբրովսկու առաջարկից: Սակայն յեղրակցներով, վոր գերմանացին²⁾ խելագարվել ե, կառապանը ջերմեռանդությամբ գլուխը խոնարհելով շնորհակալություն հայտնեց նրան և քաղաք մտնելը համարելով աննպատակահարմար, ուղեորվեց իրեն հայտնի զվարճատունը, վորի տերը նրան շատ լավ ծանոթ եր: Այստեղ նա անցկացրեց ամբողջ գիշերը, իսկ հետևյալ առավոտյան յերեք ձին առած, առանց նվեր ստացած կառքի ու

1) Առանց ուղեգրի չեր կարելի քաղաքի սահմաններից, ուղեկալից դուրս գնալ: Ուղեկալի մոտ պահակապետ սպան հատուկ ցուցակներում գրանցում եր կառքով գնացող ճանապարհորդներին: Միայն ուղեգիրն ստուգելուց հետո բարձրացնում եյին ճանապարհը փակող գերանը և ճանապարհորդի կառքը դուրս եր գալիս քաղաքից:

2) Այն ժամանակ «հասարակ» ժողովուրդը բոլոր ոտաբերկրացիներին գերմանացի յեր անվանում:

պայուսակի վերադարձավ տուն: Նրա դեմքն ուռած էր, աչքերը կարմրել էին:

Տիրանալով Ֆրանսիացու փաստաթղթերին, Դուբրովսկին ինչպես գիտենք, համարձակ ներկայացավ Տրոյիկուրովին և տեղավորվեց նրա տանը: Ինչպիսի ծածուկ գիտավորութուններ ել ունենար (մենք զրանք հետո կիմանանք), նրա վարքը միանգամայն անաղարտ էր: Ծիշտ է, նա քիչ էր զբաղվում փոքրիկ Սաշայի դաստիարակութամբ, լիակատար ազատութուն էր տալիս նրա չարաճճիութուններին, դասերի համար պահանջվոտ ու խիստ չէր, իսկ այդ դասերը նա լուրջ ձևակերպության համար երտալիս,—բայց մեծ ջանասիրությամբ հետևում էր իր աշակերտունհու լեռաժշտական առաջադիմության, հաճախ նրա հետ ժամերով նստում էր դաշնամուրի մոտ: Բոլորը սիրում էին յերիտասարդ ուսուցչին,—Կիրիլա Պետրովիչը—վորսի ժամանակ նրա ցույց տված խիղախ ճարպկության համար, Մարիա Կիրիլովնան—անսահման ջանասիրության, հաճեստ և ուշադիր վերաբերմունքի համար, Սաշան—դեպի իր չարությունները ներդադարձ լինելու համար, տանեցիք—բարության և առատաձեռնության համար, վորը ըստ լեռնույթին չէր համապատասխանում նրա կարողության: Նա ինքը կարծես սերտ կապված էր ամբողջ ընտանիքին և իրեն արդեն համարում էր նրա անդամը:

Ուսուցչական կոչում ստանձնելուց մինչև մեզ լավ հայտնի տոնակատարությունն անցել էր մոտ մի ամիս և վոչոքի մտքով չէր անցնում, վոր հաճեստ, լերիտասարդ Ֆրանսիացու դիմակի տակ թաքնված է ահարկու մի ավազակ, վորի անունը սարսափ էր տարածում շրջակա բոլոր սեփականատերերի վրա: Այդ ամբողջ ժամանակ Դուբրովսկին չէր հեռանում Պոկրովսկուց, սակայն գլուղի բնակիչների վառ յերեակայության շնորհիվ նրա ավազակութունների լուրը շարունակում էր տարածվել, թեև կարող էր պատահել, վոր նրա հրոսակախումբն իր պետի բացակայությամբ շարունակեր իր գործողությունները:

Միևնույն սենյակում գիշերելով այն ճարդու հետ, վորին կարող էր համարել իր անձնական թշնամին և իր փորձություններին գլխավոր հանցապարտներից մեկը, Դուբրովսկին չէր կարող չզայթակղվել: Նրան հայտնի յեր փողի տոպրակի գոյությունը և նա վորոշեց տեղ դառնալ այդ փողին: Մենք տեսանք, թե ինչպես խեղճ Անտոն Պաֆնուտյիչին նա սարսափեցրեց անսպասելիորեն ուսուցչից վերածվելով ավազակի:

Առավոտյան ժամը 9-ին Պոկրովսկում գիշերած հյուրերը մեկը մյուսի հետևից հավաքվեցին հյուրասենյակում, վորտեղ արդեն թշնում էր ինքնայեռը: Ինքնայեռի մոտ առավոտյան շրջագրեստով նստած էր Մարիա Կիրիլովնան, իսկ Կիրիլա Պետրովիչը բալկոնից կարած բաճկոնով և թեթև վոտնամաններով նստել ու թեյ էր խմում իր լայն բաժակով, վորը կարծես բերան լվանալու անոթ լիներ: Բոլորից հետո յեկավ Անտոն Պաֆնուտյիչը: Նա այնքան էր գունատ և ընկճված, վոր բոլորն ապշեցին, իսկ Կիրիլա Պետրովիչը հարցրեց, թե ինչպես է նրա առողջութունը: Սպիցինն անիմաստ պատասխաններ էր տալիս և սարսափով նայում ուսուցչին, վորը հենց այդտեղ նստած էր, կարծես վաշինչ չէր պատահել: Մի քանի բոպոյից հետո ներս մտավ սպասավորն ու հայտնեց Սպիցինին, թե նրա կողքը պատրաստ է: Անտոն Պաֆնուտյիչը շտապ հրաժեշտ տվեց և չնայելով տանտիրոջ հորդորանքին, դուրս յեկավ ու խելուցն մեկնեց: Չեյին հասկանում, թե ինչ է պատահել նրա հետ, և Կիրիլա Պետրովիչը յեղբակացրեց, թե նա չափից դուրս է կերել: Թեյից և հրաժեշտի նախաճաշից հետո հյուրերն սկսեցին ցրվել, շուտով Պոկրովսկին դատարկվեց և ամեն ինչ իր սովորական ընդթիվ ստացավ:

Գ Լ Ո Ի Խ XII

Անցավ մի քանի օր և վոչ մի նշանավոր դեպք չպատահեց: Միապադաղ էր Պոկրովսկոյի բնակիչների կյանքը: Կիրիլա Պետրովիչն ամեն օր վորսի յեր գնում: Մարիա Կիրիլովնան զբաղված էր ընթերցանությամբ, զբոսանքներով և լեռաժշտական դասերով,—մանավանդ լեռաժշտական դասերով: Նա սկսում էր հասկանալ իր սեփական սիրտը և ահամա ցասումով խոստովանում էր, վոր այդ սիրտն անտարբեր չէ դեպի յերիտասարդ Ֆրանսիացու արժանիքները: Իր հերթին ուսուցիչը չէր անցնում հարգանքի և խիստ քաղաքավարության սահմաններից և դրանով բավարարում էր նրա հպարտությանն ու լեռնույթի կասկածներին: Մարիա Կիրիլովնան ավելի և ավելի մեծ գլուրահավանությամբ էր անձնատրվում հրապուրիչ սովորության: Նա ձաճրանում էր առանց Դեֆորտի, վերջինիս բացակայության ժամանակ ամեն բոպե նրա մասին էր մտածում, ամեն ինչի վերաբերմամբ ուղղում էր իմանալ նրա կարծիքը և միշտ համա-

ձայնում եր նրա հետ: Գուցե Մաշան դեռ սիրահարված չէր՝ սակայն հենց առաջին պատեհ առիթին կամ բախտի անակնկալ հարվածների դեպքում նրա սրտում պետք է բռնկվեր սիրո բոցը:

Մի անգամ մտնելով դահլիճ, վորտեղ նրան սպասում եր ուսուցիչը, Մարիա Կիրիլովնան շփոթութուն նկատեց նրա դուռնատ դեմքի վրա և զարմացավ: Մարիա Կիրիլովնան բացեց դաշնամուրը, յերգեց մի քանի նոտաներ, բայց Դուբրովսկին գլխացավի պատրվակով ներողութուն խնդրեց, ընդհատեց դասը և ծածկելով նոտաները, ծածուկ մի գրութուն տվեց նրան: Մարիա Կիրիլովնան պռանց մտածելու վերջրեց այն և նույն րոպեյին զղաց, բայց Դուբրովսկին արդեն դահլիճում չէր: Մարիա Կիրիլովնան գնաց իր սենյակը, բացեց գրութունն ու կարդաց հետևյալը.—

«Այսօր ժամը յոթին յեղեք առվի մոտ, տաղավարում, անհրաժեշտ է խոսել ձեզ հետ»:

Մարիա Կիրիլովնայի յերևակայութիւնը սաստիկ բորբոքվեց: Նա վաղուց եր սպասում սիրո խոստովանությանը, վորը և ցանկալի, և՛ յերկյուղալի յեր նրա համար: Մաշային հաճելի յեր լսել այն, ինչ վոր ինքն եր սպասում, սակայն զգում եր, վոր իր համար անվայել է սիրո բացատրութիւն լսել այն մարդուց, վորն իր դիրքով չէր կարող հուսալ յերբեկեց՝ նրա համաձայնութիւնն ստանալու: Մարիա Կիրիլովնան վորոշեց գնալ տեսակցութեան, բայց տատանվում եր, թե ինչպէս ընդունի ուսուցչի խոստովանութիւնը, արիստոկրատական դայրութիւն, բարեկամական հորդորանքով, ուրախ կատակներով, թե՛ լուռ համակրանքով: Նա ամեն րոպե նաչում եր ժամացույցին: Մթնեց, մոմերը վառեցին: Կիրիլա Պետրովիչը նստեց բոստոն¹⁾ խաղալու իր մոտ յեկած հարևանների հետ: Սեղանատան ժամացույցը խփեց յոթից քառորդ պակաս: Մարիա Կիրիլովնան կամացուկ դուռս չեկավ, նայեց ամեն կողմ և վաղեց այգի:

Գիշերը մութն եր, յերկինքն ամպերով պատած, յերկուքայլի վրա վոչինչ չէր կարելի տեսնել, սակայն Մարիա Կիրիլովնան խավարում գնում եր ծանոթ շփոթներով և մի րոպեյում հասավ տաղավարին: Այստեղ կանգ առավ, վորպեսզի չըն-

չառութիւնը հանգստացնի և անտարբեր ու անշտապ յերևա Դեֆորթին: Սակայն Դեֆորթն արդեն կանգնած եր նրա առաջ:

— Շնորհակալ եմ ձեզանից,—ասաց նա հանդարտ ու տխուր ձայնով—վոր դուք չմերժեցիք իմ խնդրը: Յես կհուսահատվեյի, յեթե դուք չհամաձայնեցիք զալ:

Մարիա Կիրիլովնան պատասխանեց վաղորդ պատրաստած ֆրազով:

— Հույս ունեմ, վոր դուք ինձ չեք ստիպի զղջալ իմ ներողամտութեան համար:

Դուբրովսկին լուռ եր և կարծես պատրաստվում եր ինչ-վոր կարևոր բան ասելու:

— Հանգամանքներն ստիպում են... յես պետք է ձեզնից հեռանամ,—ասաց վերջապես նա,—թերևս դուք շուտով լսեք... Բայց անշատու՞մից առաջ յես ինքս պետք է ձեզ հետ բացատրեմ...

Մարիա Կիրիլովնան վոչինչ չպատասխանեց: Այդ խոսքերը նա ընդունեց իրրե սպասվելիք խոստովանութեան առաջաբան:

— Յես այն չեմ, ինչ վոր դուք կարծում եք,—շարունակեց ուսուցիչը, գլուխը խոնարհելով,—յես ֆրանսիացի Դեֆորթը չեմ, յես Դուբրովսկին եմ:

Մարիա Կիրիլովնան ճչաց:

— Մի վախենաք, իսեր ասածո, դուք չպետք է վախենաք իմ անունից: Այո, յես այն զժբախտն եմ, վորին ձեր հայրը, զրկելով մի կտոր հացից, հայրական տնից դուրս արեց և ուղարկեց կողոպուտներով զբաղվելու մեծ ճանապարհների վրա: Բայց դուք մի վախենաք ինձնից: Յես յերկյուղալի չեմ վոչ ձեզ, վոչ ել նրա համար: Ամեն ինչ վերջացավ: Յես նրան ներեցի,—լսեք, դուք փրկեցիք նրան: Իմ առաջին արյունոտ սըխրագործութիւնը պետք է կատարվեր նրա դեմ: Յես քայլում եյի նրա տան մոտ, հրդեհ գցելու տեղ ընտրելով, մտածում եյի թե վորտեղից կարելի յե մտնել նրա ննջարանը, ինչպես փակել նրա փախուստի բոլոր հանապարհները: Այդ րոպեյին դուք իմ մոտից անցաք վորպես յերկնային տեսիլ, և իմ սիրտը խոնարհվեց: Յես հասկացա, վոր սրբազան է այն տունը, ուր ապրում եք դուք, վոր ձեզ հետ արյունակցական կապ ունեցող վոչ մի արարած յենթակա չէ իմ անեծքին: Յես հրաժարվեցի վրիժառութիւնից, վորպես խելահեղութիւնից: Ամբողջ որերով յես թափառում եյի Պոկրովսկոյե այգիների մոտ, հուսալով գեթ հեռ-

1) Բոսոն—թղթախաղ, վոր Ռուսաստանում լայն չափով տարածված եր XIX դարի 30-ական և 30-ական թվականներին:

վից տեսնել ձեր սպիտակ շրջագգեստը: Ձեր անդգուշ զրոսանք-
ների ժամանակ յես հետևում եյի ձեզ, թագնվելով այս կամ այն
թիփի տակ, յերջանիկ լինելով այն մտքից, վոր պաշտպանում
եմ ձեզ, վոր ձեզ համար չկա վտանգ այնտեղ, ուր յես գտնվում
եմ ծածուկ: Վերջապես, առիթը գտնվեց: Յես տեղավորվեցի ձեր
տանը: Այս յերեք շաբաթն ինձ համար յեղել են յերջանկու-
թյան որեր, նրանց հուշերը կդառնան իմ կյանքի տխուր խըն-
դուկները... Այսօր յես մի աշնակիսի լուր ստացա, վորից հետո
ինձ համար այլևս անկարելի չե այստեղ մնալ: Յես ձեռնից բա-
ժանվում եմ այսօր... հեց այս ժամին... բայց նախքան այդ,
յես պետք է ամեն ինչ բացատրեյի ձեզ, վորպեսզի չանիծեյիք
ինձ, չարհամարհեյիք: Յիւրեմն մտածեք Դուբրովսկու մասին:
Իմացեք, վոր նա ծնվել եր այլ նպատակի համար, վոր նրա հո-
գին գիտեր սիրել ձեզ, վոր յերբեք...

Լսվեց թեթև սոււնոց ու Դուբրովսկին լռեց... Նա վերցրեց
Մաշայի ձեռքն ու սեղմեց հրաբորբոք շուրթերին: Սոււնոցը
կրկնվեց:

— Ներեցեք,—ասաց նա,—ինձ կանչում են: Մի րոպեն կա-
րող ե կորցնել ինձ:

Նա հեռացավ: Մարիա Կիրիլովնան կանգնած եր անշարժ:
Դուբրովսկին վերագրծավ և նորից վերցրեց նրա ձեռքը:

— Յեթե չերբեքեք, —ասաց նա քնքուշ ու սրտառու ձայ-
նով,—յեթե յերբեքեք ձեզ հետ դժբախտություն պատահի և
դուք վոչ վոքից չսպասեք վոչ ոգնություն, վոչ ել հովանավորու-
թյուն, այդ դեպքում արդյոք խոստանում եք դիմել ինձ, ամեն
ինչ պահանջել ինձից ձեր փրկության համար: Արդյոք խոստա-
նում եք չմերժել իմ անձնվիրությունը:

Մարիա Կիրիլովնան լուռ լալիս եր: Սոււնոցը լսվեց չերբոքե
անդամ:

— Դուք կործանում եք ինձ,—գոչեց Դուբրովսկին,—յես
չեմ հեռանա, մինչև վոր պատասխանեք—խոստանում եք թե
վոչ:

— Խոստանում եմ,—չնչաց հեզ գեղեցկուհին:
Դուբրովսկու հետ տեսնվելուց հուզված, Մարիա Կիրիլով-
նան վերագրծում եր այդուց: Նրան թվաց, թե բոլոր մարդիկ
վազվզում են, շարժվում ե տունը, բակում շատ ժողովուրդ կա,
տան մուտքի առաջ կառք ե կանգնած: Հեռվից նա լսեց Կի-
րիլա Պետրովիչի ձայնը և շտապեց սենյակ մտնել, վախենալով:

Վոր կարող ե նկատվել իր բացակայությունը: Դահլիճում նրան
հանդիպեց Կիրիլա Պետրովիչը, հուրերը շրջապատեցին մեզ
ծանոթ գավառական վոստիկանապետին և սկսեցին հարցեր տե-
ղալ: Վոստիկանապետը, վոր հագել եր ձանապարհորդական
տարազ և զինվել վոտից մինչև գլուխ, խորհրդավոր ու անհան-
գիստ պատասխանում եր բոլորին:

— Վերտեղ եյիր, Մաշա,—հարցրեց Կիրիլա Պետրովիչը,—
մ—ր Դեֆորժին չե՞ս հանդիպել:

Մաշան հաղիվհազ բացասական պատասխան տվեց:
— Յերևակայիր,—շարունակեց Կիրիլա Պետրովիչը,—վոս-
տիկանապետը չեկել ե նրան բռնելու և հավատացնում ե ինձ,
վոր այդ Դուբրովսկին ինքն ե:

— Բոլոր նշանները կան, ձերդ գերագանցություն,—պատ-
կառանքով ասաց վոստիկանապետը:

— Ե՛հ, բարեկամ,—ընդհատեց Կիրիլա Պետրովիչը,—կորի
գնա քո այդ նշաններով: Իմ ֆրանսիացուն յես քեզ չեմ տա,
մինչև վոր ինքս չքննեմ գործը: Ինչպես կարելի չե հավատալ
Անտոն Պաֆնուտիչի, այդ յերկշոտի ու ստախոսի ասածներին:
Նրան թվացել ե, թե ուսուցիչն ուղում եր կողոպտել նրան: Հա-
պա ինչու այն առավոտը դրա մասին ինձ վոչ մի խոսք չասաց:

— Ֆրանսիացին վախեցրել եր նրան, ձերդ գերագանցու-
թյուն,—պատասխանեց վոստիկանապետը—և ստիպել եր յերդ-
վել, վոր նա այդ մասին վոչինչ չի ասի...

— Սուտ ե,—ասաց Կիրիլա Պետրովիչը,—յես հիմա ամեն
ինչ ջրի յերես կհանեմ: Ո՞ւր ե ուսուցիչը,—հարցրեց նա ներս
մտնող սպասավորին:

— Վոչ մի տեղ չեմ գտնում,—պատասխանեց սպասավորը:

— Գտնել նրան,—գոռաց Տրոյեկուբովը, վորն սկսել եր
կասկածել,—ցույց տուր ինձ քո գոված նշանները,—ասաց նա
վոստիկանապետին, վոր իսկույն թռչելով դատուցեց նրա:

— Հը՛մ, հը՛մ, քսաներեք տարեկան...այդ այդպես ե, բայց
դեռ վոչինչ չի ապացուցում: Ի՞նչ յեղավ ուսուցիչը:

— Չեն գտնում,—պատասխանեց վոստիկանապետը:
Կիրիլա Պետրովիչը սկսեց անհանգստանալ, Մարիա Կիրի-
լովնան վոչ կենդանի յեր, վոչ մեռած:

— Դու գունատ ես, Մաշա,—ասաց հայրը,—քեզ վախեց-
րել են:

— Վոչ, հայրիկ,—պատասխանեց Մաշան,—գլուխս ե ցավում:

— Գնա քո սենյակը, Մաշա, և մի անհանգստանա: Մաշան համբուրեց նրա ձեռքը և արագութեամբ գնաց իր սենյակը: Այստեղ նա ընկավ անկողնի վրա և սկսեց աղիոգորմ հեկեկալ: Հավաքվեցին աղախինները, զոռով հանեցին նրա հագուստը, սառը ջրով և զանազան տեսակ սպիրտներով մի կերպ հանգըստացրին, պառկեցրին անկողնում և նա թմրեց:

Մինչ այս, մինչ աչն, Փրանսիացուհի չեյին գտնում: Կիրիլա Պետրովիչը դահլիճում յետ ու առաջ եր քայլում և քթի տակ սուլում եր «Յոգա, վորոս հաղթանակին»: Հյուրերը մտնում էին իրար հետ, վոստիկանապետը հիմար դրութեան մեջ եր,— Ծրանսիացուհի չեյին գտել: Յերևի նա կարողացել եր փախչել, նրան նախազգուշացրել էյին: Բայց ով, լինչպես: Այդ գաղտնիք եր մնում:

Տասնմեկն եր և վոչ վոք չեր մտածում քնելու մասին: Վերջապես, Կիրիլա Պետրովիչը բարկութեամբ ասաց վոստիկանապետին.

— Հը՛, հետո: Խոմ մինչև առավոտ չես մնալու այստեղ: Իմ տունը քարվանսարա չե: Դո ճարակութեամբ Դուբրովսկին չի բռնվի, չեթե այդ Դուբրովսկին ե: Գնա քո տեղը և աշխատիր այսուհետև ավելի ճարակի լինել: Ժամանակ ե, վոր դուք ել տուն գնաք,— շարունակեց նա, դիմելով հյուրերին,— կարգադրեք պատրաստել կառքերը, իսկ յես ուզում եմ քնել:

Տրոյեկուրովն այսպես անողորմ բաժանվեց իր հյուրերից:

ԳԼՈՒԽ XIII

Անցավ վորոշ ժամանակ առանց վորևե նշանավոր դեպքի: Սակայն հետևյալ ամառվա սկզբում շատ փոփոխութեաններ չեղան Կիրիլա Պետրովիչի ընտանեկան կյանքում:

Նրա կալվածքից 30 վերստ հեռու գտնվում եր իշխան Վերեյսկու հարուստ կալվածքը: Յերկար ժամանակ իշխանը գտնվում եր ոտար յերկրներում, նրա ամբողջ կալվածքը կառավարում եր մի պաշտոնաթող մայոր¹⁾ և վոչ մի հաբարեութուն չկար Պոկրովսկու և Արբատովոյի միջև: Սակայն մայիսի վերջին իշխանն արտասահմանից վերադարձավ ու ժամանեց իր գյուղը, վորը յերբեք չեր տեսել: Սովորած լինելով շվայտութեան, նա

1) Մայոր— գինգրական աստիճան:

չեր կարող տանել մեծութեանը և իր ժամանակու չերբորդ ուր ճաշելու գնաց Տրոյեկուրովի մոտ, վորի հետ մի ժամանակ ծանոթ եր: Իշխանը կլիներ մոտ 50 տարեկան, բայց ավելի ծեր եր թվում: Ամեն տեսակի ավելորդութեաններ քայքայեցին նրա առողջութեանն ու նրա դեմքին անջնջելի կնիք դրոշմեցին: Չնայելով դրան, նրա արտաքինը հաճելի յեր, աչքի ընկնող, իսկ միշտ հասարակութեան մեջ լինելու սովորութեանը նրան դարձնում եր վորոշ չափով սիրալիր, մանավանդ կանանց հետ: Նա շարունակ դարձութեան կարիք եր զգում և շարունակ ձանձրանում եր: Կիրիլա Պետրովիչը խիստ գոհ մնաց նրա այցելութեանից, համարելով այդ հարգանքի նշան աշխարհ տեսած մարդու կողմից: Կիրիլա Պետրովիչն ըստ իր սովորութեան, սկսեց նրան հյուրասիրել իր հաստատութեանները ցույց տալով և տարավ շնանոցը: Սակայն իշխանը քիչ մնաց վոր շնահեղձ լիներ չնային մթնոլորտում և շտապեց հեռանալ, քիթը բռնել ոժանեիքով ցողված թաշկինակով: Հնամյա այգին իր ճյուղակտուր լորիններով, քառանկյուն լճակով և ուղիղ ձգված ծառուղիներով դուր չեկավ նրան: Նա սիրում եր անգլիական այգիները¹⁾ և այսպես կոչված բնութեանը, բայց գովում եր իր տեսածը և հիանում: Սպասավորը յեկավ հայտնելու, թե սեղանը պատրաստ ե: Նրանք գնացին ճաշելու: Զրոսանքից հոգնած իշխանը մի փոքր կաղում եր և արդեն զղջաց իր այցելութեան համար:

Սակայն դահլիճում նրանց դիմավորեց Մարիա Կիրիլովնան և ծերունի կնամուկն ապշեց նրա գեղեցկութեանից: Տրոյեկուրովը հյուրին նստեցրեց Մաշայի կողքին: Վերջինիս ներկայութեանն աշխուժացրեց իշխանին, նա ուրախ եր և կարողացավ իր հետաքրքիր պատմութեաններով մի քանի անգամ գրավել Մաշայի ուշադրութեանը: Ծաղից հետո Կիրիլա Պետրովիչն առաջարկեց ձիով զբոսնել, բայց իշխանը ներողութեան խնդրեց, ցույց տալով իր թավշյա կոշիկները և ասելով, թե վոտացավ²⁾ ունի: Նա գերսդասեց կառքով զբոսնել, այնպես, վոր չբաժանվի իր գեղեցիկ հարևանուհուց: Կառքը լծեցին: Ծերուկ-

1) Անգլիական այգիներ (կամ պարկեր)—հիմնել էյին անգլիացիք, XVIII դարում: Դրանք նման էյին «բնական» պեյզաժին, ունեյին անկանոն դասավորված ծառեր, մեծ ու փոքր լճակներ և այլն:

2) Վոտացավ (պոդադրա)—ծերութեան հիվանդութեան, վորն առաջ և գալիս մարմնի նյութերի անկանոն փոխանակութեանից, իվերջո պոդադրայն հանգույցներ ե առաջ բերում վոտների ու ձեռների մասների վրա:

ներն ու գեղեցկուհին յերեքով նստեցին ու ճանապարհ ընկան։ Պոսակցութունը չեր ընդհատվում։ Մարիա Կիրիլովնան հաճույքով լսում էր աշխարհ տեսած մարդու շողջոքորթ և ուրախ խոսքերը։ Հանկարծ Վերեյսկին դիմելով Կիրիլա Պետրովիչին, հարցրեց, թե այդ ի՞նչ այրված շենք է յերևում և արդյոք նրան է պատկանում։ Կիրիլա Պետրովիչը նոթերը կիտեց։ Այրված տան հիշողութուններն անհաճելի էին նրա համար։ Նա պատասխանեց, թե հողն այժմ իրենն է, իսկ առաջ պատկանում էր Դուբրովսկուն։

— Դուբրովսկուն,— կրկնեց Վերեյսկին,— ինչպես, այդ հըռ-չակավոր ավազակի՞ն։

— Նրա հորը,— պատասխանեց Տրոյեկուերովը,— ասենք հայրն էլ կարգին ավազակ էր։

— Հապա հըռ է կորել մեր Ռինայլդոն¹⁾։ Կենդանի՞ չե արդե՞ք, բռնված չի՞։

— Թե կենդանի չե և թե ազատ։ Դանի դեռ մեզանում վոստրիկանապետերը միացած կլինեն գողերին, նա չի բռնվի։ Հնա, իշխան, Դուբրովսկին յեղե՞լ է քեզ մոտ, Արքատովոյում։

— Այո, անցյալ տարի կարծեմ ինչ-վոր բան է այրել կամ թալանել... Մարիա Կիրիլովնա, հետաքրքիր կլինեք ծանոթանալ այդ ռոմանտիկական հերոսի հետ, այնպես չէ։

— Ել ի՞նչ հետաքրքիր,— ասաց Տրոյեկուերովը,— Մաշան ծանոթ է նրա հետ, նա ամբողջ յերեք շաբաթ յերաժշտություն է սովորեցրել նրան, բայց փառք աստծո, դասերի համար վո-չինչ չվերցրեց։

Այստեղ Կիրիլա Պետրովիչն սկսեց պատմել իր Փրանսիացի ուսուցչի մասին։ Մարիա Կիրիլովնան կարծես ասեղի վրա նըստած լինեք։ Վերեյսկին լսում էր խորն ուշադրությամբ, այդ բոլորը խիստ տարորինակ համարեց և փոխեց խոսակցությունը։ Յերեք նրանք տուն վերադարձան, իշխանը հրամայեց պատ-րաստել իր կառքը և չնայելով Կիրիլա Պետրովիչի հորդորանքին, վոր մնա գիշերելու, թեյից հետո իսկույն մեկնեց։ Կիրիլա Պետրովիչին խնդրեց Մարիա Կիրիլովնայի հետ հյուր գալ իր մոտ։ Գոռոզ Տրոյեկուերովը խոստացավ, վորովհետև իշխանի տիտղոսը, նրա յերկու աստղը²⁾ և 3000 հոգի ունեցող տոհմա-

կան կալվածքը բավական էին, վորպեսզի նա Վերեյսկուն վորոշ չափով համարեր իրեն հավասար։

Իշխանի այցելությունից յերկու որ հետո Կիրիլա Պետրովիչը դստեր հետ հյուր գնաց նրա մոտ։ Մոտենալով Արքատովիչին, նա չեր կարող չլմայլել գյուղացիների մաքուր խըր-ձիթներով և կալվածատիրոջ քարաշեն տնով, վորն անգլիական դղյակներ¹⁾ վոճով էր կառուցված։ Տան առաջ փռված էր կա-նաչախիտ մարգագետինը, ուր արածում էին շվեյցարական հովիբը, զրնգացներով իրենց գանգակները։ Տունը բոլոր կողմե-րից շրջապատված էր ընդարձակ պարկով։ Տան առաջ Վերեյսկին դիմավորեց հյուրերին և ձեռքը մեկնեց մատաղ գեղեցկուհուն։ Նրանք մտան փառահեղ մի դահլիճ, վորտեղ յերեք հոգու հա-մար սեղան էր պատրաստված։ Իշխանը հյուրերին լուսամուտից հույց տվեց սքանչելի մի տեսարան։ Տան մոտից հոսում էր Վոլգան։ Գետի վրա ընթանում էին առագաստավոր բեռնանա-վերն ու ձկնորսական նավակները, վորոնք այնքան արտահայտ-չորեն կոչվում էին փոքրիկ հոգեսպաններ։ Գետի մյուս կող-մում փռված էին բլուրներն ու դաշտերը, մի քանի գյուղեր աշխուժացնում էին շրջակայքը։ Հետո նրանք դիտեցին պատ-կերասրահը և այնտեղ գտնվող պատկերները, վոր իշխանը գնել էր ուրիշ յերկրներում։ Իշխանը Մարիա Կիրիլովնային բացատը-րում էր պատկերների բովանդակությունը, նկարիչների պատ-մությունը, մատնանշում էր պատկերների արժանիքներն ու թերությունները։ Իշխանը պատկերների մասին խոսում էր վոչ թե գիտակ պեղանտի²⁾ պայմանական լեզվով, այլ զգացումով ու յերևակայությամբ։ Մարիա Կիրիլովնան բավականությամբ լսում էր նրան։ Հետո սեղան նստեցին։ Տրոյեկուերովը խիստ հավանեց իր Ամֆիտրիոնի³⁾ դիմիներն ու նրա խոհարարի ար-

1) Դոյակ—միջնադարյան ֆեոդալի տուն, վոր շրջապատված էր լինում ամբուլթյուններով—պարիսպով, փոսերով և այլն։

2) Պեդակն—մանր բաների գիտակ մարդ, վորն անընդունակ է յայն ընդհանրացումներ անել, առանձնակի մանրամասնություններ մեջ չի տեսնում հիմնականը, ընդհանուրը։

3) Ամֆիտրիոն—ավանդության համաձայն, հունական արքա, վորին խա-քել էր Յուպիտերն ու նրա կերպարանքն ընդունել։ Փրանսիական դրամատուրգ Մոլիերը (1622—1673) գրել է մի կոսեդիա, վորտեղ կա այսպիսի մի Փրազ.—«Իսկական ամֆիտրիոն է, ամֆիտրիոն, վորի մոտ ճաշում են»։ Այստեղից է, վոր գործածվեց այդ բառը տանտիրոջ սերալիությունն ու հյուրասիրու-թյունը պատկերացնելու համար։

1) Ռիկայդո- Ռիկայդիճի—ավազակապետ, Պ. Ա. Վուլպիուսի (1762—1827 թ. թ.) հուշակավոր վեպի հերոսը։ Այդ վեպը թարգմանվել է գրեթե բո-լոր լեզուներով և տարածվել է Ռուսաստանում, XIX դարում։

2) Ասեդ—այստեղ նշանակում է շքանշան։

վեստը, իսկ Մարիա Կիրիլովնան բոլորովին չէր շփոթվում և ազատ խոսում էր այն մարդու հետ, վորին ընդամենը յերկրորդ անգամն էր տեսել:

Ճաշից հետո տանտերը հյուրերին առաջարկեց գնալ այգի: Նրանք սուրճ խմեցին կղզիներով կտրտված ընդարձակ լճի ափին գտնվող տաղավարում: Հանկարծ հնչեց փողային յերաժը՝ տուրթյունը, և վեց թրականի մի մակուշկ մոտեցավ տաղավարին: Նրանք մակուշկով շրջեցին լճի վրա, կղզիների մոտ, այցելեցին սրանցից մի քանիսը: Մի կղզում գտան մարմարե անդրի, մյուսում խուլ անձավ, յերրորդում—խորհրդավոր մակադրությամբ մի արձան, վորը Մարիա Կիրիլովնայի մեջ առաջ բերեց աղջկական վառ հետաքրքրութուն, իսկ այդ լիովին չբավարարվեց իշխանի քաղաքավարական, բայց կիսատ բացատրություններով: Ժամանակն անցավ աննկատելի: Որն սկսեց մըթնել: Իշխանը պատրվակ բերեց, թե խոնավություն է, ցող է իջել և շտապեց տուն: Նրանց սպասում էր ինքնայնոր: Իշխանը Մարիա Կիրիլովնային խնդրեց թեյ հրամցնել իր՝ ծեր աճուրդու տանը: Մաշան թեյ էր լցնում, լսելով սիրալիր շաղակրատի անսպառ պատմությունները: Հանկարծ կրակոց լսվեց և յերկինքը լուսավորվեց ռակետով: Իշխանը Մարիա Կիրիլովնային մատուցեց շալը և նրան ու Տրոյեկոբովին կանչեց պատշգամբ: Տան առաջ, խավարում բռնկվում էին բաղմագույն կրակները, գալարվում, հասկերի, արմավների, շատրվանների ձևով թռչում դեպի վեր, թափվում անձրևի ու աստղերի պես, հանգչում ու նորից բռնկվում: Մարիա Կիրիլովնան հրճվում էր յերեխայի պես: Նրա հրճվանքն ուրախացնում էր իշխան Վերեյսկուն, իսկ Տրոյեկոբովը խիստ գոհ էր իշխանից, վորովհետև նրա *tous les frais*¹⁾ ընդունում էր վորպես իրեն հարգելու և իր ցանկություններին ընդառաջելու նշան:

Ընթրիքն իր արժանիքով ճաշից պակաս չէր: Հյուրերն անցան իրենց հատկացված սենյակները և մյուս օրը բաժանվեցին սիրալիր տանտիրոջից, խոստանալով կարճ ժամանակից հետո նորից հանդիպել:

¹⁾ Tous les frais—բոլոր ծախքերը, այստեղ—առանձին ուշադրություն, սիրալիրություն:

Մարիա Կիրիլովնան նստած էր իր սենյակում, բաց լուսամուտի առաջ և ասեղնագործում էր: Նա չէր շփոթում մետաքսի գույները, ինչպես արել էր Կոնրադի¹⁾ սիրուհին, վորը սիրուց առաջացած ցրվածության ժամանակ վորդը հյուսել էր կանաչ մետաքսից: Նրա ասեղի տակ հենքն անսխալ կրկնում էր բնանկարի նախշերը, չնայելով, վոր նրա մտքերը չէին կենտրոնանում աշխատանքի վրա,—թուշում ելին հեռու:

Հանկարծ լուսամուտից կամացուկ ներս մեկնվեց մի ձեռք, ինչ-վոր մեկը նամակ դրեց ասեղնագործական շրջանակի վրա և նախքան Մարիա Կիրիլովնայի ուշքի գալը չբացավ: Հենց այդ ժամանակ ներս մտավ սպասավորն ու նրան կանչեց Կիրիլա Պետրովիչի մոտ: Մաշան ղողգողալով նամակը թաղցրեց վարձակալի տակ և շտապեց հոր առանձնասենյակը:

Կիրիլա Պետրովիչը մենակ չէր: Նրա մոտ նստած էր իշխան Վերեյսկին: Տեսնելով Մարիա Կիրիլովնային, նա վեր կացավ և իր համար անսովոր շփոթվածությամբ լուռ գլուխ տվեց նրան:

— Յեկ այստեղ, Մաշա,—ասաց Կիրիլա Պետրովիչը,—քեզ նորություն եմ ասելու, վորը հուսով եմ, կուրախացնի քեզ: Ահա քո փեսացուն: Յեկել է հարսնախոսության:

Մաշան քարացավ, նրա դեմքը ծածկվեց մահու գունատությամբ: Նա լուռ էր: Իշխանը մոտեցավ նրան, վերցրեց ձեռքը և հուզված ձևով, հարցրեց, համաձայն է արդյոք յերջանկացնել իրեն: Մաշան լուռ էր:

— Համաձայն ե, իհարկե, համաձայն ե,—ասաց Կիրիլա Պետրովիչը,—բայց գիտե՞ս, իշխան, աղջկա համար դժվար է այդ խոսքն արտասանել: Դեհ, դավալներ, համբուրվեցեք ու յերջանիկ յեղեք:

Մաշան կանգնած էր անշարժ, ծեր իշխանը համբուրեց նրա ձեռքը: Հանկարծ Մաշայի գունատ դեմքի վրա արցունքներ հոսեցին: Իշխանը մի փոքր խոժոռվեց:

— Գնա, գնա, գնա,—ասաց Կիրիլա Պետրովիչը,—սրբիք

¹⁾ Կոնրադ—լեհ բանաստեղծ Ադամ Միցկևիչի (1798—1885 թ.թ.) «Կոնրադ Վալենրոդ» պոեմի հերոսը: Այստեղ ինկատի յեն առնված պոեմի V յերգի հետևյալ տողերը.

Վարդը նա հյուսեց կանաչ յերանգով,
Իսկ տերևները—կարմիր մետաքսից...

արցունքներդ և ուրախ վերադարձիր մեզ մոտ:—Նշանդ եք ժամանակ նրանք բոլորը լալիս են,—շարունակեց նա, գիմելով Վերեյսկուն, —այդ արդեն նրանց սովորությունն է... Հիմա, իշխան, խոսենք գործի, այսինքն ոժիտի մասին:

Մարիա Կիրիլովնան ազահուծյամբ ոգտվեց հեռանալու թուլտվությունից: Նա վազեց իր սենյակը, դուռը փակեց և ազատություն տվեց իր արցունքներին, իրեն յերեւակայելով ձեր իշխանի կին: Իշխանը հանկարծ նրան թվաց զզվելի ու ատելի: Ամուսնությունը սարսափեցրեց նրան վորպես կառափնարան¹⁾, վորպես գերեզման: «Վհչ, վհչ,—կրկնում էր նա անհույս,— ավելի լավ է մեռնել, ավելի լավ է վաճառվել, ավելի լավ է Դուբրովսկու հետ ամուսնանալ»: Այստեղ նա հիշեց նամակը և ազահաբար վերցրեց կարգալու, զգալով, վոր այն Դուբրովսկուց էր: Իսկապես նրա նամակն էր, ուր կային մրայն հետե-յալ բառերը.—

«Յերեկոյան ժամը 10-ին, նախկին տեղում»:

Կ Լ Ո Ւ Խ XV

Շողում էր լուսինը: Խաղաղ էր հուլիսյան գիշերը: Յերեմին հոգն էր սուրում և թեթև շրջունն անցնում էր ամբողջ ազով: Վորպես թեթև սովեր, յերիտասարդ գեղեցկուհին մոտե-նում էր հանդիպումի վայրին: Դեռ վոչ վոք չէր յերևում: Հան-կարծ տաղավարի լեռանից դուրս յեկավ Դուբրովսկին ու կանգ-նեց նրա առաջ:

— Յես ամեն ինչ գիտեմ,—ասաց նա մեղմ ու տխուր ձայնով,—հիշեցեք ձեր խոստումը:

— Դուք ինձ առաջարկում եք ձեր հովանավորությունը,—պատասխանեց Մաշան,—բայց չբարկանաք, յես վախենում եմ դրանից: Դուք լինչպես կարող եք ինձ ոգնել:

— Յես կարող եյի ձեզ ազատել ատելի մարդուց:

— Իսեր աստծո, ձեռք չտաք նրան, չհամարձակվեք նրան ձեռք տալ, յեթե սիրում եք ինձ: Յես չեմ ուզում վորևե սար-սափի պատճառ դառնալ:

— Յես նրան չեմ փնասի, ձեր կամքը սրբադան է ինձ

1) Կառափնարան—փայտե կոճղ, վորի վրա կարում էյին դատապարա-վածի գլուխը:

համար: Նա ձեզ պարտական ե իր կյանքով: Յերեք չարագոր-ծություն չի կատարվի հանուն ձեզ: Դուք պետք ե մաքուր մնաք նույնիսկ իմ յեղեռնագործություններում, բայց ինչպե՞ս ձեզ կաղատեմ ձեր դաժան հորից:

— Դեռ հույս կա: Յես գուցե նրա վրա ազդեմ իմ ար-ցունքներով և վհատությամբ: Նա կամակոր ե, բայց սիրում ե ինձ:

— Իդուր տեղը մի հուսաք: Այդ արցունքները նա կհա-մարի սովորական յերկյուղ ու զզվանք, վորոնք ընդհանուր են բոլոր ջահել աղջիկներին, յերբ նրանք ամուսնանում են վոչ թե սիրո, այլ շահագիտական հողի վրա: Իսկ լինչ կլինի, յեթե նա ձեզանից անկախ տնորինի ձեր բաղդը, յեթե ձեզ բռնությունա-պսակեն, վորպեսզի ձեր բախտի տերն ընդմիշտ լինի ձեր ամու-սինը...

— Այդ դեպքում...այդ դեպքում ինչ արած, յեկեք ինձ տանելու, յես կլինեմ ձեր կինը:

Դուբրովսկին դողում էր: Նրա գունատ դեմքը կարմրեց և նույն րոպեյին դարձավ առաջվանից ավելի գունատ: Նա յեր-կար լուռն էր գլուխը քաշ արած:

— Հավաքեցեք ձեր բոլոր ուժերը, աղերսեք ձեր հորը, ընկեք նրա վրտները: Պատկերացրեք գալիք ամբողջ սարսափը, ձեր յերիտասարդությունը, վոր պետք ե թառամի տկար ու պազշոտ ծերուկի մոտ: Վճռեցեք սպառնական բնույթ տալ ձեր խնդրին. ասացեք, վոր յեթե նա անդրդվելի մնա, ապա ... ապա դուք պաշտպանություն սոսկալի միջոց կգտնեք...ասացեք, վոր հարստությունը ձեզ վոչ մի րոպե յերջանիկ չի դարձնի: Հարբս-տությունը միայն աղքատին ե սփոփում, այն ել մի ակնթարթ, վորպես արտասովոր բան: Համառորեն խնդրեցեք ձեր հորը, մի վախենաք վոչ նրա բարկությունից, վոչ ել սպառնալիքներից: Քանի դեռ կլինի հույսի գեթ մի նշույլ, իսեր աստծո, համառո-րեն խնդրեցեք նրան: Իսկ յեթե ուրիշ միջոց չի լինի...

Այստեղ Դուբրովսկին ձեռքերով ծածկեց դեմքը, նա կար-ծես շնչասպառ էր լինում: Մաշան լալիս էր...

— Խեղճ, խեղճ իմ բախտ,—ասաց նա դառնագին հառա-չով —կյանքս կտայի ձեզ համար: Տեսնել ձեզ հեռվից, շոշափել ձեր ձեռքը,—այդ բերկրանք ե յեղել ինձ համար: Ըն յերբ հնարավոր ե դառնում սեղմել ձեզ հրաբորբոք սրտիս և ասել՝ հրեշտակս, մեռնեք կամ լինեք միասին,—այդ ժամանակ յես

պետք է զգուշանամ յերանությունից, յես պետք է վնդռութեամբ վանսմ այդ յերանությունը, յես պետք է չհամարձակվեմ փռվել ձեր վտանների տակ, շնորհակալ լինեմ յերկրնքից, անմեկին, չվաստակված՝ պարգևի համար: Ո՛ր, վորքան յես պիտի ատեմ նրան... սակայն զգուշ եմ—հիմա ատելությունը տեղ չունի իմ սրտում:

Նա մեղմ գրկեց որիորդի նրբակերտ իրանն ու հպեց իր սրտին: Որիորդը վստահությամբ թեքեց գլուխը յերիտասարդ ավազակի ուսին: Յերկուսն ել լուռ ելին:

Ժամանակը թռչում էր:

— Պետք է գնալ,—ասաց, վերջապես, Մաշան: Դուրրովսկին կարծես արթնացավ յերազից, Նա վերցրեց Մաշայի ձեռքն ու նրա մատը մատանի դրեց:

— Յեթե կորոշեք իմ ոգնությանը դիմել,—ասաց նա,—մատանին բերեք այստեղ, դրեք այս կաղնու փշակի մեջ,—յես կգիտենամ, թե ինչ պիտի անեմ:

Դուրրովսկին համբուրեց նրա ձեռքը և չքացավ ծառերի մեջ:

ԳԼՈՒԽ XVI

Իշխան Վերեյսկու առաջարկությունը գաղտնիք չէր հարեւանների համար: Կիրիլա Պետրովիչը շնորհավորանքներ եր ընդունում: Պատրաստվում էր հարսանիքը: Վճռական բացատրությունը Մաշան հետաձգում էր որեցոր: Նա սառը և հարկադրական վերաբերմունք էր ցույց տալիս դեպի ծեր փեսացուն: Իշխանն այդ մասին չէր հոգում: Նա սեր չէր սպասում, գտնելով, վոր Մաշայի լուին համաձայնությունն ել բավական է իր համար:

Սակայն ժամանակն անցնում էր: Վերջապես, Մաշան վորոշեց գործի անցնել և մի նամակ գրեց իշխան Վերեյսկուն: Նա ձգտում էր մեծահոգության զգացմունք առաջացնել իշխանի սրտում, անկեղծորեն խոստովանում էր, վոր թեկուզ ամենաչնչին չափով չի սիրում նրան, աղերսում էր հրաժարվել իրենից և նույնիսկ պաշտպանել հոր իշխանությունից: Մաշան այս նամակը կամացուկ հանձնեց Վերեյսկուն, վերջինս առանձնացավ ու կարդաց, բայց իր հարսնացուի անկեղծությունը վոչ մի ազդեցություն չթողեց նրա վրա: Ընդհակառակը, նա գտավ,

վոր անհրաժեշտ է արագացնել հարսանիքը և այդ պատճառով հարկավոր համարեց նամակը ցույց տալ իր ասլագա աներոջը:

Կիրիլա Պետրովիչը կատաղեց: Իշխանը հազիվ կարողացավ համոզել նրան, վոր Մաշային ցույց չտա, թե իրազեկ է նամակին: Կիրիլա Պետրովիչը համաձայնեց այդ մասին չխոսել Մաշայի հետ, բայց վորոշեց ժամանակ չկորցնել և հարսանիքը նշանակեց հետևյալ որը: Իշխանը գտավ, վոր այդ միանգամայն լսելացի քաջ է, գնաց հարսնացուի մոտ, ասաց նրան, թե նամակը խիստ տխրեցրել է իրեն, բայց ինքը հույս ունի հետագայում արժանանալ նրա սիրուն, թե նրանից զրկվելու միտքը չափազանց ծանր եր իր համար և ինքն անզոր է համաձայնել իր մահվան դատավճռին: Այնուհետև նա հարգանքով համբուրեց Մաշայի ձեռքն ու մեկնեց, վոչ մի բառ չասելով Կիրիլա Պետրովիչի վորոշման մասին:

Դեռ նոր էր մեկնել նա, յերբ ներս մտավ Մաշայի հայրը և ուղղակի հրամայեց նրան պատրաստ լինել հետևյալ որվա համար: Մարիա Կիրիլովնան, վոր արդեն հուզված էր իշխան Վերեյսկու բացատրությունից, արտասովեց ու ընկավ հոր վտանները:

— Հայրիկ,—աղաղակում էր նա ցավագին ձայնով,—հայրիկ, մի սպանեք ինձ, յես չեմ սիրում իշխանին, չեմ ուզում նրա կենը լինել...

— Այս լինչ է նշանակում,—ահեղամոռնչ ասաց Կիրիլա Պետրովիչը,—մինչև այժմ դու լուռ եյիր, և համաձայն եյիր, իսկ հիմա, յերբ ամեն ինչ վորոշված է, դու ոյլն ես խաղում ու հրաժարվում: Հիմարություններ դուրս մի տա: Դրանով ինձնից վոչինչ չես շահի:

— Մի սպանեք ինձ,—կրկնում էր հեզ աղջիկը,—ինչո՞ւ յեք ինձ ձեզանից հեռացնում և տալիս չսիրած մարդուն, մի՞թե յես ձեզ ձանձրացրել եմ, յես ուզում եմ առաջվա պես մնալ ձեզ մոտ: Հայրիկ, առանց ինձ դուք տխուր կլինեք, ավելի կտխրեք, յերբ մտածեք, վոր յես անբախտ եմ, հայրիկ: Մի ստիպեք ինձ, յես ամուսնանալ չեմ ուզում:

Կիրիլա Պետրովիչը գթաց, բայց թազցրեց իր հուզմունքը և վանելով նրան, խստասրտությամբ ասաց.

— Այդ բոլորը դատարկ բան է, լսում ես, յես քեզանից լավ գիտեմ, թե ինչ է հարկավոր քո յերջանկության համար: Արցունքները քեզ չեն ոգնի, վաղը չե մյուս որը կլինի քո հարսանիքը:

— Վաղը չե մյուս ո՞րը,—ձչաց Մաշան:—Ապտված իմ, վոչ,

վաչ, անկարելի յե, այդ չի լինի: Հալըրիկ, լսեք, յեթե դուք արդեն վորոշել եք ինձ կործանել, ապա յես կգտնեմ մի պաշտպան, վորը ձեր մտքովն անգամ չի անցնում, դուք կտեսնեք, դուք կսարսափեք, թե ուր հասցրիք ինձ:

— Ի՞նչ, ի՞նչ, հոխորտաց Տրոյեկուրովը,—սպառնալով, ինձ սպառնալով, հանդուգն աղջիկ: Գիտե՞ս թե ինչ կանեմ քեզ, այնպիսի մի բան, վոր դու չես ել յերևակայում: Դու համարձակվում ես ինձ վախեցնել պաշտպանով: Տեսնե՞ք, թե ով կլինի այդ պաշտպանը:

— Վլադիմիր Դուբրովսկին,—պատասխանեց Մաշան վհատվելով:

Կիրիլա Պետրովիչը կարծեց, թե նա խելագարվել է, և ապշած նայում եր նրան:

— Լաճի,—ասաց նա կարճատև լռությունից հետո,—ով վոր է, թող դա քեզ պաշտպանելու, իսկ առայժմ նստիր այս սենյակում, այստեղից դուրս չես գա մինչև հարսանիքը:

Այս խոսքերից հետո Կիրիլա Պետրովիչը դուրս յեկավ և դուռը փակեց:

Խեղճ աղջիկը չերկար լալիս եր, չերեակայելով այն բոլորն ինչ վոր սպասում եր նրան, սակայն հոր հետ ունեցած ազմկալի բացատրությունը թեթևացրեց նրա հոգին, և նա ավելի հանգիստ կարող եր մտածել իր վիճակի և անելիքի մասին: Նրա համար ամենագլխավորն եր ազատվել ատելի ամուսնությունից: Ավագակի կնոջ վիճակը նրան դրախտ եր թվում այն բոլորի հանդեպ, ինչ վոր սպասում եր նրան: Մաշան դիտեց Դուբրովսկու սկու թողած մատանին: Նա սաստիկ ցանկություն զգաց հանդիպել Դուբրովսկուն և վճռական բռնկից առաջ յերկար խորհրդակցեց նրա հետ: Նախազգացումն ասում եր նրան, վոր յերեկոյան կգտնի Դուբրովսկուն այգում, տաղավարի մոտ: Նա վորոշեց՝ հենց վոր ուր մթնի, գնալ տեսնել նրան: Մթնեց, Մաշան պատրաստվեց գնալու, բայց դուռը փակված եր բանալիով: Աղախինը դրսից պատասխանեց, թե Կիրիլա Պետրովիչը հրամայել է դուրս չթողնել նրան: Մաշան բանտարկված եր, և խորապես վիրավորված՝ նա նստեց լուսամուտի մոտ և մինչև ուշ գիշեր մնաց առանց հանվելու, քարացած հայացքով նայելով մութ յերկնքին: Լուսադեմին նա թմրեց, սակայն նրա անհանգիստ քունը լի յեր տխուր յերազներով և ծագող արևի շողեր: արթնացրին նրան:

Մաշան արթնացավ և նրա մտքում իսկույն պատկերացավ իր դրության վիճակը սարսափելի: Նա զանգահարեց, ներս մտավ աղախինն ու նրա հարցերին պատասխանեց, թե Կիրիլա Պետրովիչը յերեկոյան մեկնել է Արքատովո և ուշ վերադարձել, թե նա խիստ հրաման է տվել Մաշային բաց չթողնել իր սենյակից ու հետևել, վոր վոչ վոք նրա հետ չխոսի: Աղախինն ասաց, թե հարսանիքի առանձին պատրաստություններ չեն նկատվում, բացի այն, վոր տերտերին հրամայված է վոչ մի գեպքում չհեռանալ գյուղից: Այս բոլորը հաղորդելուց հետո աղախինը թողեց Մարիա Կիրիլովնային ու նորից դուռը փակվեց:

Նրա խոսքերը զարացրին յերիտասարդ կալանավորուհուն: Մաշայի մտքերը գործում էին տենդորեն, արյունը մրրկվում եր: Նա վորոշեց այդ բոլորը հաղորդել Դուբրովսկուն և սկսեց մտածել, թե ինչպես մատանին ուղարկի ու պահել տա նվիրական կաղնու փչակում: Այդ ժամանակ լուսամուտը զնգաց ինչ վոր փոքրիկ քարի հարվածից: Մարիա Կիրիլովնան նայեց դեպի բակը և տեսավ փոքրիկ Մաշային, վորը նրան գաղտնի նշաններ եր անում: Մաշան դիտեց, վոր Մաշան սիրում է իրեն և ուրախացավ, չեր տեսավ նրան: Նա բացեց լուսամուտը:

— Բարե, Մաշա,—ասաց նա, ինչո՞ւ յես ինձ կանչում:

— Յես յիկա, քույրիկ, վոր իմանամ, կարելի յե ձեզ վորեք բան է հարկավոր: Հայրիկը բարկացած է և հրամայել է, վոր տանը վոչ վոք ձեզ չլսի, բայց ինչ վոր ուզում եք, հրամայեցեք ինձ, յես կկատարեմ:

— Շնորհակալ եմ, իմ պատիկ Սաշենկա: Լսիր, դու գիտե՞ս տաղավարի մոտ գտնվող մեծ կաղնին, վորը փչակ ունի:

— Գիտեմ, քույրիկ ջան:

— Ուրեմն յեթե ինձ սիրում ես, հենց հիմա վազիր այնտեղ, այս մատանին դիր փչակի մեջ, բայց զգուշ յեղիր, վոր քեզ վոչ վոք չտեսնի:

Այս խոսքերն ասելով, Մաշան դուրս նետեց մատանին և փակեց լուսամուտը:

Տղան վերցրեց մատանին, ինչքան ուժ ուներ, սկսեց վազել և 3 րոպեից հետո արդեն նվիրական ծառի մոտ եր: Նա այստեղ կանգ առավ շնչասպառ, նայեց շուրջը և մատանին դրեց փչակը: Հաջորդությամբ վերջացնելով այս գործը, նա ուզում եր իսկույն հայտնել Մարիա Կիրիլովնային, բայց հանկարծ շի-

կամազ, շղիկ ու ցնցոտիապատ մի տղա յերևաց տաղավարի կողմից, վազեց դեպի կաղնին և ձեռքը խոթեց փշակը։ Սաշան սկսեց արագ հարձակվեց նրա վրա և բռնեց յերկու ձեռներով։

— Ի՞նչ ես անում ախտեղ,— ցասկոտ հարցրեց նա։

— Քո ի՞նչ գործն ես,— պատասխանեց տղան, աշխատելով ազատվել նրանից։

— Թող այդ մատանին, շիկամազ նապաստակ,— գոռաց Սաշան,— թե չես յես քեզ ախպես ցույց կտամ վոր...

Պատասխանի փոխարեն տղան բռնեցքով խփեց Սաշայի դեմքին, բայց Սաշան բաց չթողեց նրան և սկսեց վողջ ձայնովը մեկ գոռալ։

— Գողերը, գողերը, ախտեղ յեկեք...

Տղան ուժ եր գործ դնում նրանից ազատվելու։ Հստ յերեւելով ին նա յերկու տարով մեծ եր Սաշայից և նրանից շատ ավելի ուժեղ, բայց Սաշան գերազանցում եր իր ճարակությամբ։ Նրանք կովեցին մի քանի բույս, վերջապես, շիկամազ տղան հաղթեց։ Նա Սաշային գետին գլորեց և բռնեց նրա կոկորդից։ Սակայն այդ բույսին մի ուժեղ ձեռք քաշեց նրա շիկագույն ու կոշտ մազերից, և այգեպան Ստեփանը նրան կես արշին բարձրացրեց գետնից։

— Ա՛խ դու սատանայի լակոտ, եղ վճնց ես համարձակվում ծեծել փոքրիկ աղալին։

Սաշան վեր թռավ և ուշքի յեկավ։

— Դու իմ գլխից բռնեցիր,— ասաց նա,— թե չես իսկի ել ինձ վայր չեյիր գցել։ Այս բույսն իս տուր մատանին ու կորի գնա։

— Վճնց չեմ,— պատասխանեց շիկամազն ու հանկարծ շուռ գալով, իր մազերն ազատեց Ստեփանի ձեռքից։

Այստեղ նա փորձեց փախչել, բայց Սաշան հասավ նրան, խփեց մեջքին և տղան շրջմի, վայր ընկավ։ Այգեպանը նորից բռնեց նրան ու կապեց գոտիով։

— Տո՛ւր մատանին,— գոռաց Սաշան։

— Սպասիր, աղա,— ասաց Ստեփանը,— մենք սրան կտանենք գործակատարի մոտ, վոր անի իր դատաստանը։

Այգեպանն իր գերին տարավ գործակատարի մոտ, իսկ Սաշան ուղեկցում եր նրան, անհանգստությամբ դիտելով իր պատասխանված ու կանաչ խոտից կեղտոտված անդրալարտիկը։

Հանկարծ յերեքն ել կանգ առան Կիրիլա Պետրովիչի առաջ, վորը գնում եր իր ախոռը դիտելու։

— Այս ի՞նչ ես,— հարցրեց նա Ստեփանին։

Ստեփանը կարճ պատմեց ամբողջ դեպքը։

Կիրիլա Պետրովիչն ուշադրությամբ լսեց նրան։

— Դու, չարաճճի,— ասաց նա, դիմելով Սաշային,— ինչու ընկար դրա հետ։

— Հայրիկ ջան, նա փշակից գողացավ մատանին, հրամայեցեք, վոր յետ տա։

— Ի՞նչ մատանի, ի՞նչ փշակ։

— Ինձ Մարիա Կիրիլովնան... եղ մատանին...

Սաշան շփոթվեց, խոռքերի կապը կորցրեց։ Կիրիլա Պետրովիչը կիտեց նոթերը և գլուխն որոնելով ասաց։

— Այստեղ Մարիա Կիրիլովնան ել ե մասնակից։ Խոստովանիր ամեն ինչ, թե չես ախպես կթակեմ, վոր ել ուշքի չես գա։

— Աստված վկա, հայրիկ ջան, յես, հայրիկ ջան... Մարիա Կիրիլովնան ինձ վոչինչ չի հրամայել, հայրիկ։

— Ստեփան, գնա կեչիններից մի լավ ճիպոտ կտրի։

— Սպասեք, հայրիկ ջան, յես ձեզ ամեն ինչ կպատմեմ։ Այսոր յես խաղում եյի բակում, իսկ քույրիկը, Մարիա Կիրիլովնան բացեց լուսամուտը։ Յես մոտ վազեցի։ Քույրիկն անզգուշությամբ վալը դցեց մատանին, իսկ յես տարա ու պահեցի փշակում և... և այդ շիկամազ տղան ուղում եր գողանալ մատանին։

— Անզգուշությամբ վայր պցեց, իսկ դու ուղում եյիր պահել... Ստեփան, ճիպոտը բեր։

— Հայրիկ ջան, սպասեցեք, յես ամեն ինչ կպատմեմ։ Քույրիկը, Մարիա Կիրիլովնան հրամայեց վաղել ու մատանին դնել փշակում։ Յես վազեցի ու պահեցի մատանին, իսկ այս վատ տղան...

Կիրիլա Պետրովիչը դիմեց վատ տղային և ցասկոտ հարցրեց։

— Ո՞ւմ տղան ես։

— Յես պարոնայք Դուբրովսկիների տան տղաններից եմ,— պատասխանեց շիկամազ տղան։

Կիրիլա Պետրովիչի դեմքը մռայլվեց։

— Յերևում ե, վոր դու ինձ աղա չես ճանաչում, լավ։ Իսկ ի՞նչ ելիր անում իմ այգում։

— Մորի եյի գողանում,— մեծ անտարբերությամբ պատասխանեց տղան։

— Հը՛մ, աղան ու սպասավորը մի սանդղի կտավ են, բայց միթե իմ կաղնիներն վրա մորի յե բռնանում:

Տղան վոչինչ չպատասխանեց:

— Հայրիկ, հրամայեցեք, վոր տա մատանին,—ասաց Սա-
շան:

— Լո՛ւր, Ալեքսանդր,—պատասխանեց Կիրիլա Պետրովի-
չը,—մի մոռանա, վոր յես դեռ քեզ հետ հաշիվ պիտի տեսնեմ:
Գնա քո սենյակը: Իսկ դու, շլդիկ, դու խելոք տղա յես չերևում:
Տնւր մատանին ու դնա տուն:

Տղան բացեց բռնն ու ցույց տվեց, վոր իր ձեռքում վո-
չինչ չկա:

— Յեթե դու ինձ ամեն ինչ խոստովանես, ապա յես քեզ
չեմ թակի և դեռ մի շահի ել կտամ, վոր պնդուկ առնես: Հա-
կտակ դեպքում յես քեզ հետ այնպես կվարվեմ, վոր չես ել
սպասում: Դե՛ն:

Տղան վոչ մի բառ չեր պատասխանում և կանգնած եր-
գլխիկոր, ընդունելով կատարյալ հիմարի տեսք:

— Լմ՛վ—ասաց Կիրիլա Պետրովիչը,—բանտարկել սրան
վորեն տեղ և հսկել, վոր չփախչի, թե չե բոլորի կաշին կքերթեմ:

Ստեփանը յերեխային տարավ աղաջնանոցը, դուռը վրան
փակեց և պառավ թռչնապահ Ագաֆիային պահակ կանգնեցրեց:

— Այս բոլորիս քաղաք գնալ գավառական վոստիկանա-
պետի յետևից,—ասաց Կիրիլա Պետրովիչը աչքերով տղային
ճանապարհ դնելով—և վորքան կարելի յե շուտ:

«Այստեղ վոչ մի կասկած չկա: Նա հարաբերություններ ե
պահում անիծված Դուբրովսկու հետ: Բայց միթե իսկապես
նրան ոգնության ե կանչել»,—մտածում եր Կիրիլա Պետրովի-
չը, սենյակում յետ ու առաջ քայլելով և բարկությամբ սուկե-
լով «Վոռոս հաղթանակի»-ն: —Դուցե յես գտել եմ նրա իսկական
հետքերը և նա մեզնից չի պրծնի: Մենք կողտագործենք այս
դեպքը: Հը՛, զանգակի ձայն, փառք աստծո, այդ գավառական
վոստիկանապետն ե: —Հեյ, այստեղ բերել բռնված տղային:

Կառքը մտավ տան բակը: Մեզ արդեն ծանոթ գավառական
վոստիկանապետն ամբողջովին փոշու մեջ կորած՝ մտավ սենյակ:

— Հրաշալի տեղեկություն կա,—ասաց Կիրիլա Պետրովի-
չը,—յես գտա Դուբրովսկուն:

— Փնռք աստծո, ձերդ գերազանցություն,—ասաց վոստի-
կանապետը՝ իրեն ուրախացած ցույց տալով,—վորտեղ ե նա:

— Այսինքն վոչ թե Դուբրովսկուն, այլ նրա հրոսակախմբից
մեկին: Հիմա նրան ալտեղ կբերեն: Նա մեղ կոգնի գտնելու հրո-
սակապետին: Ահա բերին նրան:

Գավառական վոստիկանապետը, վոր ահեղ ավաղակի լեր
սպասում, խիստ զարմացավ, յերբ տեսավ 13 տարեկան ու բա-
վական թուլակազմ յերեխային: Նա տարակուսանքով դարձավ
դեպի Կիրիլա Պետրովիչն ու բացատրության եր սպասում: Կի-
րիլա Պետրովիչը պատմեց առավոտյան դեպքը, չհիշելով, սա-
կայն, Մարիա Կիրիլովնային:

Վոստիկանապետն ուշադրությամբ լսում եր նրան, հաճա-
խակի նայելով փոքրիկի վրա, վոր հիմար ձևանալով՝ կարծես
վոչ մի ուշադրություն չեր դարձնում այն ամենի վրա, ինչ
վոր կատարվում եր շուրջը:

— Ձերդ գերազանցություն, թույլ տվեք ձեզ հետ խոսել
առանձին,—ասաց վերջապես գավառական վոստիկանապետը:

Կիրիլա Պետրովիչը նրան տարավ ուրիշ սենյակ և դուռը
փակեց:

Կես ժամից հետո նրանք մտան դահլիճ, վորտեղ գերին
սպասում եր իր դատավճռին:

— Աղան ուղում եր քեզ նստեցնել քաղաքի բանտը,—
ասաց վոստիկանապետը,—ճիպոտով ծեծել և հետո աքսորել,
բայց յես քեզ պաշտպանեցի և քեզ համար ներումն խնդրեցի:
Արձակել կապերը:

Տղայի կապերն արձակեցին:

— Դե շնորհակալություն հայտնիր աղային,—ասաց վոս-
տիկանապետը:

Տղան մոտեցավ Կիրիլա Պետրովիչին և համբուրեց նրա
ձեռքը:

— Գնա տուն,—ասաց նրան Կիրիլա Պետրովիչը,—սրանից
հետո փչալներին մորի չգողանաս:

Տղան դուրս լեկավ, ուրախ թուով մուտքի սանդղիքից և
առանց շուրջը նայելու դաշտի միջով վաղեց դեպի Կիստենեկա:
Հասնելով մինչև ղզուղ, նա կանգնեց հենց առաջին, կիսով չափ
խարխլված խրճիթի առաջ և ծեծեց լուսամուտը: Լուսամուտը
բացվեց ու յերևաց ինչ-վոր պառավ:

— Տատի, հաց տուր,—ասաց տղան,—յես առավոտից վո-
չինչ չեմ կերել, սոված մեռնում եմ:

— Ա՛խ, այդ դժու յես, Միտյա, ռւր էյիւր կորել, սատանի ճուտ,—հարցրեց պառաւը:

— Հետո կպատմեմ, տատի, իսեւր աստծո, հաց տուր:

— Արի ներս:

— Ժամանակ չունեմ, տատի, դեռ մի տեղ ել պիտի վազեմ: Հնց, տատի ջան, հնց:

— Գործ անողիս մտիկ,—մըթմըթաց պառաւը,— ահա, վերցրու,—և լուսամուտից մի կտոր սև հաց տվեց:

Տղան ազահուծթյամբ սկսեց ուտել և շարունակեց գնալ:

Որը մթնում էր: Միտյան կալերի ու բանջարանոցների միջով գնաց Կիստենեկայի անտառը: Հասնելով յերկու սոճիների, վորոնք կանգնել էյին վորպես անտառի առաջավոր պահակներ, նա կանգ առավ, դիտեց բոլոր կողմերը, սուր ու կցկըտուր սուրեց և ախանջ դրեց: Պատասխանը լեզավ թեթև ու տեւական մի սուրոց, մեկը դուրս յեկավ անտառից ու մոտեցավ նրան:

ԳԼՈՒԽ XVIII

Կիրիլա Պետրովիչը դանիճում քայլում էր յետ ու առաջ և սովորականից ավելի բարձր սուււում իր յերգը: Ամբողջ տունն իրար էր անցել—սպասավորներն ու սպասուհիները դես-դեն էյին վազում, կառապանները պատրաստում էյին կառքերը: Բակում բազմութուն էր հավաքվել: Որիորդի սենյակում, հայելու առաջ, սպասուհիներով շրջապատված մի կին հագցնում էր գունատ ու անշարժ Մարիա Կիրիլովնային, վորի գլուխը քնքշորեն թեքված էր ադամանդների ծանրութունից: Մաշան թեթևակի ցնցվում էր, յերբ կինն անզգուշաբար ծակում էր նրա մարմինը: Մաշան լուռ և անտարբեր նայում էր հայելուն:

— Շճու կվերջանա,— դռնից լսվեց Կիրիլա Պետրովիչի ձայնը:

— Այս բոպելիս,—պատասխանեց կինը,— Մարիա Կիրիլովնա, վեր կացեք, տեսե՛ք՝ լծվ է, թե վոչ:

Մարիա Կիրիլովնան վեր կացավ և վոչինչ չպատասխանեց: Դուռը բաց արին:

— Հարսնացուն պատրաստ է,—ասաց կինը Կիրիլա Պետրովիչին,—հրամայեցեք կառք նստել:

— Աստված շնորհավոր անի,—պատասխանեց Կիրիլա Պետ-

րովիչը, և, սեղանից վերցնելով սրբապատկերը,—մոտեցիր ինձ, Մաշա,—ասաց սրտառուչ ձայնով,—մոտեցիր որհնեմ քեզ...

Խեղճ աղջիկն ընկավ նրա վոտներն ու հեկեկաց:

— Հայրիկ, հայրիկ...ասում եր նա արտասվելով, և խեղդ-վում էր նրա ձայնը:

Կիրիլա Պետրովիչը շտապ որհնեց նրան:

Մաշային վոտքի կանգնեցրին և համարյա ձեռների վրա տարան մինչև կառքը: Նրա հետ նստեցրին հարսնեմայքն ու սպասուհիներից մեկը: Գնացին յեկեղեցի: Այնտեղ նրանց արդեն սպասում էր փեսացուն: Վերջինս դուրս յեկավ հարսնացուին դիմավորելու և ապշեց նրա գունատությունից ու տարորինակ տեսքից: Նրանք միասին մտան ցուրտ, դատարկ յեկեղեցի, վորի դուռը փակվեց: Քահանան դուրս յեկավ բեմից և իսկույն սկսեց ծեսը: Մարիա Կիրիլովնան վոչինչ չէր տեսնում, վոչինչ չէր լսում, մտածում էր միայն մի բանի մասին: Առավոտից նա սպասում էր Դուբրովսկուն, վոչ մի բոպել չկորցնելով հույսը: Բայց յերբ քահանան դիմեց նրան սովորական հարցով, նացնցվեց, ապա քարացավ,—բայդ դեռ դանդաղում եր, դեռ սպասում: Պատասխան չստանալով՝ քահանան արտասանեց ճակատագրական խոսքերը:

Ծեսը վերջացավ: Մաշան զգաց ատելի ամուսնու պաղ համբույրը, լսեց ներկաների ուրախ շնորհավորանքներն ու դեռ չէր կարողանում հավատալ, վոր իր կյանքը շղթայված է առմիշտ, վոր Դուբրովսկին չթռավ իրեն աղատելու: Իշխանը փազաքուշ խոսքերով դիմեց նրան, բայց Մաշան վոչինչ չհասկացավ: Նրանք դուրս յեկան յեկեղեցուց: Դավթում խմբվել էյին Պոկրովսկու գյուղացիները: Մաշան արագությամբ դիտեց նրանց ու դարձյալ անզգացացավ: Նորապսակները կառք նստեցին և մեկնեցին Արքատովո, ուր արդեն գնացել էր Կիրիլա Պետրովիչը՝ նրանց դիմավորելու համար: Իշխանը իր մատաղ կնոջ հետ մենակ մնալով բոլորովին չէր շփոթվում նրա սառը վերաբերմունքից: Նա Մաշային չէր ձանձրացնում հաճոյախոսություններով կամ ծիծաղելի հիացմունքով: Նրա խոսքերը պարզ էյին և պատասխան չէին պահանջում: Նրանք այս էերպ անցան մոտ տասը վերստ: Զիերն արագ թռչում էյին գյուղական անհարթ ճանապարհով և կառքը, վոր անգլիական ռեսսորներ ունեւր, զրեթե չէր ուրորվում: Հանկարծ հետևից աղմուկ լսվեց, կառքը

կանգ առաւ, զինոված մարդկանց ամբողջը շրջապատեց այն և կիսադիմակով մի մարդ բանալով այն կողմի դռնակը, վորտեղ նստած եր մատաղ իշխանուհին, ասաց նրան.

— Դուք ազատ եք, դուրս յեկեք:

— Այս ի՞նչ է նշանակում,— գոռաց իշխանը,— ի՞նչ էս դու...

— Դուք բոլորովին ես,— ասաց իշխանուհին:

Իշխանն առանց ինքն իրեն կորցնելու կողքի գրպանից հանեց ճամբորդական պիստոլն ու կրակեց դիմակավորված ավազակի վրա: Իշխանուհին ճշաց և սարսափով ծածկեց դեմքը: Դուք բոլորովին վերավորվեց ուսից, արյունն սկսեց հոսել: Իշխանն առանց մի բոպե կորցնելու հանեց մի ուրիշ պիստոլ: Սակայն նրան ժամանակ չտվին կրակելու: Դռնակները բացվեցին և մի քանի ուժեղ (ձեռներ) նրան դուրս քաշեցին կառքից, խլեցին նրա զենքը: Յերեվացին փայլուն դանակները:

— Չսպանեք դրան,— գոչեց Դուք բոլորովին,— և նրա մոռլլ ընկերները յետ քաշվեցին:

— Դուք ազատ եք,— շարունակեց Դուք բոլորովին, դիմելով գունաթափ իշխանուհուն:

— Վո՛չ,— պատասխանեց վերջինը,— ուշ է, յես պսակված եմ, յես իշխան Վերեյսկու կինն եմ:

— Ի՞նչ եք ասում,— հուսահատությամբ գոչեց Դուք բոլորովին,— վո՛չ, դուք նրա կինը չեք, ձեր վրա բռնացել են, դուք չեք բեք չեյիք կարող համաձայնել...

— Յես համաձայնեցի, յես չեք գիտեցի,— վճռականորեն առարկեց Մաշան,— իշխանն իմ ամուսինն է, հրամայեցեք ազատել նրան և թողեք ինձ նրա հետ: Յես չեյի խաբում, յես ձեզ սպասում եյի մինչև վերջին բոպեն... սակայն այժմ, ասում եմ ձեզ, այժմ ուշ է: Թողեք մեզ:

Սակայն Դուք բոլորովին նրան արդեն չէր լսում: Վերքի ցավը և հոգու մեծ ցնցումները նրան զրկեցին ուժից: Անիվի մոտ նա վայր ընկավ: Ավազակները շրջապատեցին նրան: Դուք բոլորովին կարողացավ միայն մի քանի խոսք ասել նրանց: Ավազակները նրան նստեցրին ձիուն, յերկուսը ձեռներով բռնեցին, յերրորդը վերցրեց ձիու սանձը և բոլորը գնացին, ճանապարհին թողնելով կառքը, կապված մարդկանց և արձակված ձիերին: Նրանք վոչինչ չկողոպտեցին, վոչ մի կաթիլ արյուն չթափեցին իրենց պետի արջան վրեժն առնելու համար:

Միթին անտառում, նեղ բացատի վրա բարձրանում եր պատնեշից և խրամից բաղկացած հողային մի փոքրիկ ամրություն,— ախտեղ գտնվում եյին մի քանի վրաններ ու գետնատներ:

Դրսում, ընդհանուր կաթսայի մոտ, գլխարաց ճաշում եյին բազմաթիվ մարդիկ: Նրանց հագուստն ու սպառազինությունը ցույց եր տալիս, վոր ավազակներ են: Պատնեշի վրա, փոքրիկ թնդանոթի մոտ ծալապատիկ նստած եր պահակը: Նա կարկատում եր իր հագուստի վորոշ տեղը, վարպետությամբ բանեցնելով ասեղը: Յերևում եր, վոր փորձված դերձակ է: Ամեն բոպե նա դիտում եր բոլոր կողմերը:

Թեև ինչ-վոր մի գավաթ մի քանի անգամ ձեռքից-ձեռք եր անցնում, բայց տարրինակ լուրթուն եր տիրում այս ամբոխի մեջ: Ավազակները ճաշեցին, մեկը մյուսի յետևից վերկացան և աղոթեցին աստծուն, մի քանիսը մտան վրանները, մյուսները ցրվեցին անտառում կամ, ըստ ուսանական սովորության, պառկեցին քնելու:

Պահակն ավաբտեց իր աշխատանքը, թափ տվեց հագուստը, դիտեց կարկատանը, ասեղը խրեց թևը, և նստելով թնդանոթի վրա, վողջ ձայնով մեկ յերգեց հին ու տխուր մի յերգ,—

Ել մի սոսափիր, անտառ իմ դալար,

Ել մի վրդովիր մտքերս մոլար...

Այդ ժամանակ բացվեց վրաններից մեկի դուռը, և շեմքի վրա չերևաց սպիտակ գլխարկով, մաքուր ու սեթևեթ հագուստով մի պառավ:

— Բավական է, Ստյոպկա,— ասաց նա բարկությամբ,— աղան քնած է, իսկ դու ձենդ կատարդ ես գցել: Վոչ խիղճ ունեք, վոչ ել կարեկցում եք...

— Ներողություն, Յեգորովիչա,— պատասխանեց Ստյոպկան,— լավ, ել չեմ յերգի: Թող մեր հայրը քնի և առողջանա:

Պառավը ներս մտավ, իսկ Ստյոպկան սկսեց քայլել պատնեշի վրա:

Նույն վրանում ճամբորդական մահճակալի վրա պառկած եր վիրավոր Դուք բոլորովին: Նրա մոտ, սեղանի վրա գտնվում եյին նրա պիստոլները, իսկ սուրը կախված եր գլխավերևում: Գետնատան հատակն ու պատերը ծածկված եյին շքեղ գորգերով:

Անկյունում գտնվում էյին կանանց արդուզարդի մի արծաթե փոքրիկ սեղան և մի մեծ հայելի: Դուբրովսկու ձեռքում կար ինչ վոր բացված գիրք, բայց նրա աչքերը փակ էյին: Պառավը միջապատի կողքից նայում եր նրան և չգիտեր, քնել ե նա, թե մտածում ե:

Հասնկարծ Դուբրովսկին ցնցվեց: Դրսում իրարանցում եր: Ստուպկան գլուխը ներս բերեց լուսամուտից:

— Հայր Վլադիմիր Անդրեևիչ, — գոչեց նա, — մերոնք նշան են տալիս, մեզ փնտռում են:

Դուբրովսկին վեր թռավ մահճակալից, վերցրեց զինքերը և վրանից դուրս յեկավ: Դրսում աղմուկով խմբվում էյին ավազակները: Նրա յերևալուց հետո քարե լուծթյուն տիրեց:

— Այստեղ են բոլորը, — հարցրեց Դուբրովսկին:

— Բոլորը, բացի պարեկներից, — պատասխանեցին:

— Ամեն մեկն իր տեղը, — գոչեց Դուբրովսկին: Յեվ ավազակներից յուրաքանչյուրը վորոշ տեղ գրավեց:

Այդ ժամանակ մոտ վաղեցին յերեք պարեկներ: Դուբրովսկին գիմավորեց նրանց:

— Ի՞նչ կա, — հարցրեց նա:

— Անտառում գինվորներ կան, — պատասխանեցին նրանք, — մեզ շրջապատում են:

Դուբրովսկին հրամայեց փակել դռները և ինքը գնաց թընդհանր խոսակցելու: Անտառում լսվեցին մի քանի ձայներ, վորոնք հետզհետե ավելի մոտիկից էյին գալիս: Ավազակները լուռ սպասում էյին: Հանկարծ յերեք թե չորս գինվոր յերևացին անտառից և իսկույն յետ գնացին, կրակոցով իմաց տալով իրենց ընկերներին:

— Պատրաստվել կովի, — ասաց Դուբրովսկին: Ավազակների մեջ թեթև շշուկ լսվեց ու դարձյալ ամեն ինչ լռեց:

Այդ ժամանակ լսվեց մոտեցող զորախմբի աղմուկը, զենքերը շողացին ծառերի մեջ, հարցուր հիսունի չափ գինվոր դուրս թափվեցին անտառից և գրոհեցին պատենշը: Դուբրովսկին վառեց պատրուկը: Թնդանոթի կրակոցը հաջող եր, մեկի գլուխը կտրվեց, յերկուսը վիրավորվեցին: Զինվորների մեջ շփոթուծյուն առաջացավ, սակայն սպան առաջ վաղեց, գինվորները հետևեցին նրան և լցվեցին խրամները: Ավազակները նրանց վրա կրակեցին հրացաններից ու պիստոլներից և սկսեցին կացիններով պաշտպանել պատենշը: Կատաղած գինվորները բարձրանում

էյին պատենշի վրա: Նրանք խրամների մեջ թողին քսան վիրավոր: Սկսվեց ձեռնամարտը, գինվորներն արդեն պատենշի վրա էյին: Ավազակները նահանջեցին: Բայց Դուբրովսկին մոտեցավ սպային, պիստոլն ուղղեց նրա կրծքին ու կրակեց: Սպան ընկավ յերեսն ի վայր: Մի քանի գինվոր վերցրին նրան ու շտապ տարան անտառ, մյուսները, կորցնելով իրենց պետին, կանգ առան: Ավազակները սիրտ առան, ոգտվեցին ալդրուպեյից, գինվորներին յետ մղեցին դեպի խրամը: Հարձակվողները փախան, իսկ ավազակներն աղմուկով ընկան նրանց հետևից: Հաղթուծյուն ապահովված եր: Տեսնելով, վոր թշնամին միանգամայն ջարդված ե, Դուբրովսկին դադարեցրեց հարձակումը, մնաց ամբողջում, կրկնապատկեց պահակների թիվն ու հրամայեց վերցնել վիրավորներին, վոչ մի դեպքում չհեռանալ ամբողջյունից:

Վերջին դեպքը կառավարուծյանն ստիպեց լուրջ ուշադրուծյուն դարձնել Դուբրովսկու հանդուգն ավազակուծյուններին վրա: Նրա բնակավայրի մասին տեղեկուծյուններ հավաքվեցին: Ուղարկվեց գինվորների մի վաշտ, վորպեսզի նրան բռնե կենդանի կամ մեռած: Ավազակախմբից մի քանիսին բռնեցին և նրանցից իմացան, վոր Դուբրովսկին այլևս նրանց մեջ չե: Դրանից մի քանի որ առաջ նա հավաքեց իր բոլոր գործակիցներին, հայտարարեց, թե մտադիր ե ընդմիշտ թողնել նրանց և խորհուրդ տվեց նոր կյանք սկսել:

— Դուք հարստացաք իմ ղեկավարուծյամբ, ձեզանից յուրաքանչյուրը հնարավորուծյուն ունի ապահով կերպով գնալ վորևե հեռավոր նահանգ և այնտեղ ազնիվ աշխատանքով ու բարոբուծյան մեջ անցկացնել իր մնացած կյանքը: Բայց դուք բոլորդ սրիկաներ եք և յերևի չեք ցանկանա թողնել ձեր զբաղմունքը:

Այս խոսքերից հետո Դուբրովսկին թողեց նրանց, իր հետ վերցնելով միայն **. Վոչ վոր չգիտեր, թե նա ուր գնաց: Սկզբում կասկածում էյին, վոր բռնված ավազակների այս վկայուծյունը ճիշտ լինի, — բոլորին հայտնի յեր նրանց հավատարմուծյունն իրենց պետին: Կարծում էյին, թե ավազակներն աշխատում են փրկել նրան: Բայց դեպքերը ցույց տվին, վոր ձերբակալվածների վկայուծյունը ճիշտ ե, — դադարեցին ավազակների հավոր այցելուծյունները, հրդեհներն ու կողոպուտները, ապահովեց ճանապարհների ցերթեկուծյունը: Ուրիշ լուրերի համաձայն իմացան, վոր Դուբրովսկին փախել եր արտասահման:



Քարգժ. Համբարձումի Մազմանյան

Պատ. խմբագիր՝ Մամիկոն Հովհաննիսյան

Տեխ. խմբագիր՝ Լեվոն Ոհանյան

Սրբադրվչներ՝ Հ. Դոլաբանյան և Հ. Մանուկյան

Հանձնված է արտադրության 11 նոյեմբերի 1936 թ.

Ստորադրված է տպագրության 19 դեկտեմբերի 1936 թ.

Դրավիտի լիազոր Ա. 1172, հրատ. 3934, պատվեր 1351. տիրաժ 4000

Վետհրատի տպարան, Յերեվան, II Գնունյանցի, № 4

ՀՀ Ազգային գրադարան



NL0311708

13074